

7066

88

12 71

3K172

7-22

16

ՀԱՍՎԱՐԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ
ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ

ՊԵՏԾՐԱՏ 1727 ՅԵՐԵՎԱՆ

23 SEP 2006

Պրոլետարներ բոլոր լեռկրների, միացեք.

3 KND
38-22

14 NOV 2009

ՀԱՄ. Կ. (Բ) Կ.

16-ՐԴ

ԿՈՆԳՐԵՏՆՑԻԱ

ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ

ԶԵԿՈՒՐՈՒՄ ԵՔ

Ա. Ի. ՌԻԿՈՎԻ

Գ. Մ. ԿՐԺԻՔԱՆՈՎԱԿՈՒ

Վ. Վ. ԿՈՒՑԲԻՇԵՎԻ

ՑԵՂՐԱՓԱԼՄԱՆ ԽՈՍՔ




ԽՍՀ

ՊԵՏԱԿԱՆ ՀՅՈՒԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ



17.09.2013

7066



7826 - 88

Ա. Ի. ՌԻԿՈՎԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

Ընկերներ, յես կաշխատեմ իմ զեկուցումով ավելի ժամանակ չխլել, քան ինչ ուղղամենով ե սահմանված, թեպետև այդ անելը դժվար ե, ինկատի ունենալով նյութի անսովոր ընդարձակությունը։ Հնգամյա պլանի հարցով ինձնից զատ յելույթ կունենան ելի յերկու զեկուցող, և այդ հանգամանքը զեկուցողներից յուրաքանչյուրին պահանջ ե դնում՝ ժամանակը տնտեսել, և, ինքնին հասկանալի յե, այն ել չի կարելի պահանջել, վոր մեզանից յուրաքանչյուրն առանձին՝ լրությամբ սպառի վողջ հարցը։
Իմ նյութը հնգամյա պլանի ամենաընդհանուր բնութագրութիւն եւ:

I. ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԻՆ

Սոցիալիստական շինարարության ճանապարհին պատմական հոկայտական նշանակություն ունեցող մի որ և այս որը, յերբ համամիութենական կուսակցական կոնֆերանսը հնարավորություն ունի քննարկելու ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանը, վորը ներկայանում ե իրեկ սոցիալիստական հասարակություն կազմակերպելու աշխատանքների նախագիծ։

Մենք մինչև այժմ ել տնտեսական ու կուտուրական շատ ինտենսիվ ու արգասավոր աշխատանք

հնք տարել, սակայն ընդամենը յերեք-չորս տարի սրբանից առաջ մենք դեռևս չունելինք նույնիսկ «կոնտրել թվեր», այսինքն չունելինք տարեկան տնտեսական պլան, վոր իր հիմնական գծերում կապակցված լիներ: Սրանից միքանի տարի առաջ մենք նույնիսկ մեր պետության տարեկան ամուր բյուջեն չունելինք և պետական ֆինանսները յեռամյակ առ յեռամյակ ելինք պլանավորում: Մենք այժմ հնարավորություն ունենք սոցիալիստական շինարարության պլան քըննարկելու ամբողջ հնդամյակի համար: Ճիշտն ասած՝ հնդամյա պլանի մշակումով միայն մենք իսկապես անցնում ենք պլանավին խորացրած աշխատանքի: Մենք մինչեւ այժմ ունելինք ընդհանուր սահմանումն, վոր բացադրված եր ելեկտրիֆիկացիայի նախագծում և հաստատված խորհուրդների ՎՊՀ համագումարի կողմից. ունելինք տնտեսական աշխատանքի տարեկան ծրագրումներ, յերբեմն արդյունաբերության առանձին ճյուղերի համար միքանի տարվա պլան ելինք կազմում: Բայց այդ ամբողջ աշխատանքը նրանից եր տուժում, վոր մենք չելինք կարողանում մեր աշխատանքը բավարար պարզուցությամբ ըստ ժամանակի կապակցել: Յուրաքանչյուր տարով վորոշվում ե հետեւյալ տարին, իսկ մենք շատ հաճախ հնարավորությունից զուրկ ելինք լինում ինչպես հարկն ե նրա խորերը նայելու: Զարգացման յուրաքանչյուր տարին ըդգալի վերախմբավորումներ եր առաջացնում տնտեսական ու գասակարգային փոխհարաբերությունների մեջ, սակայն մենք չելինք կարողանում ստույգ կշռագատված, տևական սահմանման տեսակետից մոտենալ այդ տեղաշարժումներին, չելինք կարողանում պատշա-

ճապես գնահատել նրանց նշանակությունը և լավագույն կերպով ոգտագործել դրանք նոր հասարակություն կազմակերպելու համար: Հնդամյա պլանի շնորհիվ այդ թերությունը վերացվում է:

Բնորոշելով հնդամյա պլանի նշանակությունը, յես հատկապես ձեր ուշադրությունն եմ դարձնում նըրա այն դերի վրա, վոր նա խաղալու յե մասսաները սոցիալիստական շինարարության նպատակների համար զորահավաքի յենթարկելու տեսակետից: Զե վոր նոր հասարակության կազմակերպումը միաժամանակ բանվոր դասակարգի յեվ գյուղացիության չխվար-միջակ մասսաների կազմակերպումն ե՝ նրանց գիտակցորեն, ակտիվ կերպով, անմիջականորեն մասնակից դարձնելու համար անդասակարգ, սոցիալիստական հասարակության շինարարությանը: Վորքան ավելի լավ կազմակերպված լինեն բանվորա-գյուղացիական ամենալայն մասսաները, այնքան ավելի հաջող կընթանա սոցիալիստական շինարարությունը, այնքան արագ կըշարժվենք մենք ինդուստրիացման, մեր յերկիրը սոցիալիստական յերկիր դարձնելու ուղիով: Հնդամյա պլանը բանվոր դասակարգի և գյուղացիության չքավոր-միջակ մասսաների կազմակերպման տեսակետից այն հսկայական նշանակությունն ունի, վոր կոնկրետ, տեսանելի ցուց ե տալիս, թե բանվոր դասակարգի, չքավորի ու միջակի ջանքերի հետևանքով նրանք գյուղում ինչ են ունենալու հետեւալ տարին կամ 2-3 տարի հետո Հնդամյա պլանը, շնորհիվ իր կոնկրետ, ուրացուցական լինելուն, շնորհիվ յուրաքանչյուր տարվա համար հատկացված աշխատանքի արդյունքների արձանագրված լինելուն, նոր հասարակություն կազ-

մակերպել և համար ժողովրդական ամենալայն մասսաները զորահավաքի յենթարկելու գործիքն եւ:

Յերբ մենք իր ժամանակին քննարկում եինք մեր յերկրի ելեկտրիֆիկացիայի ծրագիրը, Վլադիմիր Իլյիչը պնդում եր, վոր ելեկտրիֆիկացիայի ծրագիրը շարադրված լինի ժողովրդականացրած, լայն մասսաների համար մատչելի ձեռվ, այդ ձեզ համարելով ժողովրդական ամենալայն մասսաների զորահավաքման հզոր լծակ: Նման զորահավաքի ավելի մեծ հնարավորություն տալիս ե հնգամյա պլանը, քան ГОՅԼРО ն, վորը իր բոլոր կատարելապես բացառիկ արժանիքներով հանդերձ այն պակասությունն ուներ, վոր հասարակությունը ելեկտրիֆիկացիայի հիմունքներով սոցիալիստորեն վերակերտելու՝ նրա բացած հեռանկարը ժամանակի, վորոշ ժամկետների ամուր շրջանակի մեջ դրված չեր: Հնգամյա պլանն ամեն մեկին, ով ծանոթացել է նրան, հնարավորություն ե տալիս ուզածդ ժողովրդական հավաքություն բացատրելու և բավականաշափ սառուզ նշելու, թե վորքան հեռուն ե գնում սոցիալիստական շինարարությունը հինգ տարվա ընթացքում, ինչպես ե բարելավվում բանվոր դասակարգի դրւթյունը, ինչպես ե բարվագում գյուղացությանը թիւան ամառավանդ կազմական հաղթական կերթա այդ հինգ տարվա միջոցին կապիտալիստական հարաբերությունների մեացորդների հաղթահարման ու լիկվիդացիայի յենթարկելու համար մղած պարքերը:

Սակայն այդ նվաճումները կարող են ավելի մեծ կամ փոքր լինել, նայած թե ինչքան կաճի աշխատանքի արտադրողականությունը, ինչքան հմտորեն կիա-

ջողի կազմակերպել զիտական-տեխնիկական ուժի ընայած թե կհաջողի լուծել տեխնիկական հսկայական, հեղափոխական մասշտաբի խնդիրները, ինչքան հաջող ենք կազմակերպում գյուղը բերքատվության բարձրացման համար մղած պայքարում և այլն, այլապես ասած՝ նայած թե ինչպես կաճեն աշխատանքի վորական ցուցիչները:

Պլանում այդ բոլոր հարցերը գրված են վոչ իբրև լնդհանուր տեսական կարգի գիրիկտիվներ, այլ թվական կոնկրետ ձեռվ ցուց են տալիս կախումը աշխատավորական ջանքերի, վորակական ցուցիչների և այն բանի, թե ինչ են ունենալու բանվորներն ու գյուղատնտեսության աճման մտքով, իրենց նյութական ու կուտտուրական գրության բարելավման իմաստով: Անհրաժեշտ ե հնգամյա պլանի հիմնական բոլոր տարբերը լայնուեն մացնել յուրաքանչյուր բանվորի, յուրաքանչյուր գյուղացու գիտակցուրյան մեջ, վորպեսզի նըրանցից յուրաքանչյուրը պարզ տեսնի իր ջանքերի լարման և այդ ջանքերի արդյունքների այդ կախումը, այնքան ակներե, ինչ ակներենությամբ գյուղացին ե իրեն պատկերացնում, չերք հաշիվ և անում, թե՛ այսքան կցանեմ, այսպես կլավացնեմ տնտեսությունը, այսպիսի բեղմնավոր աշխատանք կթափիմ և գրանից այսքան հաց կհանեմ, այսքան յեկամուտ կտանամ: Բանվոր դասակարգը, իբրև կառուցվող սոցիալիստական տնտեսության տեր և նոր հասարակության կազմակերպիչ, այդ հնգամյա պլանի շնորհիվ կարող ե պետք ե դիտի, ուսումնասիրի և չափուձեի, թե վորքան հեռու և ինչպես կընթանա մոտակա հնգամյակի

մակերպել և համար ժողովրդական ամենալայն մաս-
սաները զորահավաքի յենթարկելու գործիքն են:

Յերբ մենք իր ժամանակին քննարկում ելինք
մեր լերկի ելեկտրիֆիկացիայի ծրագիրը, Վլադիմիր
Իլյիչը պնդում եր, վոր ելեկտրիֆիկացիայի ծրագիրը
շարադրված լինի ժողովրդականացրած, լայն մասսա-
ների համար մատչելի ձեռվ, այդ ձեզ համարելով ժո-
ղովրդական ամենալայն մասսաների զորահավաքման
հղոր լծակ: Նման զորահավաքի ավելի մեծ հնարավո-
րություն տալիս ե հնգամյա պլանը, քան ГОՅԼРО ն,
վորը իր բոլոր՝ կատարելապես բացառիկ արժանիքնե-
րով հանդերձ այն պակասությունն ուներ, վոր հասա-
րակությունը ելեկտրիֆիկացիայի հիմունքներով սո-
ցիալիստորեն վերակերտելու՝ նրա բացած հեռանկարը
ժամանակի, վորոյ ժամկետների ամուլը շըջանակի մեջ
դրված չեր: Հնգամյա պլանն ամեն մեկին, ով ծանո-
թացել ե նրան, հնարավորություն ե տալիս ուղածդ
ժողովրդական հավաքություն բացատրելու և բավակա-
նաչափ սառւագ նշելու, թե վորքան հեռուն ե գնում
սոցիալիստական շինարարությունը հինգ տարվա ըն-
թացքում, ինչպես ե բարելավվում բանվոր դասակար-
գի դրւթյունը, ինչպես ե բարգործվում զյուղիացու-
թյան դրությունը, վորքան հեռուն և վորքան հաղ-
թական կերթա այդ հինգ տարվա միջոցին կապիտա-
լիստական հարաբերությունների մացորդների հաղ-
թահարման ու լիկվիդացիայի յենթարկելու համար
մղած պայքարը:

Սակայն սրդ նվաճումները կարող են ավելի մեծ
կամ փոքր լինել, նայած թե ինչքան կաճի աշխատան-
քի արտադրողականությունը, ինչքան հմտորեն կհա-

ջողի կազմակերպել գիտական-տեխնիկական ուժիրը,
նայած թէ կհաջողի լուծել տեխնիկական հսկայական,
հեղափոխական մասշտաբի խնդիրները, ինչքան հա-
ջող ենք կազմակերպում գյուղը բերքատվության բարձ-
րացման համար մղած պայքարում և այլն, այլապես
ասած՝ նայած թե ինչպես կաճեն աշխատանքի վորա-
կական ցուցիչները:

Պլանում այդ բոլոր հարցերը դրված են վոչ իբ-
րև ընդհանուր տեսական կարգի գիրեկատիվներ, այլ
թվական կոնկրետ ձեռվ ցուց են տալիս կախումը աշ-
խատավորական ջանքերի, վորակական ցուցիչների և
այն բանի, թե ինչ են ունենալու բանվորներն ու
զյուղացիներն արդյունաբերության ու գյուղատնտե-
սության աճման մտքով, իրենց նյութական ու կուլ-
տուրական դրության բարելավման իմաստով: Ան-
հրաժեշտ ե հնգամյա պլանի հիմնական բոլոր տար-
բերը լայնութեն մագնել յուրաքանչյուր բանվորի, յուրա-
քանչյուր զյուղացու գիտակցուրյան մեջ, վորպեսզի նը-
րանցից յուրաքանչյուրը պարզ տեսնի իր ջանքերի
լարման և այդ ջանքերի արդյունքների այդ կախումը,
այնքան ակներև, ինչ ակներևությամբ զյուղացին և
իրեն պատկերացնում, յերբ հաշիվ ե անում, թե
այսքան կցանեմ, այսպես կլավացնեմ տնտեսությունը,
այսպիսի բեղմնավոր աշխատանք կթափեմ և դրանից
այսքան հաց կհանեմ, այսքան յեկամուտ կտանամ:
Բանվոր դասակարգը, իբրև կառուցվող սոցիալիստա-
կան տնտեսության տեր և նոր հասարակության կազ-
մակերպիչ, այդ հնգամյա պլանի շնորհիվ կարող և
պետք ե դիտի, ուսումնասիրի և չափուձեի, թե վոր-
քան հեռու և ինչպես կընթանա մոտակա հնգամյակի

ընթացքում շինարարությունը և այդ հսկայական տընտեսության բարելավումը, և այդ հաշիվը բազա դարձընի մեր յերկրի պրոլետարական և գուղացիական չքավոր-միջակ մասսաներն ամենալայնորեն կազմակերպելու համար:

II. ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ

Հնկերներ, յես չեմ կարող, առանց ռեգլամենտի շրջանակներից հետուն չելնելու, թեկուղ ամենակարեւոր թվերը նշել: Նրանք բերված են Կե-ի թեզիսներում, վոր ձեր ուշադրությանն են առաջարկված: Յես ձեր ուշադրությունը միայն այն կողմն եմ դարձնում, վոր լիթե մենք իրականացնենք հնգամյա պլանի մեջ դրված խնդիրները, բուրժուական յերկրների հետ զարգացման տեմպի գործում մեր ունեցած մրցակցության տեսակետից զգալի տեղաշարժում կկատարվի, և ԽՍՀՄ իր արտադրական ուժերի զարգացման մակարդակով ուրիշ յերկրների շարքում ավելի բարձր տեղ կզրավի: Որինակ, չուզունով, վոր տնտեսության ինդուստրիալ զարգացման վճռական ցուցիչներից մեկըն ե, մենք ներկայումս վեցերորդ տեղն ենք բըռնում, հնգամյակի վերջում կանցնենք յերրորդ տեղը և յետ կլինենք սիալն ՀԱՄՆ-ից և Գերմանիայից: Քարածուիի արդյունահանության տեսակետից մենք հրնգամյակի վերջում հինգերրորդից չորրորդ տեղը կանցնենք, և մեզնից առաջ կլինեն միայն ՀԱՄՆ, Անգլիան և Գերմանիան:

Մեր առաջ ծառացած պատմական խնդրի—տեխնիկա-տեսական տեսակետից հասնել ու առաջ անցնել առաջավոր յերկրներից—լուծման հսկայական հա-

ջողության հիմքը կազմում ե ժողովրդական տնտեսության մեջ զրված կապիտալների ահագին աճումը, վոր մենք նկատի ունենք կատարել մոտակա հնգամյակում: Այսպես, յենթագրվում ե հնգամյա ժամանակաշրջանում, անցյալ հնգամյակի 4,4 միլիարդ ռուբլու դիմաց, 16,5 միլիարդ ռուբլի մուծել պլանավորվող արդյունաբերության մեջ: Դրա հետ մեկտեղ հըսկայորեն աճում են, այսպես կոչված, ամբողջ ժողովրդական տնտեսության և, մասնավորապես ու հատկապես, նրա սոցիալիստական հատվածի հիմնական փոնդերը: Արդյունաբերության հիմնական փոնդերը ներկայիս 8,6 միլիարդի դիմաց 25,8 միլիարդ ռուբլու կհասնեն, եկեղացրի ֆիկացիայինը՝ ներկայիս 930 միլիոնի դիմաց մոտ 5 միլիարդի, յերկաթուղարկինը՝ ներկայիս 10,8 միլիարդի դիմաց 18,2 միլիարդ ռուբլու: Գյուղատնտեսության հիմնական փոնդերը 28,7 միլիարդից մինչև 38,9 միլիարդ լուրի կաճեն: Արդյունաբերության և եկեղացրի ֆիկացիայի հիմնական փոնդերը ներկայումս յերեք անգամ քիչ են գյուղատնտեսության հիմնական փոնդերից: Այդ հարաբերակցությունը հնգամյակի վերջում սուր կերպով փոխվում է, և արդյունաբերության ու եկեղացրի ֆիկացիայի փոնդերը (մոտ 31 միլիարդ) միայն չնչին չափով նվազ կլինեն գյուղատնտեսության փոնդերից (38,9 միլիարդ ռուբլի):

Դրան համապատասխան սուր կերպով՝ ավելի քան յերկու անգամ աճում ե ժողովրդական ամբողջ տնտեսության արտադրանքը, հատկապես արդյունաբերության արտադրանքը, վոր հնգամյակի ընթացքում ավելի քան յերկու և կես անգամ մեծանում է:

Այսպիսով, հնգամյա պլանը պարզապես ժողովրդական տնտեսության արտադրական ուժերի աճումն չի ծրագրում, այլ աճումն մեր յերկիրն ագրար-ինդուստրիալ յերկրից ինդուստրիալ-ագրար դարձնելու կողմը:

Նյութական այդ փոփոխություններին հետևում են սոցիալական եյական առաջընթացումներ, ի մասնավորի արտահայտվում են սոցիալիստական հատվածի (այսինքն պետական ու կոռպերատիվ) հիմնական փոնդերի տեսակարար կշռի ներկայիս 52,7 տոկոսից 1932-33 թ. թ. 68,9 տոկոսի բարձրանալում:

Ահա ընդհանուր գծերով բացառիկ նշանակություն ունեցող այն ծրագիրը, վոր ներկայացրել ե Պետական Պլանավիճն Հանձնաժողովը յերկու տարրերանով՝ այսպես կոչված՝ նախնական և ոպտիմալ՝ Պետական Պլանավիճն Հանձնաժողովն այդ յերկու տարրերակը կառավարության համաձայնությամբ ե մշակել, վորպեսզի մենք հնարավորություն ունենանք ավելի ստույգ հաշվելու հնգամյա պլանի իրագործման պայմանները և վորոշելու, թե կարող ենք արդյոք ապահովել այդ պայմանները: ԺՏԽ և կուսակցության կենտրոնական կոմիտեյում հնգամյա պլանը քննարկելիս մենք միաբան այն յեղբակացության յեկանք, վոր անհրաժեշտ ե վոչ թե յերկու, այլ մեկ տարրերակը հաստատել, ոպտիմալը, այսինքն այն, վոր ավելի մեծ նվաճումներ ե ծրագրում:

Այդ դեռ քիչ ե. մենք անհրաժեշտ համարեցինք այդ ոպտիմալ տարրերակն ելի միքիչ ընդլայնել թե գյուղատնտեսության և թե արդյունաբերության միքանի ճյուղերի գծով: Գյուղատնտեսության բնագավառում մենք այսպիսի մի հանգամանքի գեմ առանք.

արևելյան միքանի ռայոններում ցանքի տարածությունները ներկայումս դեռ զգալիորեն—լեռներն 15 և ավելի տոկոսով—յետ են մնում մինչպատերազմյան չափերից: Հնգամյա պլանով ցանքի տարածությունների աճման այնպիսի տեմպ ե ծրագրված, վոր մինչև 1932-33 թ. միքանի ռայոններում հազիվ կհասնեն մինչպատերազմյան մակարդակին: ԺՏԽ-ում այդ հարցը քննարկելիս մենք այն յեղբակացության յեկանք, թե հնարավոր ե, ուրեմն և անհրաժեշտ, ցանքի տարածությունն ընդլայնելու գործում ավելի արագ տեմպի հասնել, և դրան համապատասխան ավելացրինք պլանացին առաջադրությունը: Յերկրորդ հյական ուղղումը վերաբերում ե հացահատիկային խորհտնտեսությունների արտադրանքի աճմանը: Մենք սահմանեցինք, վոր կարելի յե և պետք ե ավելացնել Հատիկատրեստի (Յերհոտրեստ) խորհտնտեսություններում հացահատիկների արտադրությունը: Բացի այդ, հաշվի առնելով, վոր ներկայումս գյուղատնտեսության արտադրանքի աճումը չափազանց դանդաղել ե, մենք վորոշեցինք հնգամյա պլանի առաջին տարիններին ուժեղացնել հանքային պարարտիչների ու գյուղատնտեսական մեքենաների արտադրումը: Իմասնավորի մենք անհրաժեշտ գտանք ֆունֆորիալի նման պարարտիչների արտադրությունը հենց 1929-30 թ. հասցնել 500 հազար տոննի: Նմանապես ընդլայնել ենք առաջադրությունը ելեկտրիֆիկացիայի ընապավտում, մասնաւորապես նիմնի-նովորոդի ռայոնի: Վերջին հանգամանքը կապ ունի այն բանի հետ, վոր նիմնի-նովորոդին ենք ընտրել իրեն ավտոմոբիլային այն խոշորագույն գործարանի տեղ, վորի կառուցումն սկսվելու յե՝ հենց վոր նախագիծը պատրաստ լինի:

Հետո, մենք ավելացրինք վառելանյութի արտահըրման առաջադրությունը: Հնգամյա պլանի բնորոշ գծերից մեկն այն է, վոր նա կառուցված է վառելանյութի այլման ինտենսիվ ռացիոնալացման վրա, այնպիսի ռացիոնալացման, վորն արտադրանքի մեկ միավորի համար վառելանյութի ծախսը ներկա գրության համեմատությամբ 30 տոկոսով իջեցնում է: Սակայն այդ ևս չի յերաշխավորում մեր վառելանյութերի բարանսի կայունությունը: Մենք անհրաժեշտ համարեցինք ավելացնել վառելանյութերի արդյունահանման ծրագիրը, մասնավորապես Կուզնեցկի ռայոնում, և խոշոր հաջողությունների հասնել տեղական վառելանյութին ոգտագործելում: Մեր Միության վառելանյութի տնտեսությունը հիմնականում Դոնեցի և Կուզնեցկի ռայոններին է հեցած, վորոնք, ինչպես հայտնի յի, հեռու լին ընկած մեր արդյունաբերության այնպիսի կենտրոններից, ինչպիսին Լենինգրադն է, ինչպիսին Արդյունաբերական կենտրոնական մարզն ե: Վառելանյութի հեռավոր փոխադրությունը մեծ ծախսերի պատճառ է դառնում: Ուստի և վառելանյութի տեղական տեսակների հատկապես ելիկտրիֆիկացիայի օգնությամբ ոգտագործման հարցը բացառիկ կարեռ նշանակություն է ստանում, մանավանդ այնպիսի ռայոնների համար, ինչպիսին Արդյունաբերական կենտրոնական մարզն ե: Զնայած տեղական վառելանյութ ոգտագործելում մինչև որս ձեռք բերված խոշոր հաջողություններին, Պետական Պլանային Հանձնաժողովի ներկայացրած հնգամյա պլանի նախագծի մեկնակետն եր Դոնավազանից Արդյունաբերական կենտրոնական ռայոնը վառելանյութի գրեթե

կրկնապստիկ ավելի փոխադրությունը: Այդ մեզ էլլուց վորոշում հանելու, վոր ավելի շատ ոգտագործվի մերձմուկովյան ածուխը, և ավելի լայն դրվի հողածուխի (տորֆի) արդյունահանությունը: Մենք ցուցմունքներ տվինք, վոր մերձմուկովյան ածուխի արդյունահանությունը հնգամյակի բնթացքում հասցվի այս տարվանի հնգապատիկին, իսկ տորֆինը՝ լեռապատիկին: Մենք վախենում ենք, վոր հակառակ դեպքում վառելանյութի փոխադրությունների հսկայական աճումը մեզանից ավելի մեծ ծախսեր կպահանջի արդյունաբերական ռայոնները վառելանյութի աղբյուրներին միացնող լրացուցիչներին համար: Հնգամյա պլանի մեջ լրացուցիչների մաքրած կարելորագույն վորոշումներից մեկ է այդ: Յես մեկ-մեկ չեմ թվի ուրիշ վորոշումների կամ ուղղությունների ամբողջ շարքը, վոր վերաբերում են, որինակ, նավթահանության առաջադրության, գիտական-ուսումնասիրական աշխատանքներն ընդլայնելուն և այլն: Կասեմ միան, վոր այդ բոլոր ուղղություններն ու լրացումները վորեւե եական փոփոխություններ չեն մըտցընում Պետական Պլանային Հանձնաժողովի մշակած հնգամյա պլանի նախագծի մեջ: Հիմնական սահմանումը և պլանի տարրեր տարրերի միջև հիմնական հարաբերակցությունը նույն ձեռք են պահպանված, ինչպես Պետական եր ծրագրել:

Հնարավոր են, ոեալ են արդյոք մեր տնտեսական զարգացման այնպիսի բարձր տեմպեր, վորոնք գերազանցում են ուրիշ յերկրների զարգացման պատմությունից մեզ հայտնի բոլոր տեմպերին: Կապիտալիստական յերկրների համար արդյունաբերական ար-

տադրության շատ բարձր տեմպ և համարվում տարեկան 7—10 տոկ.: Յերկրի ամբողջ տնտեսության զարգացման վճռական գործոն հանդիսացող՝ պլանավորվող արդյունաբերության արտադրանքի աճման տեմպը, հնգամյա պլանի համաձայն, մոտ 20 տոկոսի մակարդակում և տատանվում: Հնգամյա պլանը պլանավորվող արդյունաբերության հիմնական (կապիտալ) ներդրումների աճման տեմպերն ըստ տարիների ախպես և նշում, +26 տոկ., +25 տոկ., +15 տոկ., +12 տոկ., +9 տոկ.: 1932/33 թվին այդ ներդրումները 1927/28 թվի ներդրումներին ավելի քան յերկու անգամ կզերազանցեն: Կարծում եմ, վոր մենք իվիճակի յենք արդպիսի տեմպի դիմանալու: Մենք այս տարի արդեն արդյունաբերության և ելեկտրիֆիկացիայի մեջ դնում ենք մոտ յերկու միլիարդ ռուբլի: Յեթե յենթադրենք, թե տարեցտարի այնքան ենք դնելու, ինչքան այս տարի, հնգամյակի համար կստանանք՝ 10 միլիարդ ռուբլի: Մինչդեռ մեր տնտեսությունը տարի տարու վրա ավելի զորանում ե, հետևապես հիմնական շինարարության կարիքների համար նըանից միջոցներ ստանալու հնարավորություններն ել են ավելանում: Մեզանից շատերն առաջ սխալվում եյին, կարծելով, թե այսպես կոչված վերականգնման շրջանից վերակառուցման շրջանին անցնելիս մեր տնտեսության, և մասնավորապես արդյունաբերության, զարգացման տեմպերը վճռական իջեցման կենթարկվեն և ավելի ցած կլինեն, քան ինչ մենք ունեցանք իրականում վերջին տարիներս: Վերականգնման շրջանում արտադրությունն ընդլայնելու խնդիրը հանգում եր պատրաստի սարքավորումը, պատրաստի Փաբրի-

կաներն ոգտագործելուն և կապված չեր հիմնական փոքր ի շատե լուրջ ծախսերի հետ: Ուստի այն տարիներին, յերբ վերականգնման պրոցեսի ուժերն ելին գործում, մեր արդյունաբերությունը բովանդակ արտադրանքով հասնում եր տարեկան աճի 30—40 տոկոսին և ավելիին: Բայց յերբ մենք արդյունաբերական զարգացման պրոցեսում հասանք այնտեղ, վոր յեղած սարքավորումը, յեղած Փաբրիկաներն ամբողջովին լցված գուրս յեկան, արդյունաբերության հետագա զարգացումը հնարավոր յեղավ միմիայն նոր գործարաններ, նոր Փաբրիկաներ կառուցելու, գոյություն ունեցողներն ել հիմնավորապես վերասարքավորելու հիմունքով: Յերբ մենք մոտենում ելինք բեկման այդ մոմենտին, մեզնից շատերը կարծում եյին, թե մենք վոչ միայն իվիճակի չենք լինի առաջվապես յոթ մզոնանոց քայլերով գնալ, այլ նույնիսկ, որինակ, այնպիսի տեմպեր, ինչպիսին ամենամյա 20 տոկ. աճումն ե, դժվար թե կարենանք ապահովել: Մեզանից շատերի համար այն ժամանակ կողմորոշումը (որինատիր) 10—12 տոկոսն եր: Այնինչ այս տարի (ինչպես և անցյալ տարի) մեր արդյունաբերությունն արտադրանքի մոտ 20 տոկ. աճ և ցույց տալիս: Յես կարծում եմ, վոր հետագա տարիներն այդ տեսակետից թե ավելի քիչ այլ ավելի շատ հնարավորություններ կտան: Աչքի առաջ ունեցեք, վոր այս և անցյալ տարիների ընթացքում մենք շինարարական ահագին աշխատանք ենք կատարել արդյունաբերության վերասարքավորման համար, նոր Փաբրիկաներ ու գործարաններ կառուցելու համար, և այդ սարքավորումն ու Փաբրիկաները մասամբ այս տարի լին աշխատանքի

դրվում և ավելի մեծ չափով աշխատել կակսեն յեկող տարվանից, Միաժամանակ աճում և նաև շինարարության ավելի արագ տեմպի և կապիտալի ավելի արագ շրջանառության հնարավորությունը: Ամենքին հայտնի է, զոր մինչև այժմ շինարարության մեջ ահագին քանակությամբ սխալներ, թերություններ ու վրեպություններ կան: Սակայն միենույն ժամանակ չի կարելի ժխտել և այն, զոր մենք այժմ ավելի լավ ենք կառուցում, քան 2—3 տարի տուած, կառուցում ենք ավելի եժան և արագ: Սա կապիտալի շրջանառության արագության մեծացման համար մի նախադրյալ է, զոր ահագին նշանակություն ունի: Հնգամյա պլանի մեջ մեր յելակետն և Մագնիսոգորսկի, Տելրեսկի գործարանների նման մետաղաձուլ հսկաները յերեք տարում կառուցելու հնարավորությունը: Շինարարության այդպիսի տեմպը յեվրոպականից ավելի ցած չե, բայց, հիմնելով մինչև որս նոր շինարարության մեջ մեր կուտակած հսկայական փորձի վրա, մենք իրավունք ունենք մեր տնտեսական մարմիններին այդ պահանջն առաջարելու: Հնգամյա պլանին մեկնակետ և ծառայում շինարարության տեմպերի այնպիսի մի արագացում, զոր, որինակ, ուստինական շոգեկայանի կառուցումը յերկու սեղոնում ավարտվի: Այդ լիովին հնարավոր և իրագործելի է, յեթե լավ կազմակերպված լինեն շինարարական աշխատանքները, և շինարարական գործում ոգտագործվին տեխնիկայի ժամանակակից նվաճումները:

Հնգամյա պլանը վոչ միայն մեծ պահանջներ և առաջարելու տնտեսական բոլոր կազմակերպությունների վորակին, այլև աշխատանքի արտադրողականու-

թյան ավելի քան կրկնակի բարձրացումն ունի յելակետ: Այս, ինարկե, չի նշանակում, թե աշխատանքի ինտենսիվությունը, այսինքն աշխատանքի վրա մարդու ծախսած յեռանդի քանակը պետք է կրկնապատկելի: Արագորդականության այդպիսի աճումը հիմնականում պայմանավորված է այն հսկայական ներգրումներով, զոր մենք ուղղում ենք արդյունաբերության վերակառուցմանը և ամբողջ արտադրության ռացիոնալացմանը: Սակայն սխալ կլիներ, յեթե մտածեյինք, թե նման արտադրողականություն մեզ կարող են տալ նոր մեքենաները, ինքնըստինքյան, նույնիսկ աշխատավորական դիսցիպլինայի այն կացության ժամանակ, զոր իրերի ներկա դրությունն և բնորոշում: Միայն աշխատավորական դիսցիպլինայի ամրապնդման մասին կառավարության վերջին որենքը կատարելով, միայն այդ բնագավառում վերջին ժամանակներս գոյություն ունեցող թերությունների՝ գործալքումների և այլն՝ ամենաարագ հաղթահարման պայմանով կարելի է հասնել հնգամյա պլանում նախագծված՝ աշխատանքի արտադրողականության աճման գործակիցներին (կոեֆֆիցիենտ) և այդ արտադրողականության համապատասխան՝ արտադրության ընդլայնման նախագծված տեմպին: Բանվորների ուելաշխատավարձի բարձրացումը 70 տոկ. և նախատեսված ված, սակայն անհրաժեշտ և ամենայն պարզությամբ հասկանաթ վոր այդ բարձրացումն ուղղակի կախումն ունի ամբողջ պլանի իրագործումից և մասնավորապիս այնպիսի վճռական ոգակից, ինչպիսին աշխատանքի արագորդականությունը բարձրացումն է: Բանվոր դասակարգը տեր և խորհրդականության պետության մեջ: մեր և ՍՅԱՆԻԿԱՆ

պետությունը բանվորական ե, իշխանությունը բանվորական ե, և բանվոր դասակարգի ու գյուղացիության և ամբողջ աշխատավոր ազգաբնակության չքավոր խավերի նյութական ու կուլտուրական զրության բարելավման ամբողջ գործը բանվոր դասակարգի ու գյուղացիության չքավոր միջակ մասսաների ձեռքի գործն ե, նրանց ամենալայն մասնակցությամբ պիտի ապահովի թե աշխատանքի ավելի արտադրողականությունը, թե աշխատանքի ավելի լավ կազմակերպությունն ու վորակական այլ ցուցիչների բարձրացումը:

Այս պլանով ընդգրկված հնդամյակի ընթացքում զգալի առաջընթացություններ են կատարվելու, արդյունաբերությունն ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ պետք է ել ավելի խոշոր տեղ րունի: Ցերկովը արտադրանքում արդյունաբերության տեսակարար կշիռն անփոփոխ գներով աճում է՝ 1927/28 թ. 32,7 տոկոսից մինչև 1932/33 թ. 38,2 տոկոս: Նրա տեսակարար կշիռը հիմնական փոփերում աճում է 1927/28 թ. 14 տոկոսից մինչև 1932/33 թ. 28,8, տոկով, իսկ երեկորդի փոփառությանը համապատասխան մեկտեղ՝ 15,4-ից մինչև 27,1 տոկոս:

Հենց այս ե, վոր նշանակում ե դասակարգային ա-
հազին առաջընթացութիւնի լերկրի մեջ; Բանվոր դասա-
կարգի տեսակաբար կշիռն ու գերը համապատասխան
կերպով փոխվում են: Հնգամյա պլանով ծրագրվում ե,
վոր ցենզային արդյունաբերության բանվորների թիվը
1927/28 թ. 2.750 հազարից մինչև հնգամյակի վերջը
հավասարվելու լի 3.631 հազարի: Ցերկրի մեջ վարձու
աշխատավորների ընդհանուր թիվը 1927/28 թ. 11350

Հաղարից աճելու լեռ մինչև 1932/33 թ. 15.724 հազար
Հնգամյա պլանը արդյունաբերության բնորոշված
աճման և ժողովրդական տնտեսության ընդհանուր
բարձրացման կապակցությամբ նախատեսում են գոր-
ծազրկության զգալի նվազում։ Յես այստեղ գործա-
զուրկների քանակի նվազման մասին թվական տը-
վյալներ չեմ բերում, վորովհետեւ ընդունում եմ, վոր-
այդ հարցի վեւաբերյալ ներկայացված թվարկումները
շատ պայմանական են, սակայն գործազրկության
նվազումը, իբր հետեւանք նշած տնտեսական պլանի
կատարման, պետք են տեղի ունենա:

Սոցիալիստական շինարարության հնգամյա պլա-
նի իրազործումը հնարավոր ե միայն բանվոր դաստ-
կարգի և գյուղական բնակչության հիմնական մաս-
սայի կուլտուրական հսկայական աճման հետևանքով։
Հնգամյակով ահազին ներգրումներ են նախատեսվում
սոցիալ-կուլտուրական շինարարության գծով։ Այդ
ներգրումները բանվոր դասակարգի կուլտուրական աճ-
ման բավարար տեմպ ապահովելու համար են անհրա-
ժեշտ։ Այդ հնգամյակի ընթացքում լենթաղրվում ե
սոցիալ-կուլտուրական կարիքների վրա արգող ծախ-
սերն ավելացնել 1927/28 թ. 2,4 միլիարդից մինչև
1932/33 թ. 5,9 միլիարդ ռուբլի։ Ամբողջ հնգամյա-
կում սոցիալ-կուլտուրական հատվածի գծով կծախսվի
21,4 միլիարդ ռուբլի։

Կուլտուրական կարիքների վրա արվող այսքան
խոշոր ծախսերը կուլտուրական հեղափոխության զար-
գացման մեջ միայն առաջին քայլերն են ապահովում։
Սոցիալիստական հասարակության կազմակերպման
հիտագա աշխատանքն ավելի ու ավելի կախված կլինի

սոցիալիստակ ան կուլտուրայի աճումից, ժողովրդական ամենալայն մասսաների կուլտուրապես ավելի ու ավելի բարձրանալուց: Մեր լեռների աշխատավոր բնակչության կուլտուրական աճումը մեր ահտության սոցիալիստական վերաշինման, մեր պետական ապահովատի աշխատանքի թերությունների, բյուրոկրատիզմի, քաշքառուկների դեմ և այլն վճռականապես պայքարելու և մեր տնտեսությունը վերակազմելու կարեվորագույն պայմանն եւ, Ռւստի և կուլտուրական կարգների վրա արվող ծախսերը հնգամյա պլանի և անցողիկ ժամանակաշրջանի մեր ամրող աշխատանքի որպանական մասն են կազմում:

Յես չեմ տարակուսում, թե կարող ենք հաջողությամբ գլուխ հանիլ ազգային լեկամուտը վերաբաշխելու խնդրից և արդյունաբերության ու ժողովրդական տնտեսության ալլ ճյուղերի մեջ դրվող գումարներն ապահովել այն չափերով, ինչ հնգամյա պլանի մեջ և նախագծված: Հնգամյա պլանն իրականացնելիս ինձ հուզողը հարցերի այն շղթան եւ, զոր կապահած և մեր տեխնիկայի, տեխնիկական կադրերի հետ կարողանանք արդյոք այդ միջոցները պատշաճ եփեկտավորությամբ ոգտագործել, նրանց վրա այն աշխատանքը կատարել, ինչ հնգամյա պլանն և նշում, ուրիշ խոսքով՝ գլուխ հճանենք արդյոք մարդկանց կազմակերպելու, գիտական-տեխնիկական կադրեր, բանվորական վորակյալ ուժ կազմակերպելու հարցը լուծելուց, կերպարանական արդյունք արդյունաբերության առաջնային աշխատավայրություններն ոգտագործել, վոր ժամանակակից տեխնիկան եւ լինենում: Այս և երականը: Հնգամյա պլանը ահագին ուժ է: Դա հեղափոխական

պլան և վոչ միայն այն իմաստով, վոր սոցիալիստական հասարակության կազմակերպության ճանապարհին հսկայական մի թոփչը և արտահայտում, այլև այն իմաստով, վոր մի ամբողջ հեղափոխություն և նշանակելու տեխնիկայի, նորագույն տեխնիկան կանգում կիրառելու բնագավառում: Զե՞ վոր արտադրության ամբողջ ճյուղեր նորինորո լենք ստեղծելու: Նոր շինարարության համար բավական չեն դրամական միջոցները, վոր մենք կարող ելինք զատել, բավական չեն միմիայն շինարարական նյութերը, դրանից զատ այստեղ մարդիկ ել են հարկավոր տեխնիկական և կազմակերպիչ կազմեր, վորոնք կկարողանան և ի վիճակի կլինեն կատարել շինարարական բնագագակ ծրագիրը և կազմակերպել նոր ձեռնարկություններ ու նոր արտադրություններ: Այդ պատճառով կադրերի հարցը, այսինքն համապատասխան քանակի և վորակի մարդիկ (բանվորական վորակյալ ուժից սկսած մինչև բարձրագույն վորակի ինժեները) պատշաճապես նախապատրաստելու հարցը վոչ մի դեպքում չի կարող դիտվել իրեկ ինչ վոր կողմանակի «հավելված» հնգամյակին և կամ իրեկ լեռկրորդ կարգի հարց: Ընդհակառակը, մարդկային կաղրերի պրոբլեմը հնգամյա պլանի որդանական անբաժան մի մասն եւ, և նրա լուծումն անհետաձգելի յե, անհրաժեշտ, առաջնահերթ: Առանց այդ բանի հնգամյա պլանի մի ամբողջ շարք կետերով մենք չենք կարող հաջող լուծել մեր առաջ դրված ժողովրդա-տնտեսական խոշորագույն խնդիրները: Յեթե մենք այժմ մեծ ջանքեր ենք գործում արևմտայելվողական և ամերիկական տեխնիկան իրայնացնելու (և վոչ անհաջող), ապա

արտաստանյան գիտական-տեխնիկական փորձի ոգ-
տագործումը հնգամյակի ընթացքում պետք ե հասնի
անչափելի մեծ մասշտաբների: Այստեղ հաճախ պար-
զապես չեն հասկանում, թե ոտարերկրյա տեխնիկայի
գրավման ինչպիսի մասշտաբների մասին պիտի խոսք
լինի: Հարկավ, յերբ մեր նոր կազմերը կհասնեն (իսկ
դրանց նախապատրաստման գործը պետք ե ամեն
կերպ արագացնել և կատարելագործել), մեզանում
ոտարերկրյա մասնագետներ (ինժեներներ, տեխ-
նիկներ և այլն) հրավիրելու պահանջը կնվազի: Բայց
այժմ, յերբ մենք նկրտում ենք մեր տեխնիկայի մեջ
հսկայական մասշտաբներով հեղաշրջում առաջ բերել
ոտարերկրյա միայն մեկ-յերկու հարյուրյակ մասնա-
գետ հրավիրելու նման միջոցները հարցը լուծել չեն
կարող: Վերցրեք, որինակ, այնպիսի մի ճյուղ, ինչ-
պիսին արգեստական մետաքսի արտադրությունն ե—
արդյունաբերության մի ճյուղ, վորն, անշուշտ, իր
զարգացման լայն հեռանկարներն ունի: Մենք այս-
տեղ անվերջ տքնում ենք, բայց վոչ ինչպիս հարկն ե
նախագծել ենք կարողանում, վոչ ել նախագծերի մա-
սին խելքը գլխին յեզրակացություն տալիս: Իսկ ար-
տասահմանում, չնայած բոլոր արգելառիթներին, վոր
այստեղ կտպված են տնտեսական կյանքի մասնավոր-
սեփականատիրական կառուցվածքի հետ, արդյունա-
բերության այդ ճյուղը բացառիկ արագությամբ ե զար-
գանում: Մեզանում այդ ճյուղը կարող եր անշափ ա-
վելի շատ արագությամբ զարգանալ և այնուամե-
նայնիվ մենք այդ բանում յերեխայի պես թույլ դուրս
լեկանք: Այստեղ մենք գեվար թե կարողանանք շատ
բան անել՝ հենվելով միայն մեր առկա կազմերին:

Այս մի ավելորդ անգամ շեշտում ե, վոր այդ կետում
մենք գեռնս անհրաժեշտ զիրքերը չենք նվաճել:
Տվյալ նախագիծը նախընթաց բոլոր նախագծե-
րի հետ համեմատելիս հնգամյա պլանի աչքի ընկնող
յուրահատուկ գծերից մեկը զյուղատնտեսության բար-
ձրացման ու վերակառուցման կանոնագոր և շատ ցը-
ցուն նշած հեռանկարն եւ Հնգամյա պլանը զյուղա-
տնտեսության համար սկզբունքային տեսակետից
նույնն ե, ինչ վոր իր ժամանակին ՌՕՅԼՌՕ.ն եր
ժողովրդական ամբողջ տնտեսության համար, վորով-
հետև զյուղատնտեսության հանրայնացման պլորեմը
գործնական ձելով (խորհանտեսությունների, կոլտըն-
տեսությունների, կոռպուրացման միջոցով) և գնում
նոր ենիրգետիկայի բազայի վրա: Հիշում եմ, թե ինչ
անսովոր շատ ուշադրություն եր նվիրում Վլագիմիր
իշիչը զյուղատնտեսության մեջ ելեկտրագութանը
գործածական դարձնելու հարցին: Զնայած այդ զյու-
տի ամբողջ նորությանը, անկայունությանը և ելեկ-
տրագութանի մասսայական փորձնական ստուգման
բաց ականությանը, Վլագիմիր իշիչն ամենամեծ ու-
ժով կառչեց նրան, ցանկանալով նրա մեջ տեխնիկա-
արտադրական այն լծակը տեսնել վորի ոգնությամբ
մենք կկարողանայինք զյուղատնտեսության հանրայ-
նացման գործը գործնական ոելսերի վրա դնել: Ելեկ-
տրագութանի գործը ձախողեց: Հնարավոր ե, վոր հե-
տագալում ելեկտրականության բնագավառում լինե-
լիք նոր գյուղերը և զյուղատնտեսության մեջ ելեկ-
տրականության լայն կիրառումը մեր առաջ նոր, ա-
ռաջները չտեսնված հորիզոններ կբանան: Գյուղի
տեխնիկա-տնտեսական կառուցվածքի արմատական

փոփոխության լծակի վորոնումը տվյալ պայմաններում գնալու յէ քարշի ուժի պրոբլեմը լուծելու մակարդակով։ Նոր հնգամյա պյանի խոռորագույն նվաճումը հենց այն է, զոր նա յէ առաջինը նույն այդ պրոբլեմի լուծման գլխավոր ուղիները յեվ զյուղատեսնեսուրյան համար տիեզ է ГОՅԼՐՕ-ի յուրատեսակ մի նախագիծ Քարշի կենդանի ուժն ավտոմատ շարժիչով փոխելը տեխնիկական հեղաշրջում կառաջացնի իր իսկ՝ գյուղի սոցիալական հարաբերությունների մեջ և միաժամանակ գյուղի սոցիալական հանրայնացմանը, գյուղացիական անհատական տնտեսությունը սոցիալիստականի վերաշինելուն, մեր սկզբունքային գիծը տեխնիկական այնպիսի ձեռնարկումներով հիմնավորելով, վորոնք մեր արդ աշխատանքը գյուղում դարձնում են շատ կայուն, արգասավոր և գյուղացիների համար անսովոր հասկանալի։ Հատկապես միջուկուղային միքենա-տրակտորային կայանները պիտի խոշոր դեր խաղան ամբողջ գյուղական տնտեսությունը բարձրացնելու և գյուղատնտեսական հանրայնացրած հատվածի ու տնհատական տնտեսության միջև կարևորագույն միջնուղիներից մեկը լինեն։ Վերջապես, բացի տրակտորներ ու գյուղատնտեսական մեքենաներ հայթալը, գյուղական տնտեսության բարձրացման կարևորագույն մի տարր կլինի քիմիական պարարտիչների արտադրության ուժեղացումը։

Հնգամյա պլանի հենց այս մասի այդպիսի նշանակության նկատառումով մենք վորոշում ընդունե-

ցինք Ստալինգրադինից զատ արակտորագին յերկրորդ գործարան կառուցելու մասին։ (Սկրիպնիկը տեղից՝ «Ուկրայինայում»)։ Գուցե և Ուկրայինայում։ Հնգամյա պլանի իրականացումն այն բանին կհասցնի, վոր 20 միլիոն գյուղացի կազմակերպված կլինին կողմընտեսությունների մեջ և 1 միլիոն գյուղատնտեսությունների մեջ։ սա գյուղի սոցիալական կառուցվածքի մեծ հրակայական առաջընթացություն է, մի մած քայլ դիպի հասարակության սոցիալիստական կազմ սկերպությունը։

Գյուղատնտեսական արտադրությանը սոցիալական ու տեխնիկական նոր բազա տալու հնգամյա պլանի այս գլխավոր գիծը վորեե չափով չի կարող ստիպել մեզ, վոր մոռանանք գյուղացիական միջակ ու չքաղաքանական տնտեսության նշանակությունը։ Ինչքան ել այդ բնագավառում հսկայական լինեն նախանշած աշխատանքները, հանրայնացրած հատվածը հնգամյակի վերջում ապրանքային հացի միայն 40 տոկոսը կտա, իսկ մնացած 60 տոկոսը կլինի անհատական հատվածի բաժինը։ Չի կարելի ասել, թե գյուղատնտեսությունը հանրայնացրած խնդիրը և չքավորամիջակ տնտեսությունների զարգացման հոգսն իրար փոխագարձ ժխտում են։ Ընթակառակը, գյուղատնտեսության բարձրացման ամբողջ պրոբլեմը հաջողությամբ կլուծվի միայն այդ յետիու խնդրի կանոնավոր զուգորդման դեպքում։ Ուստի և իր լիակատար ուժը պահպանում և կկ նոյեմբերյան պլենումի այն վորոշումը, վորն ամբողջ ուժով շեշտում եր չքավորամիջակ անհատական տըն-

տեսության բարձրացմանը ամեն կերպ ազդակ լինելու անհրաժեշտությունը, ամենատեսակ սահմանափակելով կուլակի շահագործական նկրտությունը և հետագայում զրոհելով նրան:

Կուսակցությունը, հնդամյա պլանում ծրագրելով գյուղատնտեսության վերակազմավորման գլխավոր գծերը, պետք եւ, և համաձայն կկ նորեմբերյան պլենումի վորոշությունը, ամեն միջոց ձեռք առնի, վորապեսի գյուղատնտեսությունը նշված բոլոր ուղղություններով բարձրացնելու և վերաշնելու համար նյութական-տեխնիկական նախադրյաների ստեղծումը գյուղացիական չքավորա-միջակ անհատական տընտեսությունների իսկ կողմից տնտեսական շահագըրգովածության հզոր ալիքի հանդիպի: Այդ տնտեսություններին ազդակ լինելու քաղաքականությունը անհրաժեշտ պայման ե այն միլիարդների (մեքենաների, տրակտորների, պարարտիչների ձեռվ և այլն) իսկական ու եֆֆեկտուավոր իրանացման, վոր պետությունն ու սոցիալիստական արդյունաբերությունը կցցեն գյուղատնտեսության մեջ:

Կատարյալ ե արդյոք ներկայացված հնդամյա պլանը իր բոլոր մասներով, նրանում արդյոք ամեն ինչ բավարար կանխատեսված և կանոնավոր լուծված ե: Մինչև այժմ զեպք չի յեղել, վոր մենք մեր բլուջետային ու տնտեսական պլանները կատարելիս ամբողջ շարք թերություններ, վրիպումներ չարձանագրենք, Յուրաքանչյուր տարվա ընթացքում տնտեսական ու կուլտուրական զգալի խնդիրներ ելին հառնում, վորոնց լուծումը տարեկան պլաններով նախատեսված չեր լինում: Ինարկե, նույն վոգով մի բան ել կը կնկնի:

այս հնդամյա պլանի նկատմամբ, վորը չե՞ վոր նման պլանավորման առաջին փորձն ե: Բայց բոլորովին անձիշտ կլիներ՝ այդ պատճառներով հետաձգել նրա քննարկություն ու հաստատումը: Ընդհանրապես հիմնականում, իր հիմնական գծերում տնտեսության վորոշիչ ճյուղերի՝ ծանր ինդուստրիալի, թեթև ինդուստրիալի, գյուղատնտեսության զարգացման հարաբերակցության մեջ ճիշտ և այդ պլանը, ճիշտ և նա նաև սոցիալ-դասակարգային տեսակետով, վորովհետեւ տընտեսության ամբողջ սիստեմի մեջ հանրախնացված հատվածի ամենա արագ տեմպն և ապահովում, և այդ վոչ թե միայն քաղաքում, այլև գլուղում:

Նա այն աստիճան մշակված ե, վոր կարելի և պետք ե մեր ամբողջ գործնական աշխատանքի հիմք դարձնել: Փորձը, գործնականը ցուց կտան, թե վորտեղ, ինչ և ինչպես պետք ե ուղղել ու լրացնել: Պլանն ինքը այնպես է կազմված, վոր այդ ուղղությունը ու լրացությունը հսարավորություն ե տալիս վոչ միայն ուժերի ու միջոցների վերախմբավորումով, այլև ոեղերթերի հաշվին, վորոնք պլանի համապատասխան պարտադրաբար ստեղծվելու լին:

III. ՀՆԹԱՑԻԿ ՏԱՐԻՆ

Կոնֆերանսի քննությանը դրաձ՝ հնդամյա պլանի նախագծի քննության ժամանակ չի կարելի մոռանալ վոր ընթացիկ տնտեսական տարին հնդամյակի առաջին տարին ե, նրա ընդգրկած ժամանակաշրջանի $\frac{1}{5}$ -ն եւ: Այդ տարվա ընթացքում մեր աշխատանքն ահագին նշանակություն ունի այն տեսակե-

տից, թե այդ տարվա կոնյունկտուրան ինչ ազգեցություն կունենա հետաքա տարիների վրա, և ինչ գնահատական կստանա հնգամյա պլանի կատարելի լինելը. Ուստի իս կաշխատեմ բոլորվին հակիրճ բնութագրել ձեզ համար այս տարվա տնտեսական աշխատանքների ընթացքում դրսեորված հիմնական մոմենտները:

Այժմ մեր առաջ դրված և կուսակցության կենտրոնական կոմիտեյի վորոշումների մեջ շեշտաված ամենից ավելի սուր և ակտուալ հարցը գյուղատնտեսության բարձրացումն ալնպես ուժեղացնելու անհրաժեշտության հարցն ե, վորպեսզի ամենակարճ ժամկետում հերթից հանվի ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղերի՝ արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման տարաբաժանման նկատված սպառնալիքը: Մեզ յելակետ յեղելե և այն, վոր արդյունաբերությունն ալսունետե ել պետք ե գյուղատնտեսությունից ավելի արագ զարգանա, վորովհետեւ արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման տեմպերի հակառակ հարաբերակցությունը կնշանակեր յերկրի վոչ թե ինդուստրիացում, այլ ագրարիզացիա: Գործի ելությունը վոչ թե այն ե, թե գյուղատնտեսությունը զարգացման տեմպով արդյունաբերությունից առհասարակ յետ ե մնում, այլ այն, վոր այժմ հետամնացությունը չափազանց շատ ե: Գյուղատնտեսությունն սկսել ե իր զարգացումով այնքան յետ մնալ, վոր դրանով հենց արդյունաբերության զարգացմանն ե սպառնալիք ստեղծվում: Պետական խոշոր արդյունաբերությունը վերականգնման շրջանից վերակազմավորման շրջանին անցնելուց հետո ել տարի տարու վրա արտադրը

ման դարձացման շատ լավ տեմպ ե ցուցյ տալիս՝ ամեն տարի մոտ 20 տոկ.։ Այս շատ լավ ե: Իսկ զյուղատնտեսության բովանդակ արտադրանքը (առանց ձկնորսության, վորսի և լեռնալին տնտեսության) վերջին տարիներում, Պետպլանի տվյալների համաձայն այսպես եր աճում:

Նախընթաց տարվա
վո՛ր տնկոսով

1926—27 թ. + 5,4

1927—28 թ. — 1,1

1928—29 թ. (Ենթադրաբար) + 4,4*)

Այդ աճումն զգալի չափով տեխնիկական կուլտուրաների հաշվին եր լինում: Ներկայումս տեխնիկական կուլտուրաների ցանքսի տարածությունը մինչպատերազման տարածությունից $1\frac{1}{2}$ անգամ մեծ ե, չնայած վոր վուշաթելի ու շաքարի ճակնդեղի պես կուլտուրաների բովանդակ բերքը մինչպատերազման չափերին դեռ չի հասկել: Տեխնիկական կուլտուրաների նման աճումը շատ դրական փաստ ե: Մենք այսունետե ել պետք ե տեխնիկական կուլտուրաների ուժեղացրած զարգացման քաղաքականություն վարենք, բայց միաժամանակ ավելի շատ ուշադրություն դարձնենք հատիկային բազալին, վորի քայլաբայումն ու անկումն անխոսափելիորեն հիարվածի տեխնիկական կուլտուրաներին, ամբողջ գյուղատնտեսությանը և ընդհանրապես ժողովրդական տնտեսությանը: Իսկ հատիկային կուլտուրաների արտադրությունը մեզա-

*) Տես՝ ՀՀ 1928—29 թ., էջ 398—399:

— 30 —

նում ավելի վատ դրության ե, քան աեխնիկական կուլտուրաներինը: Հատիկային անտեսության կացության ամենակարենը ցուցիչը հատիկային ցանքսերի տարածության շարժումն ե: Յեթե հատիկային կուլտուրաների ցանքսերի տարածության մինչպատերազման չափերն ընդունենք 100, ապա նրանք կազմում են:

1926—27 թ.	92,9
1927—28 »	94,6
1928—29 »	92,2*)

Հատիկային կուլտուրաների ցանքսերի տարածությունից բնակչության մի շնչին այժմ ընկնում ե սինչպատերազմանի միայն 83,8 տոկոսը: Դրա համապատասխան ել պատկեր ունի հացահատիկների բռվանդակ բերքը:

Հացահատիկների բովանդակ բերքը (միլ. տոններով)

1913 թ.	96,6***)
1925—26 թ.	74,5
1926—27 »	78,3
1927—28 »	73,6
1928—29 »	73,3 ***)

*) Տես՝ ԿԼ 1928—29 թ., էջ 412—413:

**) 1913 թի համար վերցրած ե լրական բերքը: Յեթե այդ թի միջին բերքն ստանալու համար ուղղութեր անենք, ապա 1913 թ. բերքը հավասար կլինի 81,6 միլ. տոննի: Տես՝ ԿԼ 1928—29 թ., էջ 408—409:

***) Կենտրակարի վերջին տվյալների համաձայն:

Պարենավորման հիմնական կուլտուրաների՝ տարեկանի և ցորենի արտադրությունը հետեւյալ տվյալներով ե բնորոշվում: —

Տարեկանի յեզ ցորենի ցանքսերի տարածությունը
յեզ բերքը:

Տարեկանի բերք	Տարեկան		Տարեկան	
	Ցանքսերի առաջանաւություն (միլ. տոնն.)	Բերքը (միլ. տոնն.)	Ցանքսերի առաջանաւություն (միլ. տոնն.)	Բերքը (միլ. տոնն.)
1925—26	29,2	23,0	25,5	21,2
1926—27	28,8	23,9	29,9	24,8
Նախընթաց տարվա վոր տոկոսով և փոխել	-1,4	+3,9	+17,2	+18,0
1927—28	28,4	24,4	32,0	21,1
Նախընթաց տարվա վոր տոկոսով և փոխել	-1,4	+1,6	+7,0	-15,0
1928—29 (յենթադր.)	26,1	19,6	28,4	19,9
Նախընթաց տարվա վոր տոկոսով և փոխել	-8,1	-19,7	-11,3	-5,3

Այս ե պարենավորման հացահատիկային կուլտուրաների գրությունը: Սրանով վորոշվում են մի

շարք յերկուլիթներ, վորոնց մեզնից լուրաքանչյուրը
բավականաշափ ծանոթ ե:

Գյուղատնտեսության և հատկապիս նրա հացա-
հատիկային ճյուղերի մեջ ստեղծված դրությունը մեզ
ստիպել ե այս տարի ամբողջ ուժով ծանրանալ ցանք-
սերն ընդլայնելու վրա:

Սակայն սերմանման աշնային կամպանիան
այն հաջողությունները չբերեց, վորոնց հուսացել
եյինք. աշնացանի ծրագրված ընդլայնման փոխարեն
ամբողջ Միության մեջ մոտ 30 տոկ. ընդհանուր կըր-
ճատում յեղավ, վոր մասսամբ կապված ե կլիմայա-
կան անբարեհաջող պայմանների հետ. Պետք ե նկա-
տի ունենալ, վոր աշնային ամենից ավելի բնորոշ
կուլտուրաններ են պարենավորման կուլտուրանները
(տարեկանն ու ցորենը), վորոնք հենց ամենից ավելի
թույլ տեղն են մեր հացախարային բալանսի մեջ:
Կուսակցության ներկա համամիութենական կոնֆե-
րանս յեկած բոլոր ընկերները պետք ե պարզ հասկա-
նան, թե այդ փաստերի լուսի մեջ ինչ բացառիկ նշա-
նակություն ե ստանում գարնացանի կամպանիան:
Աշնացանի պակասը ծածկելու և ցանքսի տարածու-
թյուններն (7 տոկոսով) ընդլայնելու կոնտրոլ թվերի
պլանն իրականացնելու համար անհրաժեշտ ե գար-
նացանը 7-ից շատ ավելի տոկոսով ընդլայնել: Այժմ-
ան պարագաներում մեզ համար մեծ պլանս կլինի
թե չքավորա-միջակ անհատական տնտեսությունների
մասսայում և թե իրենց նշանակությամբ աճող կոլ-
տնտեսություններում ու խորհանտեսություններում
ցանքսերի տարածություններն ընդլայնելու և բեր-
քատվությունը շատացնելու գործում մեր նվաճած

յուրաքանչյուր տոկոսը: Այստեղ ներկա յեղողների
մեծամասնությունը ծանոթ ե, ըստ գործի զրության
տեղերում, բնակչությանը հաց հայթայթելու հարցին:
Հացամթերությունն այս տարի անցյալ տարվանից տ-
վելի վատ են գնում, վոր կապ ունի թե հացահատիկ-
ների բովանդակ բերքի վորոշ ընդհանուր իջման հետ,
մինչդեռ բնակչությունն աճել ե, և թե բերքի աշխար-
հագրական անբարեհաջող դասավորման և նրա մի մա-
սի կորսափ հետ տափաստանալին Ուկրայնալի և
Հյուսիսային կովկասի միքանի ուալոններում: Այստե-
ղից ել՝ հացահատիկայթման լարվածությունը:

Այժմյան հացալին դժվարությունների մասին
կարելի յե գաղափար կազմել այն պառակտումով, վոր
հացի շուկայում առաջ ե յեկել ազատ և մթերման
գների միջն: Հացի շուկայի այդպիսի դրությանը ու-
ղեկցում և չարաշահությունը, վորը իր հերթին բա-
ցասական աղեցություն և ունենում հացամթերում-
ների վրա: Այդ պատճառով հացամթերման ամենաշ-
պիսավոր ուալոններում հաց թաղցնող գյուղական կու-
լակային շերտերի վրա ազգելու հասարակական մե-
թողներին դիմեցին: Հացի համար ստեղծված ներկա
գրությունը մեզ ստիպեց հացի գնան քարտեր մըտ-
ցընել: Հացի պակասը չարաշահության համար հող
ստեղծեց վոչ միայն գյուղում, այլև քաղաքում: Առա-
ջին հերթին քաղաքային խոշոր կենտրոններին սպա-
սարկող հայթայթման պլանը, քաղաքներում հացի
անսահմանափակ վաճառքը չեր կարող չարաշահու-
թյան հետագա աճման աղբյուր չդառնալ Մոսկվայի
ու Լենինգրադի պես կենտրոններն սկսեցին այդ չա-
րաշահության կենտրոններ դառնալ առաջին հերթին
Հնդկամյա պլանը—2

Ե վասս բանվոր դասակարգի: Ուստի հացի ծախսման տնտեսման, չարաշահության դեմ պայքարելու և քանվոր դասակարգի ու գյուղի չքավոր շերտերի շահերն ապահովելու նպատակով մենք այսպես ասած զնման գրքուէկներին անցանք, վորոնք, իհարկե, չեն կարող ինչ-վոր բարիք համարվել: Ստեղծված գրության մեջ նրանք չարիքներից փոքրագույնն են:

Պարենավորժան հարցի սրությունը չեն կարող չանդրադառնալ նաև մեր տնտեսության այլ կողմերի վրա, յեթե մենք չկարողանանք լիկվիդացիայի յենթարկել այն:

Հնգամյակի առաջին տարվա՝ այս տարվա տընտեսական պլանի իրագործման ընթացքում յերկրորդ հանգամանքը, վորի վրա պետք և հատուկ ուշուդրություն դարձնել գների շարժման բարձրացման տեսնդենցն ե: Այդ տեսդենցը լիկվիդացիայի յենթարկելու համար պետք և վճռական միջոցներ ձեռք առնվեն:

Այս տարի դրական ահազին փաստ և արդյունաբերության բովանդակ արտադրանքի շատ բարձր՝ մոտ 20% աճումը և արդյունաբերության՝ անցյալ տարիների համեմատությամբ՝ ավելի հաջող պատրաստվածությունը ուժեղ աճած կապիտալ աշխատանքների համար և զրանց հաջող կառարումը:

Արդյունաբերության զարգացման մեջ թերություն և արդյունաբերական արտադրանքի ինքնարժեքի մասին առաջարկության վոչ լրիվ կատարումը ինքնարժեքի իջեցման յոթառուսալին առաջարդության դիմաց մինչև այժմ՝ 20% և միայն իջեցրած: Սա բավարար հաջողություն չե: Առաջադրած 17 տոկոսի դիմաց աշխատանքի արտադրողականությունը 10 տոկոս և բարձրացել:

Բլուջելի յեկամտային մասն և հաջող գրության: Յեկամունիրի գանձումն առաջին կիսամյակում տարեկան պլանի 48,6 տոկոսն եր կազմում, վոր անցյալ տարվա համապատասխան ժամանակաշրջանի կատարման տոկոսից միիրիչ բարձր ե:

Բայց և այնպես մենք բլուջելի մեծ լարում ենք զգում: Այդ լարման վրա իր ազգեցությունն և արելարդյունաբերության ինքնարժեքի իջեցման անբավարար տեմպը: Լիովին հասկանալի յե, վոր յեթե ինքնարժեքը ծրագրածից ավելի փոքր չափով իջնի, յեթե ներքին կուտակումը, վոր ինքնարժեքի իջեցման ալիք չափի վրա յեր հիմնվում, ավելի փոքր և գուրս գալիս, իսկ աշխատատնքների ծավալը նախկին չափի մնում, ապա անխուսափելիորեն մեծանում և բլուջետային հատկացումներին ու վարկային սիստեմին ուժ տալը: Բլուջետային լարումը մեղմելու համար մենք բարձրացրինք ողու և վոգելից լսմիչքների բաժը: Նույնիսկ տրանսպորտից վերցրինք կամ, ավելի ճիշտ, վերցնում ենք ոգուտը, վոր միքանի տասնակ միլիոն ոռորդու յե հասնում: Մեր տրանսպորտայինները զրան խիստ ընդդիմանում են, բայց և այնպես անհրաժեշտ և այլ անել բացի այլ՝ մենք վորոշում ենք ընդունել արդյունաբերության ու տրանսպորտի ռեսուրսները մորթիվացիայի յենթարկելու մասին, և գրանից այս տարի կստացվի 250 միլիոն ոռորդի: Այստեղ նկատի ունենք տրանսպորտի և արդյունաբերության մեջ կուտակված և «մեռած կապիտալ» դարձած նյութերի ու կիսաֆարբիկատների ավելորդների ռեալիզացիան: Այսպիսի դրությունը վորոշիչ յեղավ նաև տեղական ու հանրապետական բլուջեներին ուժ տալու համար:

Ահա, լնկերներ, թույլ կողմերը, ամենից ավելի սուր անկյունները, վորոնցով բնորոշվում են հնգամյա պլանի կատարման առաջին տարում մեր տնտեսական դրությունը:

Ընդհանրապես և ամբողջությամբ առած, հնգամյակի առաջին տարվա պլանն այս դժվարություններով հանդիրձ կարող ե և պետք ե կատարվի:

Նրա կատարումը թեպետ զգալի դժվարությունների է դեմ առնում, բայց մինչև այժմ հիմնականում հաջող ե գնացել այն ամեն բանում, ինչ վերաբռում է մեր տնտեսական շինարարության վըճռական գործոնին՝ արդյունաբերությանը. նույնպես ել հաջող են անցել արանսպորտի աշխատանքը և պետական բյուջեի կատարումը:

Ներկայիս տնտեսական դրության՝ հացի պակասի հետ կապված թույլ կողմերի զգալի մասը կվերանա, յեթե հաջողի լավ անցկացնել սերմանման գարնացանի կամպանիան և դրանով յեկող տարվա համար կանխորոշել յերկրի հացի հայթալթման բարելավումը, բայց պետք ե պարզ տեսնել վոր զուղափակումը միմիայն այս տարվա գարնացանի կամպանիայի ժամանակ ցանքսերի տարածություններն ընդունակելով, այլ նա, այդ խնդիրը, շատ ավելի լայնածավալ ե: Հնգամյա պլանը նախատեսում է այդ խնդիրի սիստեմատիկ, տարեցարի լուծումը և նրանից ե յելնում, վոր հնգամյակի յերկորդ կեսում մենք պարենավորման գնով վոչ միայն կապահան կապմակերպության նույն սիստեմի ոգնությամբ և աշխատանքի մինչև այժմ գոյություն ունեցած մեթոդներով: Ինձ թվում ե, վոր այդ դժվար թե ճիշտ լիներ: Յերկու խոշորագույն փաստ—հնգամյա պլանի կազմումը և շրջանացման ավարտը—չեն կարող թե մեր կազմակերպչական սիստեմի և թե աշխատանքի մեր մեթոդների վրա չանդրագառնալ: Մինչև այժմ տեղական մարմինները հաճախ իրավացիորեն գանգատվում ենին տնտեսության կառավարման չափազանց կենտրոնացված լինելու մասին, յերբ յերբեմն նույնիսկ հանրապետական կամ այլ մարմինների սահմանադրական ի-

րությունները ցույց են տալիս, պետք ե հատուկ ուշադրություն դարձվի հնգամյա պլանի այս մասի իրականացմանը, վոր, իհարկե, կապված ե հնգամյա ամբողջ պլանի հետ և, մասնավորապես, ծանր ինգուստարիալի, գյուղատնտեսական մեքենաշինության և քիմիական արդյունաբերության զարգացմանն են հենցում:

IV. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉՈԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընկերներ, ոեզլամենտով ինձ տված 45 րոպե ժամանակը լրացավ, ուստի յես իմ կարծիքով. շատ լուրջ մի հարց միայն կշոշափեմ, վոր ամենամերձավոր կապ ունի հնգամյա պլանի հաջող կատարման հետ: Յերբ յես հնգամյա պլանի թե ռայոնական հատածին և թե տնտեսական աշխատանքի զանազան ճյուղերին վերաբերող նյութերն ելի կարդում, մտածում ելի այն մասին, թե՛ ճիշտ կլինի արդյոք, յեթե այդ հնգամյա պլանը մենք անցկացնենք կազմակերպության նույն սիստեմի ոգնությամբ և աշխատանքի մինչև այժմ գոյություն ունեցած մեթոդներով: Ինձ թվում ե, վոր այդ դժվար թե ճիշտ լիներ: Յերկու խոշորագույն փաստ—հնգամյա պլանի կազմումը և շրջանացման ավարտը—չեն կարող թե մեր կազմակերպչական սիստեմի և թե աշխատանքի մեր մեթոդների վրա չանդրագառնալ: Մինչև այժմ տեղական մարմինները հաճախ իրավացիորեն գանգատվում ենին տնտեսության կառավարման չափազանց կենտրոնացված լինելու մասին, յերբ յերբեմն նույնիսկ հանրապետական կամ այլ մարմինների սահմանադրական ի-

րավունքներն ելին շոշափվում: Մենք մինչև այժմ իսկապես մեղանչում եյինք նրանով, վոր 140 միլիոն մարդուց ավելի բնակչություն և ահագին հողամաս ունեցող հսկայական պետության մեջ վարչական-ուղերատիվ աշխատանքը կենտրոնացնում ելինք «աշտարակում», կենտրոնական սակավաթիվ մարմինների ձեռքում: Այդ մարմինների ղեկավարների փոքր թիվը ձգում եր իր ձեռքը հավաքել վարչական-ուղերատիվ բնութիւ բազմաքանակ աշխատանք: Ինձ թվում ե, վոր հնգամյա պլանը հաստատելուց և մարզային մարմիններ ստեղծելուց հետո կարելի կլինի մեծ փոփխություններ մտցնել տնտեսության կառավարման սիստեմի մեջ: Ոպերատիվ աշխատանքի բնագավառում ցենտրալիզմը չափազանց աճել ե այն պատճառով, վոր տեղական կազմակերպությունները, աշխատանքների հեռանկարային պլան չունենալով, բնականաբար միջոցները կարող ելին այնպիսի աշխատանքների վրա ծախսել, վորոնք ամբողջ տնտեսության ընդհանուր շահերի տեսակետից առաջնահերթ չեն: Յես կարող եմ ձեզ համար բազմաթիվ որինակներ բերել, վոր բանն իսկապես վոր այդպիս եր: Այդպիսի դեպքեր նույնիսկ Մոսկվայում են հայտնի, որինակ՝ Մոսկվայում կաշեգործարան կառուցելը, մինչդեռ ուրիշ ռայոններում յեղած կաշեգործարանները հումքի պակասության պատճառով չելին կարողանում լիովին բեռնափորվել: Յեկ կամ այնպիսի որինակներ, յերբ քիչ ե մնում ամեն մի քաղաք ձգտի իր կարուծելի ֆարբիկան ունենալու: Այդ բոլորն, անշուշտ, միջոցներ ծախսել են պահանջում, վորոնք պետք ե համապետական տեսակետով շինարարության

ավելի կարևոր առարկաների վրա դառնալին: Այժմ մենք մանրազնին մշակած հնգամյա պլան ունենք, բավականաչափ սպառիչ ցուցմունքներով, թե վորտեղ, յերբ և ինչ պետք ե շինել: Այդ հնարավորություն և տալիս թուլացնելու ոպերատիվ ղեկավարության կենտրոնացումը և ուժեղացնելու հնգամյա պլանով նախատեսված աշխատանքների կատարման գործում տեղական մարմինների իրավունքները: Պլանային ղեկավարությունը և ընդհանուր կարգավորումը պետք ե կենտրոնում մնա, պետք ե բարելաւվիր և ուժեղացվի, ոպերատիվ աշխատանքն զգալի չափով պետք ե տեղերին հանձնվի:

Հնգամյա պլանը նյութական ահագին արժեքների հսկայական տեղաշարժում ե կանխատեսում: Նա սոցիալ-դասակարգավին տեսակետով խոշոր առաջընթացություններ ե ծրագրում, վոր սոցիալիստական տարրերի հսկայական ուժեղացմամբ են արտահայտվում: Նա թե քաղաքում և թե գյուղում մեր վող տնտեսության տեխնիկական վերակազմավորման բնագավառում հեղափոխական հսկայական պրոցես ե նըշանակում: Ինձ թվում ե, վոր սխալ կլիներ՝ մտածել թե ամբողջ աշխատանքը կարելի կլինի կատարել, յեթե մինչև այժմ ստեղծվող ապահարատը մնա նույն կացությամբ և նույն սեփողներով աշխատի, ինչով վոր առաջ եր աշխատում:

* *

Թույլ տվեք սրանով վերջացնել իմ հաղորդանքը, վորին յես աշխատում եյի ժողովրդական տնտեսության գարգացման հնգամյա պլանի հարցի ներա-

ծության բնուլիթ տալ: Հնգամյա պլանի իր մասին ձեզ կղեկուցեն ըլք. Կրժիժանովսկին և Կույրիշենը: Յեղ- րափակելով յես նույն միտքը կշեշտեմ, վորով իմ հա- ղորդանքն սկսեցի: Հավատացած եմ, վոր հնգամյա պլանը վոչ միայն անտեսական աշխատանքի, այլ ընդ- հանրապես կուսակցության ամբողջ աշխատանքի հա- մար հսկայական լիցք ե տալիս: Այդ պլանը լիովին իրագործելի յե այն ուժերը զորահավաքելու հնարա- վորության տեսակետից, վորոնք հարկավոր են նրա կատարման համար. և վորոնք սենք կարող ենք յեր- կրի ներսում գտնել: Նա իրագործելի յե նույնպես բոլոր ուրիշ կողմերով, յեթե միայն ճիգ ու ջանքի հսկայական լարում լինի, և ամենալայն հավաքի լեն- թարկվեն պրոլետարիատի ուժերը, տեխնիկական կադ- րերը և խորհրդատին ամբողջ ինտելիգենցիան, հա- վաքի լենթարկվեն գյուղացիության չքավորամիջակ մասնաները, պրոլետարիատի ղեկավարությամբ հա- մախմբվեն կուլակի դեմ պայքարելու համար:

Մեր շինարարությունն ամբողջ ժամանակ գնա- ցել և գնում ե գասակարգակին պայքարի պայմաննե- րում, վորը տփալ փուլում սուր ձեւը և ընդունում: Հնգամյա պլանը պրոլետարիատի մեծ գրոհի պլանն ե քաղաքի ու գյուղի բուրժուական դասակարգերի մնա- ցորդների վրա: Միաժամանակ նա գյուղացիական չքա- վորամիջակ անտեսությունները կոռպերացման ու կոլլեկտիվացման միջոցով իսկակես սոցիալիստական ու լայնորեն վերաշինել սկսելու պլանն ե: Հնգամյա պլանի մեջ ամփոփված նյութական ու կազմակերպ- չական նախադրյալներն այն հեռանկարներն են, վոր այս պլանը բաց ե անում բանվոր ու գյուղացի մաս-

սաների առաջ. այդ ամենը պետք ե բանվորներին ու գյուղացիներին սոցիալիստական շինարարության ձա- նապարհին հանդիպող դժվարությունների դեմ կռվե- լու համար կազմակերպելու կարևորագույն գործոն լի- նի: Միաժամանակ դա պետք ե այդ դժվարություն- ների հանգեց բանվոր դասակարգի և կուսակցության շարքերը սողոսկող նյարդակին և նույնիսկ խուճապա- ցին արամադրությունները վոչնչացնի: Հնգամյա պլա- նը, վոր մեր կուսակցության նախորդ փայլուն աշ- խատանքի արգլունքն ե, խորհուրդների հանրապե- տության և բանվոր դասակարգի՝ սոցիալիստական հասարակության համար մղած պայքարի զարգացման լայն հեռանկարն ե գծում և պետք ե բազա դառնա- կուսակցության և բանվոր դասակարգի բոլոր ուժերը նոր, անդասակարգ, սոցիալիստական հասարակու- թյուն կասուցելու ձանապարհին համախմբելու հա- մար:

Գ. ԱՐԺԻԺԱՆՈՎՍԿՈՒ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ

Ընկերներ, ամենախորին պատասխանատվության զգացմունք համակեց մեղ, պլանալին աշխատավորներին, յերբ վերջացնում ելինք հեռանկարալին հընդամյա պլանի աշխատանքները, վոչ թե մեկ տարվա, այլ մի ամբողջ շարք տարիների աշխատանքների հանրագումարներն ելինք հանում: Ընկերներ, բոլորովին առանձնահատուկ հանգամանքներ են դրա պատճառը:

Յեկող հնգամյակն անցած հնգամյակից սուր տարբերություն ունի:

Դա մեր Միության կյանքում վճռական բեկում է: Ակամա հիշվում ե այն ժամանակը, յերբ առաջին անգամ, Հոկտեմբերյան հեղափոխության շրջանը խաղաղ շրջանից զատող սահմանում, ինձ վիճակից յելույթ ունենալ ելի հեռանկարալին պլանով, ելեկտրոիդիկացիալի հայտնի պլանով:

Այն ժամանակ նույնպես սուր հակազրություն կար այդ պլանի շինարարական գծերի, թե ինձ և թե այդ պլանի վրա աշխատող ամբողջ խմբակին համակող ամենախորին համոզմունքի և այն միջավայրի միջև, վորի մեջ գտնվում եր հետպատերազմյան ավերմունքի վերջին աստիճաններին հասած յերկիրը: Դուք զիտեք, թե ինչպես ընդունվեց այդ զեկուցումը, ինչպես այն յերևակայական պլան անվանեցին, ինչպես ելեկտրոիդիկացիան ելեկտրոֆիկցիա դարձրին: Յես

կարծում եմ, վոր միայն կուսակցության ոժանդակությունը, այդ կուսակցության հանճարեղ զեկալիքի հսկայական ոժանդակությունն ոգնեցին բեկելու այդպիսի արամագրությունը, ոգնեցին, հակառակ այն ավերվածության, վոր դեռևս մի շարք տարիների ընթացքում պետք ե կախված լիներ մեր գլխին, ոգնեցին այդ պլանը հզորապես կենսագործելու:

Ընկերներ, դուք գիտեք, վոր թեպետ մենք զեռւկ չենք ավարտել մեր Միության ելեկտրոիդիկացիալի աշխատանքը, բայց և այնպես վոչ սի կասկած չկա, վոր այդ հեռանկարալին առաջին պլանի նախատեսած ժամկետներին, ընդամենը միքանի տարի հետո, մենք վոչ միայն կիրականացնենք նրա նախասահմանումները, այլև շինարարությունն ավելի հեռուն և ավելի խորը կտանենք:

Հենց այդպես ել այժմ, ընկերներ: Նոր դարաշրջանի սահմանին, այն սահմանորոշ գծում, յերբ մենք մեր տնտեսության վերականգնման այնպիսի մակարդակություն անցել, վորն արդեն զգալիորեն գերազանցել ե մինչպատերազմյան մակարդակին, մեր առաջ բոլորովին առանձնահատուկ խնդիրներ են բացվում: Նրանց առանձնահատկությունը նրանումն ե, վոր մենք այժմ վորակապես բոլորովին այլ նպատակներ ենք գնում: Քան այն ժամանակ, յերբ մենք անցյալ հնգամյակում կարգի ելինք զցում այդ տնտեսությունը՝ միայն մի բան աչքի առաջ ունենալով—ընդհանուր քաղաքական մակարդակը վորքան կարելի յե շուտ բարձրացնել այնքան, վոր տնտեսական ամբողջ մեքենան փոքր ինչ սահուն բանի: Դուք զիտեք, վոր այդ անցյալ ժամանակաշրջանը միայն պայմանաբար կարելի յե վերա-

կանգնման շրջան անվանել, վոր մենք այդ վերականգնման շրջանի ընթացքից համոզվեցինք, վոր տընտեսության նախկին կազմակերպությունը չի բավարում պրոցեսարիատի դիկտատուրայի իշխանության տակ առաջադիմող յերկրի նոր պահանջներին: Սակայն վերականգնման շրջանի վերջին տարիներին միայն հատուկ պարզությամբ հայտնի յեղափ, վոր վերակազմավորման աճող կարիքները մեր առաջ կանգնած են իբրև կյանքի ու ժահու որենք: Յեթե մենք ասում ենք, թե պետք է հասնենք և առաջ անցնել կարող ենք միայն մի ինչ վոր առաջնահատուկ ուղիղվ, միայն ինչ-վոր առանձնահատուկ միջոցներով, վորովհետև մեզ: շրջապատող այդ յերկրներն ուրիշ միջոցներով մեզ հավասար լինելով, սեղնից ավելի զորեղ են զինված անցյալի ժառանգությունով, և յոթե մենք գնայինք նույն ճանապարհով, ինչը վոր նրանք են գնում, անհույս կլիներ բանք: Դուք զիտեք, վոր «հասնել և առաջ անցնել» բանաձեն ըստ գործի եյության յերկու աշխարհի պայքարի բանաձեն եւ այդ աշխարհներից մեկն ասում են ին աշխարհին՝ ճամպից յել զալիս եմ վրադ և տեղդ եմ բռնելու, իսկ ին աշխարհը համոզված ե, վոր տակավին ամեն բան չի կորել, և մեր զրոհին զուգահեռ մեզ կատաղի զիմապրություն ե ցույց տալու:

Ընկերներ, գուցե դուք զիտեք, վոր շատ ժամանակ չի անցել, ինչ յես հատուկ գրքուկով վերականգնման շրջանի տաս տարվա հանրագումարներն եյի տալիս: Յես մի շարք փաստերով և տվյալներով ցույց տվի, վոր վերականգնման շրջանին կհաջորդի վերա-

կազմավորման շրջանը, վոր մենք սոցիալիստական նոր գրոհի նախորեն ենք ապրում: Մեր շինարարության պրոցեսսն անընդհատ բեկման, անընդհատ պալքարի, անտեսությունը կառուցվող սոցիալիզմի կաքարի, անտեսությունը կառուցվող սոցիալիզմի կաքարի, անընդհատ հարմարեցնելու պրոցեսս և Ալպիսի շինարարությունն անխուսափելորեն պայքարի պրոցեսսում ե կատարվում, և յեթե, ընկերներ, այս պահուն գուք լսում եք, թե այդ աշխատանքների մասշտաբն ահազին ե, թե մենք այդ քանակական առաջարկություններն իրականացնելիս նույնիսկ և արտաքուստ անցնում ենք առաջավոր ինգուստրիալ պետությունների կարգը, այնուամենայնիվ գլխավորն այն չե, վոր, ասենք, մենք անցյալ հնգամյակում կապիտալ շինարարության մեջ դրել ենք 25 միլիարդ, իսկ այժմ ծրագրում ենք 64 միլիարդ, — գլխավորն այն ե, վոր յեթե մենք այդ 64 միլիարդն իսկապես ծախսենք սոցիալիստական վերակառուցման այդ ծրագրի գծով, դրանով ամբողջ աշխարհին կապացուցենք այդ կառուցվող սոցիալիստական սխտեմի վերազնց լինելը: Վոչ տեսականում, այլ իրականության մեջ կիրացնենք ստեղծագործության այնպիսի պրոլետարական ցուցադրումը, վորին այլ մեկնություն ուալ չի կարելի, վորը վորեե խոսքերից ավելի լավ հենց գործով կվկայի, թե կենինի մտքերն ուրեն տանում աշխարհի աշխատավորներին: Ահա թե ինչու, ընկերներ, մենք այս պլանն անվանում ենք մեծ աշխատանքների պլան, ահա թե ինչու մենք յերկրին կոչ ենք անում բոլոր ուժերը զրոհավաքել այս պլանն իրացնելու համար, ահա թե ինչու մենք նրան պատմական ալգեան մեծ նշանակություն ենք տալիս:

Յերբ մենք մոտեցանք անցյալի շինարարական ծրագրի հանրագումարներին, սոցիալիստական նոր գրոհի անհրաժեշտությունը նրանով եր բացառվում, վոր իսկույն յերևան յեկավ հին, հենց նոր վերականգնած տնտեսական առաջադրության չհարմարեցրած լինելը նոր պահանջներին: Դուք գիտեք, վոր 1927/28 թ. ժողովրդական յեկամուաը 1913 թվի մակարդակին գերազանցում եր, կոպիտ ասած՝ 16°/օ-ով: Բայց հենց յերկու գիծ—սև մետաղի գիծը և հատիկային արտադրանքի գիծը—շատ ու շատ ցած եյին 1913 թվի այդ մակարդակից:

Սա ինչի՞ մասին ե խոսում: Խոսում ե այն մասին, վոր ինչպիս արդյունաբերության շինարարության բնագավառում, այնպիս ել զյուղատնտեսության շինարարության բնագավառում հին ու ելսերը պետքական չեն: Ընկերներ, չե՞ վոր գուք գիտեք, վոր մինչպատերազմյան Ռուսաստանը հենց մետաղի գծով հատկապիս հետամիաց յերկիր եր, և այդ պատահական բան չեր: Դուք գիտեք, վոր նա ոտարերկրյա կապիտալի ձեռքերում եր գտնվում, վոր հենց այդ հետամնացությունն ոտարերկրյա կապիտալին ոգնում եր նրան շահագործման շղթաներում պահելու: Դյուլատնտեսության բանն ել չեր կարող ուրիշ կերպ լինել: Տարերքից կախված գյուղատնտեսությունը գյուղատնտեսական մանր և մանրագույն տիպին եր հասցրած, իսկ դուք գիտեք, վոր այն հասարակության մեջ, վորտեղ դասակարգերի հակամարտություն կա, զյուղացիական տարերքի հենց այդ կոտորակումը նրան ճորտական խղճալի գոյության եր մատնում: Հենց այդ յերկու ուղղությունների մեջ եր գտնվում հին պետական մեխանիզմի

յուրահատուկ շարժելու կատարելու գաղտնիքը: Յեվ այժմ, յերբ մենք հասել ենք արդեն ընդհանրապես և ամբողջությամբ տնտեսական մինչպատերազմյան մակարդակին, այդ յերկու ուղղություններում պետք ե կարգակին, այդ յերկու ուղղությունների հետ: Ընդհարվենք ահապին անհամաշափությունների հետ: Մենք կարող ենք և պետք ե լրջմիտ վերլուծման լինթարկենք զրանք, վորպեսզի նշենք նրանց վերացման արմատական ուղղիները: Մենք պետք ե խոհուն վերլուծման լինթարկենք նաև դասակարգակին ուժիշխատության սիրությունը յերկրի մեջ, մեզ համար այնպիսի դաշնակիցներ փնտուելով վորոնք մեզ ոգնելին քաղաքական ճակատում անցյալի տարերքին ապագայի պլանը հզորապես հակադրելու:

Ընկերներ, անտեսական բեկման ժամանակաշրջանում սիրտ անել պլանով յելնել հինգ տարի առաջ, շատ գժվար գործ ե:

Մեզ վրա ընկնող պատասխանատվությունն ամենքիդ համար պարզ ե: Մենք աշխատել ենք մեր ուժերի ներած ամեն ինչ անել, վորպեսզի այդ վոչ թե առանձին անհատների, այլ ինչքան կարելի չե ընդունակ կոլլեկտիվի պատասխանատվություն լինի: Յեվ պետք ե ասել, վոր այս անգամ ձեզ բաժանված փաստաթղթերի մեջ դուք կարդում եք ամենաընդարձակ կոլլեկտիվի, վոչ միայն պլանային աշխատավորների, այլև մեր տնտեսական ամենագլխավոր գերատեսչությունների աշխատավորների կոլլեկտիվի աշխատավորների, Դուք այստեղ ունեք նույնպես այնպիսի աշխատավորների աշխատությունների հանրագումարները, վորոնք գիտական մոքի ներկայուցուցիչներ են վորովհետև այս անգամին մենք աշխատեցինք ամբողջ

մի շարք կոնֆերանսների գրավել այն ամենը, ինչ կարմ ժամկետներում կարող ելինք մեր տերկրի գիտական աշխատավորների միջից գտնել ու ժողովել: Ինձ թվում ե, վոր այս աշխատանքը գիտական իմաստով բավականաշափ ամուր ե կերպած: Մենք մեր տրամադրության տակ յեղած գիտական ուժերը չենք գերազնահատել: Բայց կարծում ենք, վոր իմացականության այն զենքը, վոր մենք, մարդքսիստներս ունենք, մեզ թույլատրում ե գիտելիքների շտեմարաններից առնել ու գործի դնել այն, ինչ չեն կարող գործի դնել շատ հմուտ մասնագետներ, բայց ուրիշ աշխարհայացքի, մտքի այլ ունակությունների աեր մարդիկ:

Յերկրի տեխնիկական վերակազմավորումը, վորի մասին առաջին հերթին հարկ եր լինում խորհել պետք ե այնպես ծրագրվեր, վորպեսզի մենք ամենքս լիովին հավատացած լինելինք, թե ոգուազործել ենք գիտական բոլոր մատչելի նվաճումները: Սակայն չկա արդյոք այստեղ վորեն հատուկ իշխող բարձունք, վորին մենք պետք ե հատուկ աշալընությամբ հետեւնք մեր պլանում: Այսպիսի բարձունքը եներգիայով աշխատավորների գինված լինելն ե, եներգետիկ տնտեսությունը իր ամբողջ զանգվածով:

Դուք գիտեք, վոր կուսակցությունը սահմանել ե այդ շինարարության վորոշ նշանաձողերը, զուք գիտեք, վոր կուսակցության X^o համագումարը տվել ե հեռանկարային հնդամքա պլանի շինարարական գլխավոր գծերի գերազանց մշակած հրահանքը: Դուք գիտեք, վոր մի ամրող շարք խորհրդակցություններ, գերատեսչություններ ու հիմնարկներով անցած մեր հնդամքակի քննադատության մեջ ամենից առաջ պետք եր

ուշադրություն դարձնել զործի այս կողմին: Նրա շինարական գիծը համապատասխանում ե արդյոք մեր կուսակցական ամբողջ փորձով մշակած ցուցմունքներին և մասնավորապես նրան, ինչ վորոշել ելին կուսակցական ԽV համագումարը և նրան հաջորդած պլենումը: Առաջինը, ինչ պետք եր նշել այս պլանի հիմնական բույլը, ինչ զետք եր նշել այն ե, վոր պլանն ամբոլոր գծերը ձեզ զեկուցելիս, այն ե, վոր պլանն արողջությամբ համապատասխանում ե այդ հիմնական շինարարական գծերին:

Դուք գիտեք, վոր մենք մեր տնտեսության շինարարության մեջ գնում ենք յերկրի հետագա ինդուստրիացման ուղիներով, տնտեսության հետագա հանրայնացման ուղիներով: Դուք գիտեք, վոր ինդուստրիացման բանաձևն առաջին շարքն ե զուրս բերում մետաղի, վառելանյութի և հիմնական քիմիայի յուրատեսակ միամնականությունը, այն, ինչ մենք ծանր ինդուստրիա յենք անվանում: Դուք գիտեք, վոր մենք, մյուս կողմից, ինդուստրիալ զարգացման յերթը մի այնպիսի նշանով ենք գնահատման դնում, ինչպիսին մեքենայական ինդուստրիալ զարգացումն է: Հետևաբար դուք, ուսումնասիրելով և պաշտպանության տակ առնելով այս պլանը, պետք ե հետեւեք, թե ինչ կերպ են նրանում իրականում ծանր ինդուստրիալ շինարարությունը, աշխատավորների մեքենայական զինմանը արվող հետագա ոգնությունը: Միքանի թիվ միայն բավական են՝ ձեր առաջ գկայելու համար, թե այդ գիծն ամրապինդ մարմնացումն ե գտել: Ըստ պլանի արդյունաբերության բոլոր կապիտալ ներդրություններից ծրագրվում ե 78%/₀ ծանր ինդուստրիալ միայն 22%/₀ թեթև ինդուստրիալ համար:

Մեքենաշինությունն այնպես ե առաջ քաշած, վորը ընդարձակ մեքենաշինությունը մոտավորապես յեռապատկում ե, իսկ մասնավորապես գյուղատնտեսականը քառապատկվում:

Ընկերներ, իզուր չեր, վոր մենք 1920 թվին լերկրի տեխնիկական բարենորոգման, նրան տեխնիկական նոր բազայի վրա գնելու մասին խոսում ելինք ինչպես ելեկտրիֆիկացիայի պլանի մասին։ Հետապատերազմյան տեխնիկայի հետագա վերլուծումը ցույց է տալիս, վոր Խ դարում մեքենաների տիրապետությունն ինքը նրանով ե աչքի ընկնում, վոր մեքենայի մեջ ևս մենք նորից սկսեցինք գնահատել նրա այն մասը, վորը շարժում ե ծնում, մեքենան՝ իրեն մեքենա շարժիչ։ Այժմ վոչվաք չի վիճում այն մասին, թե համախարհակին քաղաքականությունը արտացոլումն ե բնության այնպիսի ռեսուլտաներին տիրելու պարքարի, վորոնք եներգետիկ ռեսուլտաներ են։ Ելեկտրիֆիկացիան եներգետիկայի միայն մի ողակն ե, նրա ամենից ավելի կատարյալ ողակը։ Այն հանգամանքը, վոր ելեկտրական տնտեսությունն ե գալիո փոխարինելու շոգե-ելեկտրական տնտեսությանը, մեր, աչքի առաջ ավելի ու ավելի պարզ այն և հաստատում, ինչ գիտական սոցիալիզմի առաջին ռւսուցիչներից մեկը՝ Թ. Ենգելը գեռս 80-ական թվերին նշել եր։ Նոր եներգետիկայի վերելքը, հսկայական մեքենաների, 200—300 ձիու ուժի զորություն ունեցող շարժիչների ստեղծումը, վորոնք ըստ գործի երթյան լերկաթի ու պողպատի մեջ ամբողջ տարերք են մարմացնում, — ահա տնտեսության հենց այդ ողակն ե վճռող հանդիսանում, վորովհանել հենց այդ ուղղությամբ են

հասունանում նյութական այն ուժերը, վորոնց սուրծայը կապիտալիստական կարգի դեմք ուղղված։ Դեռևս ենդելու նշել ե այն հանգստանքը, վոր ելեկտրոներուգիան իր հարլուրավոր վերստերի հազորդումներով՝ կվոչնչացնի տեղական կապերը, վերջ կտա քաղաքի ու գյուղի հակադրությանը։ Ազդ հիմունքով նյութական արտադրանքն այնպես կրարձրանա, վոր արտագրության միջոցների նախկին մասնավոր սեփականատիրությունը բացարձակ անհեթեթյուն կդառնա։ Յեզ ահա այն հանգամանքը, վոր նոր եներգետիկայի այդ ուժերն ուղղված են կապիտալիստական հասարակության դեմ, այնտեղն ե հասցնում, վոր կապիտալիստական Արևմուտքում պլանային ելեկտրիֆիկացիա չի կարող կատարվել, ուստի և զա այն իշխող բարձունքներ, վորի մարմանավորումը մեր տնտեսության մեջ մեզ անհամեմատ առավելություններ ե տալիս։

Ահա թե ինչու հնգամյա պլանը ծավալելիս ծանը ինդուստրիալի բարձրացման, մեքենաների արտադրության բարձրացման կողքին պետք ե հատկապես հետեւել, թե եներգետիկ ճակատում, ելեկտրիֆիկացիայի պլանի իրացման մեջ մենք ինչ չափով առաջ կերթանք։ Այստեղ «հասնելու և առաջ անցնելու» պայմանները մեզ համար հատկապես բարեհաջող են դասավորվում, վորովհետև ակտեղ, այդ ուղղությամբ, նյութական ուժերը ծավալուն ճակատով մեր կողմն են և ուղղված են հին աշխարհի ուժերի դեմ։

Գործի այս կողմը — թե արդյունաբերության, թե տրանսպորտի և թե գյուղատնտեսության դիտումը եներգետիկայի տեսանկունով — պլանի գիտական առանցքն եր, այդ պայմանը զանց չանելն ել հենց մեզ

թույլ ե տալիս պլանը տեխնիկա-տնտեսական կողմից
իսկապես գիտականորեն հիմնավորված անվանել:

Սակայն միայն այդ քիչ եւ Յեթե պլանը չի ա-
ճել տնտեսական փաստացի գործնականից, յեթև մեր
նշած շինարարական գիծը տնտեսական կյանքի իրա-
կան ընթացքին չի համապատասխանում, այդ ժամա-
նակ պլանը կյանքից կտրված մի պատկեր կլինի, ո-
դում կախված կմնա:

Պլանը վոչ միայն գիտական պլան պիտի լինի.
նա զիալեկտիկորեն պետք է աճի տնտեսական իրա-
կանությունից: Կարծում եմ, վոր այս յերկրորդ խընդ-
րին ել բավականաչափ ուշադիր յեղել ենք: Հենց
այդ յերկու մոմենտներն են, վոր մեր հնգամյա պլա-
նին հենց իր քննադատման առաջին ետապում այդ-
քան արագահաս հաջողություն ապահովեցին:

Հնգամյակի առթիվ տեղի ունեցած լայնածա-
վալ ընդդիմախոսություններով չափազանց շատ ուղ-
ղումներ եին առաջարկվում, բայց այդ ուղղումներին
ամեն անգամ վերապահությամբ ավելացնում եյին,
թե դրանք մասնավորումներ են, վոր պլանն իրեւ
սիստեմ անքակտելի յե:

Ես հնարավորություն չունեմ պլանի բոլոր գը-
ծերով անցնելու: Դրա համար մի ամբողջ շարք զե-
կուցումներ են հարկավոր և վոչ այնպիսի ուշ ժամա-
նակ, ինչպիսին հիմա յե: Շատ դժվար է թվիրն առանց
գիտագրամներով պատկերազարդելու պահել մտքումը:
Այստեղ դահլճում դիտագրամներ կկախվեն, ձեզ բա-
ժանուծ նյութերում դուք թվերի ամբողջ սյուներ
կգտնեք, բայց յես, այնուամենալիք, կուզեի միքանի
թվեր, թվերի մի փոքրիկ քանակություն ձեր գիտա-

կցության մեջ զցել վորպեսդի հիշեք, թե այստեղ թը-
վերի այս ծովում վորն են այն թվերը, վորոնք պետք
ե յուրաքանչյուր աշխատավոր իմանա, վորոնց կեն-
սագործումը դուք պետք ե պաշտպանեք:

Յեթե ասելու լինեմ, թե մենք ծրագրում ենք
ելեկտրական եներգիայի մշակումը բարձրացնել 5 մի-
լիարդ կլվ-ժամից մինչև 22 միլիարդ կլվ-ժամ, — սա
հենց կրնութագրի մեր եներգետիկ ողակի շինարարու-
թյան հսկայական վերելքը: Սա հենց մեզ ցույց կտա
այն տեմպերը, վորով մենք գնում ենք տնտեսական
այդ կարեւոր ուղղությամբ:

Ու մետաղի գծով ծրագրել ենք այնպես գնալ, վոր
10 միլիոն մետաղի մշակման հասնենք և այդպիսով
այդ ցուցանիշով ել մտնենք առաջավոր ինդուստրիալ
յերկրների շարքը: Մեքենաշինության յեռապատկու-
մից և քառապատկումից յերկում ե, վոր մենք այս
հնգամյակում հսկայական քայլ ենք անում կապիտա-
լիստական աշխարհից մեր կախումը վոչնչացնելու
համար: Յեթե զրա հետ մեկտեղ շեշտեմ, վոր քիմիա-
կան պարարտիչների գործում ծրագրում ենք 1927/28
թվի ինչ-վոր 175 հազար տոննից քիմիական պարար-
տիչների արտադրությունը բարձրացնել մինչև 8—9
միլիոն տոնն, այդ ցուց և տալիս, վոր մենք մեր
արդյունաբերության ամենահետամուց ողակն ենք
բարձրացնում՝ քիմիան, և այդ քիմիայի միջոցներն
ամենից առաջ զցում ենք վողջ ժողովրդական
տնտեսության ամենահեղ տեղը՝ մեր գյուղատնտե-
սության մեջ: Սա հենց այնպիսի մի տեմպ ե, այնպի-
սի թափ, վորն աշխարհի յերեսին վոչ մի յերկիր տա-
կավին չի իրացըրել:

Գյուղատնտեսական մեքենաների արտադրության քառապատկումը, նրա տարեկան արժեքը 610 միլիոն ռուբլու հասցնելը, քիմիացման մակարդակի այլպիսի բարձրացումը, 50—60 հազար հատի հասնող տրակտորներ պատրաստելը (տրակտորի յերկու նոր գործարան),—այս բոլորը պարզ պատճեռում ե մեր ինդուստրիալի աճող ուժերը, վոր ավելի ու ավելի ակներևությամբ դառնում ե տնտեսական վորոշող նկարունք:

Արդյունաբերության մեջ այս ծրագրի իրագործմանն ուղեկցելու իւ ինքնարժեքի 35-տոկոսային իջնցումն ու աշխատանքի արտադրողականության մոտավորակեա կրկնապատկումը, Զցանկանալով ը. Կուլբիշևի գեկուցումը կանխել, կարող եմ սրանով սահմանափակել:

Գյուղատնտեսության մասին: Գյուղատնտեսության մեջ ծրագրում ենք ցանքերի տարածության առնվազն 22 տոկոսային մեծացում և հնգամյակի ընթացքում բերքատվության բարձրացում առնվազն 35 տոկոսով: Արդյունաբերության և գյուղատնտեսության կապակցությունն այնքան ամուր ե ապահոված, վոր ուշադրության կենտրոն պետք ե դարձընել կազմակերպչական հարցերը: Բայց մեքենացման և քիմիացման բոլոր բարիքներն իրականացնել հնարավոր ե միայն այն դեպքում, յեթէ մեզ հաջողվի հնգամյակի ընթացքում չքավորա-միջակ գյուղացիության առնվազն 20 միլիոն մասսան հետզետե և հետեղականորեն ներգրավել գյուղատնտեսության հանրայնացված սոցիալիստական հատվածի մեջ, խորհնատեսություններով ու կոլտնտեսություններով ընդ-

գրկել առնվազն 27 միլիոն հեկտար, այսինքն Միության վողջ ցանքսի տարածության 18 տոկոսից վոչ պակաս: Միայն այդ մոմենտները մեզ կոգնեն իրականացնելու այն, ինչ մենք անվանում ենք գյուղատնտեսության լիակատար հեղափոխականացում:

Տրանսպորտի բնագավառում նպատակասահմանումն այն ե, վոր մենք, հրաժարվելով տնտեսական խոր վերակազմավորումից, այնուամենալինիվ բազմակողմանի ռացիոնալացնում ենք տրանսպորտի գոյություն ունեցող մեխանիզմը, վերագնահատելով նրա բոլոր մասերը, այնպես վոր վիրջիվերջո բանվորների միևնույն անձնակազմի ունինալով, մենք տրանսպորտի արտադրանքի ինքնարժեքը նվազեցնում ենք մոտավորապես 25—30 տոկոսով, իսկ տրանսպորտի աշխատանքը մեծացնում 1,8 անգամ:

Մեր շինարարության մեջ մեր դրած միջոցների ահազին քանակը նրա չափերի մասին ե վկայում: Յես կաշիստեմ ուրիշ թվերով միքել պատկերել այդ ամբողջ շինարարության մասշտաբը: Յեթե առանձնացնենք հատուկ շինարարական գործը և գնահատենք 1926/27 թ. գներով, առանց հիմնական վերանորոգության կտանանք 37 միլիարդ ռուբլի: Բայց մենք ընթանում ենք շինարարության ինքնարժեքի իջեցման ուղիով և այդպիսով հույս ունենք շինարարիչեցման ուղիով և այդպիսով հույս ունենք շինարարության հետացման միջոցով 25 միլիարդով սահմանափակվել: Յեթե դուք պատկերացնեք, թե իջեցման այդ 32 տոկոսը (միջին հաշվով) համապատասխանում են 12 միլիարդ ռուբլու իջեցման, ապա դուրս կգա, վոր շինարարության արժեքի իջեցման լուրաքանչյուր տոկոս համապատասխանում ե մոտավորապես չյուր

400 միլիոն ռուբլի տնտեսելուն: Ահա թե շինարարական առաջարկությունների ինչ մասշտաբ ունի այսպլանը:

Ի՞նչ ծրագիր ունի շինանյութերի արդյունաբերությունը, Մենք յելակետ կունենանք այդ ուղղությամբ մեր ցավերի տեսակետը: Դուք գիտեք, վոր մինք այժմ արտադրում ենք՝ ցեմենտ մոտ 12 միլիոն տակառ, աղյուս 1,8 միլիարդ հատ, անտառանյութեր 11,6 միլիոն խորանարդ մետր: Իսկ պետք է արտադրությունը մեծացնենք՝ ցեմենտինը մինչև 40 միլիոն տակառ, աղյուսինը մինչև 9 միլիարդ հատ, շինանյութերինը՝ մինչև 42 միլիոն խորանարդ մետր:

Իրագործելի՞ յե արդյոք այդ ծրագիրը, մեզ համար նա արդյոք բացարկի դժվարություններ ունի: Մենք մանրակրկիտ զբաղվել ենք այդ հարցով և յեկել այն յեղբակացության, վոր գլուխ կհանենք նըրանից, յեթե միքիչ ջանք գործ դնենք այդ ճակատում, յեթե կարողանանք այստեղ ոգտագործել աշխարհի տեխնիկական փորձը, յեթե կարողանանք հըրաժարվել անցյալի տնախագործ շինարարությունից, շինանյութերի արդյունաբերության միջ յեղած ցըրված ճակատից: Անձրաժեշտ ե գործի դնել տեխնիկաների նոր կաղըեր, բանվորների նոր կաղըեր, շինարար բանվորների բանակը մեծանալու յե հսկայալիս՝ 126-ից մինչև 200 տոկոսով, և մենք նրանց պետք ե այնպես վերափորակավորենք, վոր ել ժամանակավորապես բանվոր գարձող գլուղացիներ չլինեն, վորոնք տնայնագործական հին մեթոդներով են համակված, այլ անցնեն աշխատանքի նոր դպրոցով, տեխնիկա-

կան նոր լնտելություններ ձեռք բերեն, անցնեն ԱԿԻ (ԱՀԴ) դպրոցը, հենց շինարարության միջ անցնեն գործնականի մեխանիկ-կոնվեյեր դպրոցը: Մեր պլանին համաձայն շինարարական ամբողջ գործը պետք ե սովորական ինդուստրիալ ճյուղի բնույթ ստանա, նրանում հետզհետև և հետևողականորեն պետք ե կը ճատկի սեղոնախությունը:

Ելի ինչնոր կարելի յեր պնդել հնդամյակի ռեալ լինելը, նրա կապը իրականության դիալեկտիկայի հետ:

Ամենից առաջ վերցնում եմ ինքնարժեքի 35 տոկոսային իջեցումը: Նրանով են պայմանագործված արդյունաբերության ֆինանսավորման հնարագործությունները: Ֆինանսական պլանի միջ ծարը ծայրին հասցնելը հնարագործ և այն պայմանով միայն, յեթե իրականանա ինքնարժեքի այդ 35 տոկոսայն իջեցումը:

Տվյալ դեպքում ինչն ե ամենակարևոր, վորոշիչ նախադրյալը: Այստեղ ամենակարենը, վորոշիչ նախադրյալն ինդուստրիալ աշխատանքի արտադրողականության ավելացումն եւ: Մենք ինքնարժեքի 35 տոկոսային իջեցման այն ժամանակ կհասնենք (հնդամյապլանի շրջանակներում), յերբ տարեցտարի աշխատանքի արտադրողականության այնպիսի բարձրացում տանքի արտադրողականության աշխատանքի լինի, վորպեսզի հնդամյակի վերջում աշխատանքի արտադրողականության կրկնապատկվելու մոտիկ բարձրացում ունենանք:

Ալեքսեյ իվանովիչը նշում եր, վոր այս տարի վորոշ անկանոնություն կա: Հաշիվը ցուց է տալիս, վոր մենք աշխատանքի արտադրողականության ամենը մենք աշխատանքի ամենը:

նամյա 14—15 տոկ. բարձրացում պետք և ունենանք:
Դա այնպիսի բարձրացում ե, վոր անցյալում արդեն
ունեցել ենք, և միթե չենք կարող հուսալ, վոր վոչ
միայն հասնենք, այլ և գերազանցենք դրան: Ինձ
թվում ե, թե կարող ենք:

Յեթե, ասենք, այս տարի վորոշ անկանոնու-
թյուն կա, ինքնարժեքի իջեցման վորոշ թերություն,
ապա մի մոռանաք, վոր այս տարին գյուղատնտեսու-
թյան հանգամանքներով բոլորովին յուրահատուկ
է: Մի մոռանաք, վոր Ուկրայինայի և Հյուսիսային
կովկասի միլիոն հեկտար աշնանացանքերի կորուսով
մեզ առնվազն 411 միլիոն ցենտներ հացահատիկից զըր-
կեց: Պատկերացրեք հացահատիկային շրջանառությու-
նից 411 միլիոն ցենտներ կորուսութը. սա ինչ ծանր հար-
ված է, հատկապես յեթե աչքաթող չանեք, վոր այդ
411 միլիոն ցենտները կորել են այն մարզերից, վորոնք
միշտ մեր ամենազլիսավոր սնող կենտրոններն են յե-
ղել. Ուկրայինան ու Հյուսիսային կովկասը մեր հացի
շուկայում տիրապետում են: Հայտնի է, թե ինչպես
այդ բազմակողմանի ազգեց գյուղատնտեսության գնե-
րին, արդյունաբերության հումքի գներին, այնպես
վոր չեր կարող վորոշ պառակտում չգցել ինդուստրիալ
մեքենայի մեջ:

Բայց և այնպես փաստը փաստ և մնում. վերջին
յեռամյակում արդեն հայտնի յեղավ, վոր աշխատանքի
արտադրողականության 14—15 տոկոսային բարձրա-
ցումը հնարովի չե, այլ գործնականի հետևողու-
թյուն:

Արդյունաբերության զանազան ճյուղերում աշ-
խատանքի արտադրողականության բարձրացումը վեր-

ջին տարիների ընթացքում չափազանց փոփոխական ե
և տատանվում ե 10. ից մինչև 18 տոկ. և ավելի վեր:
Յերբ մենք սկսում ենք վերուժել այդ հանգամանքի
պատճառները, տեսնում ենք, վոր մեր արդյունաբե-
րությունը ներկայում զգալի չափով ցըված ճակատ
և ներկայացնում: Յեթե ճիշտ ե, թե աշխատանքի
արտադրողականության բարձրացումը մենք ստանում
ենք վոչ թե իհաշիվ բանվորների աշխատանքի բեղու-
նության, այլ աշխատանքի տեխնիկական միջավայրը
բարեկավելու, ապա տարորինակ կլինիք, յեթե վերա-
կազմավորման առաջին ետապներում ամեն ինչ հարթ
գնար: Մենք վոչ միայն տեխնիկական վերակազմա-
վորումն ենք անցկացնելու, այլ և ֆաբրիկաներում ու
գործարաններում աշխատանքի, սոցիալիստական գի-
տական աշխատանքի նոր դիսցիպլինա յենք սահմա-
նելու: Այդ ճակատով հետագա առաջխաղացումը, «յե-
ռանլիւան»—կուսակցական, արհեստակցական և տնտե-
սական կազմակերպությունների—աշխատանքի հետա-
գա կարգավորումը մեզ գեպի առաջ ավելի ուժեղ
շարժում կտա: Սա նշանակում ե, վոր աշխատանքի
արտադրողականության բարձրացման նկատմամբ մենք
շատ զգուշավոր թվեր ենք վերցրել, վորոնք իրական
կլանքից են աճել:

Աշնացանի կորուսալ Ուկրայինայում միայն
բացասական մոմենտների մասին չի վկայում. մենք
Ուկրայինան միշտ որինակ ենք համարել այն տեսու-
կետով, վոր նա հզորապես բարձրացրել ե աշնա.
կետով, վոր նա հզորապես բարձրացրել: Մենք հսմողված
ցան հացահատիկների արտադրանքը: Մենք հսմողված
ենք, վոր տափաստանի աշնացան հացահատիկը
յերաշաի դեմ պայքարելու յերաշխիք ե, և հենց ցըր-

տերից աշնանացանքերի ոյս կորուսով մեղ ուզզված այդպիսի զորավոր հարված եր, վորովհետև մեծ եր աշնացանը,

Մեր էլլկրի գյուղատնտեսությունը, մի հսկայական տնտեսություն, վոր 25 միլիոն ծռւխ և հաշվում, չի կարող միշտերկու տարում տարերքից ազատվել: Տարերքը գեռես մի շարք տարիների ընթացքում կարող ե կորստաբեր հարվածներ հասցնել մեր գյուղատնտեսությանը: Բայց յես կարծում եմ, վոր մենք հենց ալժմ գյուղացիության մեջ հին ճակատի մի շարք ճեղքումներ ենք տեսնում, վորոնք մեղ համոզում են, թե այստեղ ել մենք զգալի առաջնաշաղացում ունենք, և այստեղ մեր զրոնի համար վորոշ թատերաբեմ արգեն պատրաստ ե:

Արդյունաբերությունը միքիչ ե միայն անցել 1913 թ. մակարդակից, նոր-նոր և կարգի ընկել մեքենաշինության կողմից, բայց և այնպես տեսեք, թե ինչ ե կատարել արդեն գյուղին մեքենաներ ու գործիքներ հալթալթելու գործում: 1924—25 թ. գյուղը մեքենաներ ստացավ 62 միլիոն ոռորդու, 1926—27 թվին՝ 130 միլիոն ոռորդու, 1927—28 թվին՝ 149 միլիոն ոռորդու: Այդ ժամանակամիջոցում տրակտորների թիվը, վոր մենք այնքան գժվարությամբ պատրաստում ենք և ստանում արտասահմանից, 9 հազարից 32 հազար հատի հասավ: Հանքային պարարտիչների հալթալթումը, վոր իր զարգացման տղայական փուլի մեջ և, 35,8 հազար տոննից 111 հազար տոննի բարձրացավ: Գյուղատնտեսության իր մեջ արգեն տեսնում ենք բաղմաղաշատ սերմափոխության տարածությունների աճում: Վերջին հինգ տարվա ընթաց-

քում ԽՍՀՄ մեջ բազմադաշտ սերմափոխության ընդհանուր տարածությունը գրեթե հինգ անգամ մհծացել ե: ՌՍՖՌՀ Հողգործկոմատի տվյալների համաձայն, վերջին յերեք տարվա ընթացքում տեսակավոր ցանքերի քանակն ութապատիկ աճել ե: Մի խոսքով՝ ճակատի մասնակի ճեղքում ենք տեսնում, բայց մենք գիտենք, վոր մեր հետամնացության ճակատի հետագա զորավոր ճեղքումը գյուղատնտեսության գծով միայն հիմա հսարավոր լիզավ, յերբ արդյունաբերության մեջ մենք առույց շտկում ենք մետաղի, մեքենաշենության և քիմիակի գիծը:

Մեր տնտեսական ընդհանուր առաջխաղացման առաջին քայլերը կարող են մի չափազանց փայլուն ցուցիչն մեջ համադրվել: Տնտեսական աշխատանքի ամենից ավելի ընդհանրացրած ցուցիչը ժողովրդական յեկամուտն ե: Այդ ժողովրդական յեկամուտը վերջին յեկամուտն ել թվարտարիների ընթացքում ինչպես եր աճում, մեր թվարկումներով ինչ թվերով ե արտահայտվում, թեկուզ կումներով ինչ թվերով ե գալիս մենք հաշվելու լինք, այդ թվերը լինեն կոպիտ, անկատար, բայց, համեայդ ժողովը բավական արտահայտիչ, բավական ըսնայն դեպք, զարգացած առաջնային գործում տույզ: Բանից գուրս և գալիս մենք հաշվելու լինք, վոր վերջին յերեք տարվա ընթացքում տարեցտարի ժողովրդական տնտեսության 10 տոկոսակին վերելք ժողովրդական ունանելիությունն անհուսակի ունենք: Յեթե գյուղատնտեսությունն կերպով ընկնելիս լիներ, յեթե արդյունաբերությունն բացերն ընդհանուր աճումով փոխհատուցելիս չեն բացերն կարող ե պատահել, վոր այժմ, յերբ ներ, ինչպես կարող ե պատահել, վոր այժմ, յերբ անտեսական շինարարության տեմպերը տակավին չեն ծավալված, և համեմատաբար հին տիպար ունեն պատճենագիր առաջինաբերությունն ու գյուղատնտեսությունը, արդյունաբերությունն

մենք տարեցարի ժողովրդական յեկամուտի 10 տո-
կոսալին վերելք ենք տալիս, այսինքն ավելի քան յե-
րեք անգամ գերազանցում ենք մինչպատերազման
Ծուսաստանի յեկամուտին և այդ կողմից կապիտալիս-
տական յերկրների համար նմանը չունեցող ցուցիչ ենք
տալիս։ Ինձ թվում ե, թե այդ վկայում ե այն մասին,
թե այն ամենը, ինչ մեր հնգամյա պլանում ծրագըր-
ված ե այդ հիմնական ցուցիչների նկատմամբ, աճել ե
մեր տնտեսական իրականությունը հաշվի առնելուց:

Յես արդեն նշել եմ, վոր պլանի բնորոշ գիծը
եներգետիկ շինարարությունն եւ Պլանը ցույց ե տա-
լիս, թե ինչպես մենք իրավացի եյինք, յերբ մեծ
դժվարությունների պայմաններում, անտեսական ա-
զիրմունքի ժամանակ աշխատում եյինք ելեկտրիֆի-
կացիալի լենինյան պլանն իրականացնել: Ի՞նչ որի
կլինելին Մոսկվայի, Լենինգրադի, Դոնեցի ավագանի
նման կենտրոնները, յեթե այդ տարիների ընթաց-
քում մենք տարեցտարի չանցկացնելինք, չիրակա-
նացնելինք ելեկտրիֆիկացիայի պլանը: Այժմ մենք ե-
լեկտրաշինարարության մի յուրահատուկ շրջան ենք
ապրում: Մեր ուսեցած ելեկտրոկայանների, ռայոնա-
կան ելեկտրոկայանների գորությունը չափազանց
փոքր ե՝ 536 հազար կվ., բայց մեկուկես միլիոն
կիլովատական ավելին շինվում եւ Մենք շինարարու-
թյան հենց այնպիսի ետապի սահմանում ենք զըտ-
նըգում, յերբ շատ կարճ ժամկետում կկարողանանք
ГОՅԼРО-ի ամբողջ ծրագիրն իրագործել, այսինքն
1750 հազար կվ. ընդհանուր ուժ ունեցող կայաններ
կառուցել: 30 տեղ շինարարություն ե գնում, վոր իր
առաջադրությունների գումարովը համապատասխա-

Նում ե ելեկտրիֆիկացիալի պլանի առաջադրությանը:
Մենք այժմ ամեն կողմից ելեկտրիֆիկացիան արա-
գացնելու պահանջներ ենք լսում, վորովհետեւ այժմ
ել վոչվոք չի կասկածում, թե ինդուստրիալ ամենա-
գլխավոր կենտրոնների վիճակը կախումն ունի ելեկ-
տրիֆիկացիայի պլանի կատարումից: Մենք այժմ չենք
մտածում առանձին ելեկտրոկայաններ կառուցելու
մասին. այժմ յուրաքանչյուր ելեկտրոկայան կա-
պում ենք կամ արդյունաբերական վորոշ կենտրոնի
կայանքի հետ, կամ այդ կայանը կապում ենք արդյու-
նաբերական կամ վառելանյութային վորոշ կոմքինատի-
հետ: Այդ տեսակետից տիպիկ որինակ ե Դնեպրո-
ստրոյը: Յես ինքս յեղել եմ ելեկտրոկայաններ կառու-
ցող, հիշում եմ, թե ինչպես ելինք նրանց բաժանորդ-
ներ ժողովում, հիշում եմ, թե ինչ դժվարությամբ
ելինք կարողանում ելեկտրական թելեր անցկացնել
յերկրի յերեսին: Ընկ. Վինտերը, վոր նորերս և վե-
րադարձել Ամերիկայից, վոր ելեկտրականության գոր-
ծում մեզ այնքան առաջել ե, ի միջի ալլոց մի շատ
յուրահատուկ յերեսությ ե հայտնում: Ինժեներ Կուպե-
րի կառուցած հսկայական կայանը դատարկ կանգնած
ե, ահազին գետի ջուրը կողքով ե անցնում, վորով-
հետեւ կայանը պետության սեփականություն ե, և ա-
մերիկական կապիտալիստները չեն ուզում նրանից
ոգտվել: Դնեպրոստրոյի կառուցումը, վոր ելեկտրոն-
ներգիայի, մետաղաձուլման, քիմիայի մի յուրահա-
տուկ կոմքինատ ե, և, հուսանք, մի կոմքինատ, վոր
գոտվատնտեսության գործի հետ կապված կլինի, մենք
այնպես ենք ծրագրում, ինչպիս նա չի կարող ծրա-
գրվել մասնավոր անտեսության պայմաններում:

Դնեպրի կայանն իր եներգիան միայն այնտեղ կտա, ուր կթելադրի տալ տեխնիկուտնտեսական հաշվը: Քիմիական արդյունաբերությունն իր բոլոր հաշվները կապում է. Դնեպրոստրոյի նման եներգիայի կենտրոնի և կամ այնպիսի ելեկտրոկայանների հետ, վորոնք կլինին մետաղաձուլման գործում: Կենտրոններին վառելանութ հայթալիթելն ամենասերա կերպով կապված կլինի այն բանի կառուցման հետ, վոր մենք անվանում ենք չերմաշելեկտրական կայաններ: Մենք նրան ենք ձգտում, վորպիսզի ամբողջ արդյունաբերությունը հավաքենք մի միասնական հարկի տակ, միավորենք նրա եներգետիկ բազան, վոր նրա ռացիոնալացման գործն է վորոշում: Մենք հենց այդ ճանապարհով ենք մտածում լուծել մեր տնտեսության շինարարական կարևորագույն հարցերը:

Դուք գիտեք, որինակ, վոր մեր յերկրի հնամյա չարիքն այն եր, վոր ամենազլիսավոր կինտրոնները՝ Մոսկվան և Լենինգրադը հեռու տեղից բերվող վառելանյութից եյին ոգտվում: Արդեն լսել եք, վոր տորփի պրոբլեմի, մերձմոսկովյան ո ծուխի պրոբլեմի լուծումը կարող ե փոփոխել հեռու տեղից բերվող և տեղական վառելանյութերի հարաբերակցությունը: Բայց, ընկերներ, բոլորովին անհնարին կլինի, յեթե մենք նույն տորփին չմոտենայինք ռայոնական ելեկտրոկայանի հետ մեկտեղ և յեթե մեր մերձմոսկովյան ածուխին չկարողանալինք մոտենալ ելեկտրո-արդյունաբերական կոմբինատներով: Ելեկտրական կոմբինատները վերջին հաշվով զարգանալով անտեսական ռայոնի ձև են ստանում, ամբողջ ռայոններ իրենց տեսքն ստանում են՝ իրենց վորով տնտեսությունը եներգետիկա-

ի վրա կառուցելով: Հենց այսպիսի ճանապարհով մենք կստանանք արտադրանքի առաջընթաց հսկայական տեմպ, կստանանք այդ ամբողջ մեխանիզմի կառավարման պարզություն, աշխատանքի տեխնոլոգիական այնպիսի բաժանում, վորն առանց դրան անկարելի կլինիք: Դուք տեսնում եք, թե ինչպես մեր տնտեսական ռայոններն սկսում են այս կամ այն ելեկտրոկայանի համար պայքարելու մեջ տեսնել վոչ միայն ելեկտրոկայանի բախտի այլ իրենց ամբողջ արդյունաբերության, ամբողջ տնտեսության բախտի լուծումը: Դուք տեսնում եք, թե ինչպես ելեկտրիֆիկացիալի պլանը, լենինյան պլանը մեր աշքերի առաջ առնում դառնում է յերկրի նոր եներգի տիկայի փառահեղ պլան:

Զեր առաջ վորակական բարենորոգումների վոչ պակաս փառահեղ ծրագիր կրացվի, յերբ մանրամասն կծանոթանաք գյուղատնտեսական շինարարության պլանին: Խորհութեան տեսությունների և կոլտնտեսությունների մեր շինարարությունն առանց տրակտորի անկարելի յեւ Բայց երականն ալսուել առհասարակ տրակտորը չե, այլ այն տրակտորը, վոր հասարակության գործադրության մեջ ե, այն տրակտորը, վոր մեր տնտեսության սոցիալիստական հզոր հատվածի մեջ ե մտցրած:

Ուկրայինալի գյուղատնտեսության ուսումնասիրությունը նրա գերբնակված շերտում այն յեղակացության և բերում, վոր քարտի հին ուժի՝ ձիերի վրա հենվելով գյուղատնտեսություն բարձրացնելու ճանապարհները փակված են, վորովհետև ձին այս հողասակավության, այս գերբնակվածության ժամանակ այն-Հնդկամյա պլանը—3

քան շատ կուտի, վոր ցանքի տարածությունները չեն հերթիքի: Մանավանդ վոր մանրակոտոր տնտեսության մեջ ձեռիքի ողտագործման աստիճանը տեխնիկապես չափազանց ցած ե: Մեր տրակտորները հենց տիժմ, խորհունտեսական և կոլտնտեսական շինարարության առաջին փորձերի ժամանակ ձեռիքի այնպիսի քանակի փոխարինություն են տալիս, վոր մի տրակտորին վոչ թե 8—10, այլ 20—30 ձեր լի գալիս: Առանձին գլուխերում ամերիկական ռեկորդ ենք խփում: Ռեկրայինայում մի տրակտորին ունենք 200 հեկտարի լիակատար մշակություն, վոր ցանքի համար 400 հեկտար մշակելուն ե համապատասխան: Մի անդամ մենք հաշվում ենք, վոր մի տրակտորին ամենաշատն ընկնում ե 500 հեկտար: Իսկ այժմ գործնականում հասել ենք մի տրակտորով 400 հեկտար մշակելու հնարավորության: Այդ միայն այն դեպքում ե հնարավոր, ինը տրակտորը կազմակերպված ե մտցվում գյուղատնտեսության սիստեմի մեջ: Այդ տեսակետից ձեր հատուկ ուշագրությունը դարձնում եմ մեքենա-տրակտորային կայանների վրա, վորոնք հարցի ենք բարեգետիկ-կազմակերպչական արմատակի լուծումն են արդեն: Նրանք ցուց են տալիս, թե ինչպես, վոչ պարզապես տրակտորախմբերի վրա հենվելով, այլ հենվելով մեքենատական կայանների վրա հենավելով, այս հենվելով համապատասխային կայանների վրա, վորոնց լիտելը համապատասխան ինժեներական և ազգունութեական կազմակերպություններ կան, մենք կարող ենք մոտենալ գլուխացիական ահազին շրջագծի (պերիֆերիալի) ընդգրկմանը, կտրտելով չքավորածի միջակ մասսաների՝ կուլալի կողմից շահագործվելու բոլոր արմատները: Այս հաղամյակեց հետո մենք կլուսենք արդեն վոչ

թե առանձնացած կյանքով ապրող զբուղատնտեսության, այլ զբուղատնտեսական յուրատեսակ ինդուստրիալի մասին:

Հացակենտրոնի տվյալներով՝ այս տարի կոնտրակտացիան միզ փաստորեն կտա մինչև 411 միլիոն կիլոգրամ, այսինքն սկզբնական առաջադրությունից շատ ավելի մի քանակություն։ Գյուղատնտեսական կոռպերատիվ կազմակերպությունները մեր աքջի առաջ ավելի ու ավելի վճռականորեն արտադրական գործելակերպին են անցնում։ Անինի կոռպերատիվ պլանի ու նրա ելեկտրիֆիկացիայի պլանի իրականացումը լինակատար ընթացք ունի։ Յեթե մենք հետագայում ել արագացնենք այդ աշխատանքի լարումը, ապա ապրանքային հացի մոտ 43 տոկոսը մեր սոցիալիստական հատվածում կունենանք, իսկ այդ ինչ է նշանակում։ Յեթե այդ կոռպերատիվ գործելակերպը, խորհրդականացնելություններն ու կողանականացնելությունները, յեթե կոնտրակտացիայի սիստեմը — այդ բոլորն իմի գումարած՝ հնգամյակի վերջում գյուղատնտեսության սոցիալիստական հատվածի գերեզմանը այդքէ այդպիսի մեծացում կապահովեն, այդ կնշանակի, զոր հացամթերման այն գժվարությունները, զոր այժմ նկատում ենք, հաստատապես կհաղթահարվեն։ Ներկայումս ապրանքային արտադրանքի 30-40 տոկոսը գտնվում է գյուղի 10 տունագրանքի կողմանը կազմող վերնաշերտի ձեռքին, այն վերնաշերտի, զորի համար հացի գների բարձրացումը, չարաշահությունը իր սոցիալական դրության բնական հանրագումարն եւ Հաց գնող գյուղացիության և հացի գների կարգավորմամբ շահագրգուված պրոլետարիատի շահերն ուղղակի հակագիր են այդ խմբակի շահերին։

Հնգամական է այս հայուսահմանած այս ծրագիրը
խորհտնատեսությունների և կոլտնտեսությունների
գծով՝ արդեն սոցիալիստական հաստվածի համար ա-
պահովում և հացի ապրանքալին արտադրանքի 40
տոկոսին տիրապետելը, իսկ չեղ վոր դրան զուգընթաց
գնալու յի կոռուպերացիայի և կոնտրակտացիայի աճումը,
և սրա ու նրա ընդգրկումը 85 տոկոսով և արտա-
հայտվում։ Գյուղատնտեսական մթերքների վերա-
մշակման բարձրացումն այնպիսի յի, վոր մոտավորա-
պես յերեք անգամ զերազանցում և 1927—28 թվի
մակարդակին։ Շաքարի գործարանները, վուշի նախ-
նական մշակման գործարանները, աղորիքների ար-
դյունաբերությունը և գյուղատնտեսական ինդուս-
տրիալ այլ ձյուղերի մի ամբողջ շարք իրենց կազ-
մակերպող ջոկատներով կերթան գյուղատնտեսական
աշխատանքի դաշտը և իրենց հերթին, մեքենա-տրակ-
տորային կայանների կողքին, կոգնեն մեկ՝ բարենո-
րոգելու գյուղատնտեսությունը։ Յեվ, իհարկե, վոչ թե
մեկ տարում, վոչ եւ յերկու տարում, այլ հնգամյա-
պահանի հատածում գյուղի տեխնիկական ու սոցիա-
լական գեմքի փոփոխությունը կիրականանա։

Յերեք, վոչ մի դասակարգ, վոչ մի պետություն
իրեն այսպիսի հսկայական խնդիրներ չի դրել. Ըսկեր
կենինն իր ժամանակին շեշտում եր, վոր մանր ու
մանրագույն բազմամիլիոն գյուղացիությունը փա-
կութուց հանելը պլոտեարիատի պես դասակարգի ու-
ժի բանն է. Յես ГОՅՈ-ի պլանի մեջ ասում
ելի, թե այնպիսի ժամանակներ կգան, իմրե պլոտեա-
րիատի զորացուները գյուղ կերթան, վորպեսզի այն-
տեղ, գյուղական իրականության մեջ ցուց տան:

թե ինչ կարող ե տալ գյուղացիութիւնը շաղկավը պըսու-
լետարիատի հետ։ Ահա այժմ հասել ե պըոլետարական
այդպիսի ցուցազրման ժամը։ Յերբ լսում ես ընկեր
Անդրեմի զեկուցումներն այն մասին, թե ինչ ե կա-
տարվում այժմ Հյուսիսային Կովկասում, յերբ ուսում-
նասիրում ես Ուկրայինայի այնպիսի աշխատավորնե-
րի աշխատանքը, ինչպիսին Մարկեիչն ե, պարզ ե լի-
նում, թե ինչ բեկմաննախորելին ենք մենք։ Անշուշտ,
այդ բեկումը քաղաքի ու գյուղի կապիտալիստական
տարրերի կողմից ահագին դիմագրություն ե հարու-
ցանում։ Հապա մեմ կողմն են ուժերը։ Անպայման պըս-
լետարական քաղաքի, նոր եներգետիկալի կողմը, վոր-
պըսոլետարիատն ե ստեղծում, և վորն ապագա հաղ-
թության ամենախորին հավատն ե ծնում։ Հնգամյա-
պլանը դադարում ե տեսություն լինելուց, նա ինքն
սկսում ե իրականության կազմակերպող ուժ լինել։

Հնդամչա պլանի ուրիշ հարցերի մասին թույլ
ովկեք վաղը խոսել, Պլանը ցուց ե տալիս, թե ինչ
ուսնկրեա միջոցներով ենք մենք զորահավաքում բազ-
մամիլիոն մասսաները, վորոնց կոլեկտիվ կամքը ց-
աշխավորություն ե այն բանի, վոր այդ պլանը վ-
որշված ժամկետում լինինան զրոյների տակ իսկա-
կես կիրականացվի. (Ծափահարություններ):

Ըսկերներ, յես արդեն նշել եմ մեր տնտեսության ընդհանուր արտադրանքի հսկայական աճումը՝ և նոտարակույս, արդյունաբերության բովանդակ արուագրանքի այդ համարյա լեռապատիկ մեծացումը (միշտական 2,8 անգամ), գյուղատնտեսության արտադրանքի 50 տոկոս մեծացումը, այն ահազին շինարարությունը, վորը սփռված լինելով մեր յերկրի բոլոր

տնտեսական ռայոններովը մեկ, չնայած կենտրոնից նրանց հեռու ընկած լինելուն,—այդ ամենը միասին մեր տնտեսության արտադրական էլերորդ հատվածի՝ տրանսպորտի վրա հսկայական խնդիրներ ե դնում։ Թուլլ տվեք ինձ թեկուզ միքանի խոսքով ուրվագծել այդ հսկայական խնդիրները։ Յերկաթուղարին տրանսպորտը 1928 թվին արդեն շեշտակի կերպով անցավ վերականգնման շրջանի սահմանագիծը։ Նա տրանսպորտի մյուս բոլոր տեսակներից առաջ ե գնում, այս հընդամա պլուսում ել տրանսպորտային խնդիրների լուծման կենտրոնական դերը նրա վրա յե լինելու ժանրացած։ Մենք հաշում ենք, վոր բեռնաշրջանառությունը, բեռների քանակը միլիոն տոններով, ըստ ոպտիմալ տարբերակի, մինչև 1932—33 թ. կամի 87 տոկոսով, 1913 թ. 132 միլիոն տոննի դիմաց կազմելով մոտավորապես 280 միլիոն տոնն։ Զգալիորեն կրարձրանա նույնպես ներքին ջրային ճանապարհների վրայի շարժումը—1913 թ. 48 միլիոն տոննի դիմաց մինչև 78 միլ. տոնն։ Ծովային նավահանգիստների աշխատանքը 1913 թ. 37 միլ. տոննի դիմաց կհասնի 52 միլ. տոննի։ Ավելի մեծ բեռնաշրջանառություն կունենա մեր խճուղային տրանսպորտը, վոր կարտահայտի մոտ 1200 միլ. տոննով։ Մեր յերկաթուղարակին ցանցը դեռ 1927 թվին ավելի քան 18 հազար կիլոմետրով—31 տոկոսով բարձր եր 1913 թ. յերկաթուղարակին ցանցից։ Բայց յեթե յերկաթուղարակին տրանսպորտը վճռականորեն անցել ե վերականգնման սահմանագիծը, նույնը չի կարելի ասել տրանսպորտի մյուս տեսակների մասին։ Մեր գետային տրանսպորտը, Վոլգայի ծանծաղամասից զատ, նոնդովորովից

մինչև Աստրախան, թե իր նավարկելի խորքերով և թե սարքավորումով ընդհանրապես և ամբողջովին շատ յիտ ե մնացել։

Ավելի դժվար կացության մեջ ե մեր տրանսպորտը խճուղիներում և ընդհանրապես հողային ճանապարհներում։ Այդ ճանապարհների կեղկը, ծածկույթը շատ մաշված դրության ե, և մենք գեռես նախնական փորձի կարգով ուղիներ ենք վարոնում, վորակեսզի նազում հանի տրանսպորտի այդ տեսակի նոր բեռնվածություն հսկայական խնդիրից, վոր զբուղատնտեսության վերակազմավորման կարիքներից ե առաջ դալիս։

Ընդհանրապես, ընկերներ, յեթե մտածենք արանսպորտային խնդիրների մասին ամբողջությամբ առած, կասեյի, վոր մեր առաջ ծառացած կարեռագույն խնդիրն այն ե, վորակեսզի կանոնավոր կշռենք արանսպորտի այդ յերեք հիմնական տեսակների հարաբերական դերը, ուժերի կանոնավոր հարաբերակցություն գանենք յերկաթուղային, ծովային և խճուղային տրանսպորտի մեջ։ Մոտիկից դիտելով տրանսպորտի ժամանակակից տեխնիկան, մենք պետք ե արձանագրենք, վոր, ասենք, ավտոշարժման ահազին զարգացումը, արանսպորտի ավտոմոբիլային սպասարկումը մեր առաջ բոլորովին նոր խնդիր ե դնում և կարծես։ թե մերձեցնող ճանապարհների և թե առասպարակ յերկրի տար ածությունների բոլորովին նոր ձևով լայնորեն սպասարկման համար տրանսպորտի հենց այս հատվածն ե առաջ քաշում։ Հավանականաբար մենք միայն գլխավոր պլանի գծով կկարողանանք գլուխ հանել ամբողջ տրանսպորտային սիստեմի այն լայնագույն վերակառուցման կանոնավոր

ծրագրումից, վորը կապված են նրա բաղադրիչ մասերին մեր տված գնահատականի փոփոխության հետ, Մասնավորաբար, հնգամյա պլանի մեջ գյուղատնտեսության վերակառուցումն առաջ քաշելով, մենք, ինարկե, ամենալուրջ ուշագրություն պիտի դարձնենք մեր հողային ճանապարհներին, վորովհետև պարզ ե, վոր մեր յերկաթուղացանցը դեռ շատ հեռու մնացած կլինի այն կացությունից, վորպեսզի իր ծառակություններով հասնի գյուղատնտեսական արտադրության բոլոր այն կենտրոններին, վորոնք անցյալ պատմության մեջ լեղածից ավելի մեծ եֆֆեկտավորությամբ յերկրի ընդհանուր աճման մեջ են առնվելու այդ հնգամյակում:

Բայց ինչպես ել մենք դիտելու լինենք մեր այդ տպագա աշխատանքը տրանսպորտի ուրիշ տեսակների վերաբերյալ՝ նրանց արժեքավորության վերագնահատման մտքով, մի բան կասկածից դուրս ե. ներկայումս հարկ կլինի, վոր մենք առաջվա լեռանդով մեր աշխատանքը կենտրոնացնենք յերկաթուղային տրանսպորտի բնագավառում, վորովհետև միայն վերասարքավորելով այդ ցանցը, բարձրացնելով նրա ոգտագործման գործակիցը, մենք կտրող կլինենք տնտեսության այդ հատվածում համապատասխանել մեր ընդհանուր պլանի մեջ բացադրված տնտեսական հըսկայական խնդիրներին, Յերկաթուղային տրանսպորտը խնդիրների յերկու հատված ունի: Մի կողմից մենք մի տեսակ պետք ե յերկաթուղային ցանցի վրա կենտրոնացնենք բեռների մասսայական շրջանառությունը, վորովհետև միայն այդ ճանապարհով մենք կկարողանանք, ըստ կենտրոնացված արտադրության

արգլունավետության ընդհանուր որենքի, եժանացնել փոխադրական ծառայությունները, իսկ մյուս կողմից պետք ե մտածենք յերկաթուղային տրանսպորտի իսկ փոխադրական միջոցները հետագա վերակազմավորման յենթարկելու մասին: Մենք բնավ չենք կարող այս հնգամյակում յերկաթուղիների հին ցանցը բարեկարգ վորակյալ ցանց դարձնել, ամենագլխավոր մեծագծերը (մագիստրալ) առանձնացնել և հետեղաբար ճանապարհները յերկրորդ և յերրորդ կարգի բաժները:

Իսկ ի՞նչ կարեռագույն խնդիրներ ունենք այդ ուղղությամբ: Յես ընդունում եմ, վոր յերկաթուղիներում բեռների մասսայական շրջանառությունը կարգավորելու մտքով, տրանսպորտի ինդուստրիացման մտքով հարկ կլինի, վոր այս հնգամյակում ամենից առաջ յերկու հարց լուծենք. առաջինը՝ Սիրիոի և Ուրալի ու մեր արդյունաբերական կենտրոնների կապի մասին, և յերկրորդ հարցը՝ Դոնեցի ավազանը Մուկվայի ու Լենինգրադի ուայոնների հետ կապելու մասին:

Մենք հնգամյա պլանում 250 միլիոն ոռուբլու հատկացումներ ենք նախատեսում Սիրիոի ուղղության մեծագծման համար (մագիստրализация): Կարծում ենք, վոր մեզ կհաջողվի յեթե վոչ Սիրիոի հետ այդ կապը դարձնել մեծ գերմեծագիծ, զոնե մեծ թեքությունները վերացնելով, միքանի նոր ուղղող գծեր անցկացնելով՝ հույս ունենք, վոր այդպիսի միջոցներով ել կարող ենք հասնել փոխադրավարձի ինքնարժեքը մեր յերկաթուղացանցում ներկայիս տոննորդի լումետրի 1,21 կոպեկից մոտավորապես կես կոպեկի

իջեցնելուն։ Դրանով մենք շուկա գուրս գալու նոր հնարավորություններ կտանք Սիբիրի գյուղատնտեսության արտադրանքին, վորը, ինչպես գիտեք, գյուղատնտեսության արտադրանքն ըստ ռայոնների համեմատության դնելիս հենց այժմ ել խիստ տարբերվում ե դեպի բարձր ցուցիչները։ Յեթե մենք Սիբիրի անծայրածիր տարածություններին մոտենանք ունիվերսալ տրակտորի նման եներգետիկ շարժիչներով, յեթե մենք այնտեղ կարողանանք գյուղատնտեսական զանազան մեքենաներ լայնորեն կիրառելով գլուխ հանել բանվորական ուժի պակասորդներից, այդ ամենը մեզ կողնի Սիբիրի գյուղատնտեսությանը հետազա պոաջընթացություն տալու, նրա տիպը մոտեցնելու ամերիկական եքստենսիվ կատարյալ տնտեսությանը, վոր մեր աչքի առաջ այնպես եֆֆեկտավոր ծավալում ունի Միացյալ Նահանգներում։ Մենք յենթագրում ենք, վոր յեթե հենց այժմ այս հնգամյակում Սիբիրի հացահատիկի դերն այդքան աչքի ընկնող ե, ապա ապագայում հենց այդ Սիբիրի հացը մեզ կողնի գլուխ հանելու մեր կենտրոններին, մեր սպառողական ռայոններին պարենավորում հայթալթելու թերություններից, մինչեռ, ասենք, հարավայինը, Ռւելքայինի և Հյուսիսային Կովկասի, մասամբ Վոլգայի հացը գլխավորապես արտահանության կարիքներին կերթա։ Մյուս կողմից հենց այդ մեծագիծը կկապի կուղեցիկ ավազանը, ածուխի հարստությունները Ռւելքի մետաղածուլման խնդիրները։ Մյուս, վոչ պակաս կարևոր ինդիրը Դոնավազանը կենտրոնական արդյունաբերական ռայոնի, Անդինդրաղի ռայոնի հետ

միացնելին ե։ Վեճեր կան այն մասին, թե գուցե մենք կարողանանք այնպես ծանրանալ տեղական վառելանյութի, մասնավորապես տորֆի և մերձմուկովան ածուխի վրա, վոր բեռների՝ անցնալում դիտված հարաբերակցությունը սուր կերպով փոխվի, վոր Դոնեցի վառելանյութը կարիք չունենա այդպիսի հեռավոր փոխադրությունների։ Սակայն ամենամեծ անզգուշություն կլիներ՝ արգեն այժմ գերագնահատել հեռանկարային այդ հնարավորությունները։ Մեր պլանում հարցի մեծ մշակումնից հետո այն յեղբակացությանը նք յեկել, վոր յեթե Դոնեցի ավազանի գերը նվազի, վառելանյութի ամբողջ բալանսի մեջ ունեցած նրա տեսակարար կշիռը 77-ից 70 տոկոսի իջնի, այնուամենալ նիվ Դոնեցի վառելանյութն այդ հնգամյակում արդյունաբերության վճռող վառելանյութը կլինի, արդյունաբերության ամենից ավելի պատասխանատու կենտրոնների նորմալ ընթացքի ամենից ավելի ամուր ապահովումը կլինի։

Վեճեր կան ելի այն մասին, թե ինչպես ավելի հեշտ կլինի Դոնեցի ավազանը կենտրոնի հետ կապելու խնդիրը լուծել։ Մուկա-Կուրսկ յերկաթզծի ելեկտրիֆիկացիանիվ, թե նոր մեծագիծ անցկացնելով, կուցե և հաջողվի հյուսիսի գնացող այն յերեք-չորս յերկաթզծերով սահմանափակվել, վորոնք այժմ ել մասնակի աշխատում են։

Մի բան անտարակուսելի յե, այդ խնդիրը ժողովրդատնտեսական կարեռագույն խնդիրներից մեկն ե, այսպես թե այնպես, նա պետք ե լուծվի։

Տրանսպորտի նոր շինարարությունը մոտ 20000 կլմ. նոր յերկաթուղիներ կառուցել ե ծրագրում, վորոնցից 17000 կլմ. արգեն շահագործման ե հանձնվելու։

Այդ բանին մենք նկատի ունենք հատկացնել կլոր թվերով մոտ 1 միլիարդ 600 միլիոն ռուբլի:

Իսկ Բնշաղես ենք մոտենում տրանսպորտի քարշի մեխանիզմի գոյություն ունեցող քարշացին կառուցվածքի վերակազմավորմանը: Մենք այստեղ նկատի ունենք մի ամբողջ շարք ուղղություններով ընթանալ:

Համառոտարան լինելու համար յես միայն թուրքի կերպով կթվեմ յերկաթուղիների տրանսպորտի մեխանիզմի վերակազմավորման այդ հիմնական մոմենտները:

Ամենից առաջ մենք հուսով ենք, թե գործող շոգեկառքերի հզորության ուժեղացումը, — իսկ մենք մոտիկ ժամանակներս կանգ ենք առել շոգեկառքի «Է» տիպի վրա, — տրանսպորտի ոացիոնալիզացիայի համար շատ եֆֆեկտավոր միջոց ե:

Մենք կարծում ենք, թե առաջմ հարկ կլինի այդ տիպի վրա կանգ առնելու ինչ ուրիշ շոգեկառքերին ե վերաբերում, կարիք կլինի ուշադրություն դարձնելու նրանց մողերն դարձնելուն, նրանց ջերմացին հատկությունները կատարելագործելուն: Յել մեր շոգեկառքերի քարշական ուժն ընդհանրապես ու ամբողջությամբ միջին թվով 14 տոկ. մեծացում կտա:

Վաղոնների պարկի լրացումը մենք համաձայնեցրինք ԺՏԽ՝ տրանսպորտի կարիքներին սպասարկելու ընդունակությանը: ԺՏԽ պետք ե տա մոտ 300 մարդատար շոգեկառք, 2 և կեսից մինչև 3 հազար ապրանքատար շոգեկառք: պետք ե տա՝ մարդատար մոտ 5 հազար վագոն և ապրանքատար՝ 130-ից մինչև 160 հազար, և ապրանքատար վագոնների նկատ-

մամբ մենք նույնպես անցնում ենք 4 առանցքայինին և մեծ բեռնատար տեսակին, վորը տարայի և ոգտակար բեռան լավագույն հարաբերակցությունն ե տալիս: Մինչև հնգամյակի վերջը մեծ բեռնատար վագոնների թիվը արող վագոնային պարկի 20 տոկոսը կըլինի, ներկա 9 տոկոսի փոխարեն:

Մեր յերկաթուղային տրանսպորտի քարշային ապարատն ալսպես փոխելով, մենք միաժամանակ կարծում ենք, թե նրա աշխատանքի եֆֆեկտն ելի յերկու պարզ ձեռնարկումով բարձրացնում ենք: Առաջինը՝ ինքնովին (ավտոմատ) արգելակում մտցնելով, վոր շատ ե կրճատում սպասարկող անձնակազմը, մեծացնում ե շարժման դիմացկունությունն ու անվլատանգությունը, և յերկըրդ՝ ինքնովին կամ կես-ինքնովին միացումը, վոր հզորապես կավելացնի տրանսպորտի շարժառությունը, կիլոմետրին 8—12 ոուրլի կարգի ծախս պահանջելով:

Մենք կարծում ենք, թե ջերմատարները, վորոնց վրա, ինչպես գիտեք, անցյալ տարիներում մենք բավականաչափ աշխատել ենք, այս հնգամյակում արդեն տրանսպորտային շարժիչների ընտանիքի որինական անդամը կդառնան: Նրանց դերը հանգի այնպիսի ուայոնների սպասարկմանը, վորտեղ առանձնապես մեծ են ջրահալթայթման դժվարությունները ինչ ելեկտրիֆիկացիին ե վերաբերում, տրանսպորտն այստեղ շարունակում ե շատ փոքրիկ նպատակադրումներ նշել: Գուցե մենք հետագայում կարիք ունենք գնուականապես վերանայելու այդ նպատակադրումները: Քաղաքամերձ շարժումից, մասնավորապես Մուկվայի մոտ Հյուսիսային յերկաթուղիներից զատ,

Սուրամի լեռնանցքի ելեկտրիֆիկացիալից զատ ծրագրվում ե ելեկտրիֆիկացիալի յենթարկել ցանցի մեծագիծ մի մասը, վորպեսզի այդ փորձով համոզվենք, թե կարժեց ենք մենք այստեղ մեր ուժերով ու միջայներով ընթանալ, և ի՞նչքան թանգ կնսափ այդ բանը: Մեզ թվում ե, թե այդպիսի մի ուղեմաս պետք ե լինի կեման-Խարկով գիծը, վորը մեզ համար հետաքրքրականություն ունի Մոսկվա-Կուրսկ իերկաթուղու ելեկտրիֆիկացիայի կապակցությամբ:

Դուք գիտեք, թե ինչ մեծ դեր ե խաղում վառելանյութը տրանսպորտային տնտեսության մեջ: Մենք կարծում ենք, թե այս տարի մի ամբողջ շարք զիտական-ուսումնասիրական աշխատանքներ պիտի տարվեն տրանսպորտի կարիքների և ըստ ռայոնների պարհակավորման (քազվերտկա) համար վառելանյութի արմատական և անհրաժեշտ տեսակների ընտրության համար: Յերկաթուղային տրանսպորտի վառելանյութի ծախսերն ընդհանրապես պիտի առնվազն 13% իջնեն: Այլապես մեր ամբողջ վառելանյութային բարանսը կխսիտվի:

Ջրային ճանապարհների բնագավառում յես կցանկանայի միայն թեթևակի շեշտել այն խնդիրները, վորոնք վոլգա-դոնյան պրոբլեմով նշված ընդարձակ շինարարության առաջ են ծառացած: Ընկերութեար, լեթե մենք այս պլանով ընդհանրապես և ամբողջությամբ գեպի տրանսպորտային վորոշ մինիմալ վերակազմավորում ենք գնում, հաշվի առնելով, վոր, ըստ յերեսութիւն, տրանսպորտային խորը վերակազմավորումը մեզ կհաջողվի այն ժամանակ միայն, յերբ մեր ծանր արդյունաբերության հետագա վերելքի նախ-

նական վորոշ ետապ արդեն անցած կլինենք, այս բնավ չպիտի նշանակի, թե մենք հրաժարվում ենք խոշորագույն կարգի շինարարությունից, խոշոր քաղաքականությունից տրանսպորտում: Յեթե մենք, ասենք, հանդինություն ունեցանք այնպիսի մի ձեռնարկություն սարքելու, ինչպիսին Թուրքեստանն ու Սիրիուս միացնելն ե,—և կարծում եմ, թե չենք զղալու, վորովհետև այդ կապով հենց կողմանք բամբակի գործի հզոր վերելքին, միջին-ասիական սպառողական կարքները Սիրիուսի հումքի շուկայի տված հնարավորությունների հետ կապելով,—ապա յես կարծում եմ, թե հետեւալ, գուցե և ավելի կարեռ կարգի, խնդիրը վոլգան և Դոնը միացնելն ի: Յես չեմ խոսում արդեն այն մասին, ինչ իր ժամանակին Վլադիմիր Իլիչն եր նշում, թե վոլգա-դոնյան այդ միացումը տրանսպորտային այն զորավոր լծակը կլինի, վորը կփոփոխի Հարավ-Արևելքի վողջ տառեսակարգը: Կարծում եմ, վոր վերջին տարիներում մեր կատարած վերլուծությունը ավելի ևս հաստատեց Վլադիմիր Իլիչի այդ նկատողությունը: Բանն այն ե, վոր մենք ներկայումս Վոլգայի տնտեսությունը մեր ցանկացածի պես չենք կարող բարձրացնել, չնորհիվ նրա վառելանյութային սեփական միջոցների աղքատության: Այստեղ սեփական եժան վառելանյութը չկա, վորը վտարեր թանգարժեք նավթը, վորը Վոլգայի արդյունաբերության համար այն հացը լիներ, ինչ, ասենք, Դոնեցի ածուխն և Ուկրայինացի լեռնաբղյունաբերական ռայոնի հսկայական արդյունաբերության համար: Յեվ ահա բանից գուրս և գալիս, վոր Վոլգա-Դոն ջրացքի անցկացումը, ըստ մեր շատ մանրակրկիտ կատարած տարի ֆալին հաշվումն ըի,

Վոլգայի, Վոլգայի քաղաքների գիծը դարձնում է Դոնեցի ավազանի ռայոն: Իրոք, յեթե ճիշտ ե, վոր Ստալինգրադից մինչև Նիժնի-Նովգորոդ մեր ունենաւիք 2300 կմ: Հեռավորությունը արժեքով հավասարազոր ե ընդամենը 269 կմ: յերկաթաղային փոխազրության, ապա այդ ցույց ե տալիս, վոր մենք այդպիսով Վոլգան ընդհուպ մինչև Նիժնի-Նովգորով Դոնեցի վառելանցութիւնը գործողության անմիջական շրջանի մեջ ենք առնում: Դժվար ե պատկերացնել, թե այդ ինչ հսկայական նշանակություն կունենա Վոլգայի գողջ եներգետիկայի համար: Կհավասարակշռվի շարժումը գետովը գեղի վար և վեր, կաճի Վոլգայի ամբողջ նավագնացության հասութաբերությունը, կծաղկի Վոլգայի արդյունաբերությունը: Մասնավորապես կփոխվի և Բալախնայի ելեկտրոկայանի վիճակը: Բալախնայի ելեկտրոկայանի զորությունը սահմանափակում ե նրա տորֆի ճահիճների ռեսուրսներով: Մենք վախենում ենք այդ միավորը չափազանց ուժեղացնելուց, վորովհետև յերկյուղ ենք կրում, թե կողառենք տորֆի ճահիճները, և կարծում ենք, թե կայանն անժամանակ իսութիւնստի: Խսկ յեթե այնպես լինի, վոր մենք Վոլգայի ռայոնում կարողանանք Դոնեցի ածուխը մինչև Նիժնի-Նովգորով տանել այնպես, վոր վերջինս կարծի թե Դոնավազանից ընդամենը 200 կմ: Հեռավորությունը ունենա, ապա Բալախնայի կայանը տորֆն սպառելուց հետո կանցնի Դոնեցի ծարրաքարին: Մենք կարող ենք չվախենալ տորֆն սպառելուց և ուժեղապես մեծացնենք Բալախնայի աշխատանքը: Հաշիվերից պարզվում ե, վոր այդ ելեկտրոկայանի ծարրաքարով բանելը կըրկ-

նակի ավելի եժան կնսուի, քան այժմ առլիփով և նստում:

Յերկաթուղային տրանսպորտն իր շահագործման ծախսերն առաջիկա հնգամյակի համար հաշվում է, մոտ 8 միլիարդ ռուբլի, իսկ յեկամուտները՝ կլոր թվով, մոտ 3 միլիարդ ռուբլի: Այսպիսով դուք առանվազն 11 միլիարդ ռուբլի: Այսպիսով դուք առանում եք, վոր յերկաթուղային իրենց լեկամուտներով ծածկում են ծախսերը: Գերածախսը նրանից ե առաջանում, վոր յերկաթուղային տրանսպորտը զեկավարում և տրանսպորտի բոլոր տեսակները և անց ե կացրում նոր շինարարության մեջ ծրագիրը: Ծախսերի ու յեկամուտների այս հարաբերությունը, վոր շահագործման գարձակից ե վոչվում, հինգ տարվա ընթացքում առնվազն 78-ից 63⁰/0-ի կիջնի: Սա արդեն առքում առնվազն 27⁰/0-ով կաճի, ապահանքային վագոնինը՝ առնվազն 46,5 տոկոսով, գնացքի քաշը կավելանա 20 տոկ., շուգեկառքի վերանորոգման որերի կորուստը 50-ից գուն 25-ի կիջնի: Այս առենը տրանսպորտային արտավանքի արժեքը հնգամյակի ընթացքում առնվազն 25-30 տոկոսով կիջեցնի:

Ինչ վերաբերում է ողային արանսպորտին, ինկատի ունենալով ժամանակի սղությունը, թույլ տփեքին միայն նշել, վոր մենք նրան մոտ 100 միլիոն ենք հատկացնում: Այստեղ չի կարելի տեղում կանգնած հատկացնում: Այստեղ չի կարելի տեղում կանգնած մնալ և պետք ե տրանսպորտի այդ տեսակի համար, վոր զարգացման բավականին դրական հույսեր ունի, մեկնման բաղա նշել:

Յերկու խոսքով կանդ կառնեմ նույնպես մեր, ժողովրդական կապի, փոստի և հեռագրի աշխատանքի վրա։ Այդ գործի զարգացման ծավալն այնպիսի յե, վոր մոռավորապես 85—90 հազար հոգու անձնակազմ, այսինքն կայունացրած անձնակազմ ունենալով՝ աշխատանքի արտադրողականության 80% հավելում և նկատի առնվում։ Սպասարկման վերելքն այնպիսի յե, վոր քաղաքների, քաղաքի բնակչության համար նաև կբարձրանա 83-ից մինչև 92 տոկ., իսկ գյուղական բնակչության համար՝ 70-ից մինչև 90 տոկ., և հատկապես կարեոր և շեշտել, վոր ուայգործկոմների, շրջործկոմների և գյուղխորհուրդների համար 100 տոկոսին սպասարկում նկատի կառնվի։ Ուրիշ խոսքով՝ կապի աշխատանքը ծրագրվում է հնգամյակի մեջ մեր գյուղատնտեսության ունեցած դիրքի տեսանկյունով։ Սպասարկումը գլխավորապես ուղղված է գյուղերի, շնորհի և նրանց ղեկավար մարմինների սպասարկման բարձրացման կողմը։ Կապի հիմնական շինարարության համար առնվազն 360 միլիոն ռ. ներդրում և ծրագրվում։ Պետք է շեշտել վոր գերատեսչությունը աչքի յե ընկել յելքուղական գիտության ու տեխնիկակի վերջին նվաճումները մեր գործնականի մեջ փոխադրելով։ Դժբախտաբար մենք պլանի մեջ չկարողացնեք ցանկալի չափով ծավալել կապի ծառայության այն նոր խնդիրները, վորոնք կապված են ռազմակացիայի և ռազմակացիայի գործի հետ։ Մենք ամենամոտիկ ապագայում այդ բացերը կծածկենք, վորովհետեւ, իհարկե, վոչվոք չի կասկածում, թե կուլտուրական ու տնտեսական ինչ ահապին նշանակություն կունենա ռազմակացման և ռազմակի-

կացիայի ամենալավ զարգացումը։ Հիշեք, թե այդ գործին ինչպես աչալուրջ եր հետեւում վաղիմիր իլիիշը, թե ինչ ահապին հույսեր եր դնում նոս մեր Միության հսկայական տարածություններն սպասարկելու՝ XX դարի արդի հնարավորությունների վրա, վոր նույնպես քաղաքի ու գյուղի շաղկապի յուրատեսակ նոր ձեռք են։

Ժամանակի քչության պատճառով թույլ տվեք տրանսպորտի վերաբերմամբ սրանով սահմանափակվել։

Միքանի խոսք ըստ ուայնների ամենագլխավոր խնդիրների մասին։

Այս հնգամյակրւմ ինդուստրիայի բազան գեռես մնում են յերեք գլխավոր ռայոն՝ Լենինգրադինը, Կենտրոնական - արդյունաբերականը և Հարավայինը լեռնարդյունաբերականը։ Միատեղ առաջ նրանք ամբողջ արդյունաբերության հիմնական ֆոնդերի 67 տոկոսն են։

Ցես հնարավորություն չունեմ ինձ մնացած ժամանակի ընթացքում կանգ առնելու ուայններից յուրաքանչյուրի մանրամասն բնութագրման վրա։ Ցես միայն ցանկանում եմ միքանի առանձին ցուցմունքներ անել, վորոնք, ըստիս, կարեոր և առաջին շաբաթ վերցնենք, ասենք, Լենինգրադի ուայնը։ Նա արդյունաբերության կարիքների համար ստանում է միլիարդ ռուբլի։ Դուք զիտեք, ընկերներ, վոր նրանում մետաղամշակումն առաջին առաջին տեղն է բռնում։ Դուք պետք են հիշեք, վոր Լենինգրադի գործարանների այնպիսի հսկաներ, ինչպիսին «Կարգության» ե, նևակի և իժևսկի զործարաններ Պուտիլովեցն» ե, նևակի և իժևսկի զործարաններ և այլն, իրենց վերակազմակերման համար ները և այլն, իրենց վերակազմակերման համար միլիոնավոր ռուբլիներ են պահանջում։ Այդ տասնյակ միլիոնավոր ռուբլիներ են պահանջում։

վեր սկազմավորումը ծրագրվում է մեր տնտեսության նոր կաշիքների կապակցությամբ: Լենինգրադի առաջավոր գործարանների համար մենք յեռանդագին առաջ ենք քաշում նրանց կոռոպերացման գաղափարը: Հենց «Կարմիր Պուտիլովեցի» աշխատանքները տրակտորային գործում մեզ ցույց տվին, թի ինչպես մեզ համար կարեոր և այս հնգամյակում ամենուրեք, ուր հնարավոր ե, մի ամբողջ շարք գործարաններ իրք միասն սկան կոռոպերացիա կապել, շաղկապել: Այսպիսով մենք մի գործարանի բացերը կարող ենք ծածկել մյուս գործարանների համերաշխ աշխատանքով: Բայց յես կասիի, վոր այստեղ լենինգրադի ընկերների առաջ ավելի խոշոր կարգի խնդիր կա: Յեթե մենք մեր շինարարական առաջարկություններով յինթաղրում ենք վկաց տարրվա ընթացքում մհծացել Ռւբալի արդյունաբերական հիմնական ֆոնդերի հզորությունը, յեթե յենթաղրում ենք այս հնգամյակում Սիբիրում, Կուզնցիկ-Ալտայսկի ույոնում այնպիսի արդյունաբերություն ստեղծել, ինչպիսին միսչե վերջին տարին կար ամբողջ Ռւբալում, ապա դուք պետք ե պարզ պատկերացնեք, թե այդ ույոնուների համար ինչպես կարելոր և լենինգրադի պես կենտրոնի ոժանդակությունը:

Յես կարծում եմ, վոր կոռոպերացիան, վոր իրականանալու յե լենինգրադի մասշտաբով, պետք ե գուշակորդի լենինգրադի բանվորների, լենինգրադի պրոլետարիատի նոր արշավին, այդ նոր առաջ յեկող ույոնական ինդուստրիալ կենտրոններն ընդգրկելու, նրանց ոգնելու համար: Յեթե իր ժամանակին, ուղաման պահուն լենինգրադի բանվորներն իրենց ակ-

տիվությամբ այն ժամանակվա պարբարի վիճակն ելին վորոշում, ապա յես հույս ունեմ, վոր այժմ ել լենինգրադի պրոլետարիատի ակտիվությունը, նրա հոգածությունը և նրա անսիջական կապն այդ ինդուստրիալ նոր ույոնուների հետ մեզ կոգնեն այս ճակատում ել նույնպիսի հաղթանակ տանելու, ինչպիսին մենք տարել ելինք ուղմական ճակատում: Այդ ուղամական տեսակետով ել ե անհրաժեշտ: Լենինգրադը սահմանամերձ շերտ ե, և մեզ համար կարեոր ե, վոր լենինգրադի մի ամբողջ շարք արտադրություններ իրենց զբանակներն ունենան, վորպեսզի կարիքի դեպքում կարելի լինի լենինգրադի կենդանի ուժը վազորք պատրաստած ույոնուները փոխադրել, վերջիններս ել կարողանալին ոգնել կարողանալին ուղմական պաշտպանության կարիքի դեպքում իսկուն աշխատել: Լենինգրադը, դուք գիտեք, ներկայումս հսկա- յական ելեկտրաշինարարությամբ ե զբաղված: Այստեղ գլուխ ե բերվում Սիբիրի կառուցումը 80 հազար կիլովատտով, և, այսուամենախնիվ, չնայած Վոլխովի հոչակալ աշխատանքին, ելեկտրական քաղց ե զգում: Կազ Մենք պետք ե մտածենք տորֆի նոր ցենտրալի կառուցումն սկսելու մասին: Անհրաժեշտ ե, վոր սկսենք տորֆի նոր կալանչ՝ փոքր վիշերայի կառուցումը: Այստեղ լենինգրադի աշխատավորների առաջ նոր խնդիրներ կան: Տորֆի նոր ցենտրալ կառուցելը քիչ ե, պետք ե ոգնել, վոր տորֆը վառելանյութի նոր շուկա դուրս գա: Մենք կարծում ենք, վոր մամլելով շուկա դուրս գա: Մենք կարծում ենք, վոր մամլելով տորֆը, նրանից ելեկտրականություն, կիսակոկս, կոկս ե գաղ ստանալով, կատանանք մի վառելանյութ, վոր հեռավոր փոխադրությունների յե ընդունակ, ազ-

Նըվացրած մի վառելանյութ, վորը կարող ե ոգնել մեր կենտրոնների կենցաղային և կուլտուրական կարիքներին: Լենինգրադի ընկերների աշխատանքը պիտի ողնի հենց արդ ուղղությամբ՝ լուծելու տորփի արդյունաբերության առաջ կանգնած նոր ինդիրները: Յեթե լենինգրադի ջերմատեխնիկ ինժեներ Մակարյանը ներկայումս իր հնոց վառելու յեղանակով համաշխարհային ունիորդի յե հասել, ապա պիտի հուսալ, վոր լենինգրադի աշխատավորների նոր աշխատանքներն այդ բնագավառում նոր խոսք կասեն և տորփին կոգննն այն տեղը բռնելու, վորը նրան ըստ իր բնական պաշարների վայել ե բռնել:

Լենինգրադը մտածելու յե նաև թերթաքարերն ոգտագործելու մասին: Յեթե նա կանոնավոր լուծի իր շուրջը բավականաչափ քանակությամբ գտնվող թերթաքարերի ողտագործման խնդիրը, — իսկ այդ հնարավոր ե անել, վորովհետեւ այժմ կպրախառն ածուխների վերամշակումը կատարվում է հատուկ ձևով, տեխնիկան այն կապում է մի ամբողջ շարք նոր, մինչև այժմ անհայտ յեղանակների հետ, — ապա նա վորգային ել կոգնի, վորովհետեւ քանի դեռ մենք չենք ի բականացրել վոլգա-դոնյան կառուցումը, Միջին Վոլգան կարող ենուալ մեծ ելեկտրոկայան կառուցելու, վորի բազան մերձվոլգյան թերթաքարերը լինեն:

Յերկրորդ ուսունը, դուք զիտեք, լենինական-արդյունաբերական ուլյոնը կամ, ավելի ճիշտ, ուլյոններն են: Այն, ինչ մենք այստեղ առաջ նշում եյինք իբրև մեկ ուլյոն, ներկայումս մի շարք ուլյոնների յե բաժանված: Արդյունաբերության կապիտալ շինարարության ներդրումներն այստեղ կլոր թվով մոտ

Յ միլիարդ ոուբլի լեն ծրագրված, և Ա. խմբի՝ ծանր արդյունաբերության ներդրումները հատկացումների մեջ առաջին տեղն են բռնում, կազմելով բոլոր ներդրումների մոտ 60 տոկ.: Մենք մեծ հույսեր ենք կապում մերձմուկովյան ածուխնին, ինչպես արդեն նշեցի:

Յենթադրվում է ավտոմոբիլի գործարան կառուցել, վոր 100 հազար մեքենա լի արտադրելու, լենթադրվում է ֆուֆատ-պարարտիչի գործարաններ կառուցել: Մերձմուկովյան ուայոնում ածուխի արդյունաբերությունը ծրագրված է 1927 թվի հնգամատիկը: Մենք պետք ե շինենք վոչ թե պարզապես Բոբրիկովսկի ելեկտրոկայան, այլ ելեկտրոգիմիական մի կոմբինատ աղոստալին ու ֆոսֆորային պարագահներ և սինթետիկ ամմիալ ստանալու համար:

Մերձմուկովյան ածուխի ավագանի մեջ են մշտնում հենց ֆոսֆորիտի շերտերի յերկու մեծ բռնու:

Սակայն կտպիտալ շինարարության կողմից ամենաչքի ընկուղ տեղը պիտի Ուկրայինան բռնի: Յեթե լենինգրադի համար արդյունաբերական կապիտալ ներդրումներ ծրագրվում են մեկ միլիարդ ոուբլու, յեթե լենինական-արդյունաբերական ուայոնների համար միատեղ առած մոտ 3 միլիարդ ոուբլի յե հատկացվում, ապա Ուկրայինան 4,2 միլիարդ ոուբլի լի ստանալու: Այստեղ մեր առաջ լինում է առաջին հերթին Դոնեցի ավագանի հսկայական շինարարական խընդիրը: Մենք Դոնավագանի արտադրողականությունը բարձրացնում ենք հնգամյակի սկզբի 27 միլ. տոննից մինչև 53 միլ. տոնն հնգամյակի վերջում, այսինքն Կրկնապատկում ենք: Հինգ տարվա ընթացքում մենք նոր Դոնավագան ենք ստեղծում, իսկ կապիտալիստ-

ները հին Դոնավազանը 40 տարվա ընթացքում եյին շինում, Շինարարական այս հսկայական աշխատանքը նրանով և ավելի դժվար, վոր մենք ուշացրել ենք յերկրաբանական և արդյունաբերական հետախուզությունները: Մենք պետք ե մեծ զգուշությամբ ծավալենք հանքահորերի նոր շինարարությունը, իսկ ժամանակը թոշում ե: Աշխատանքի մասշտարք նրանից ել ե տեսնը վոր, վոր մենք տարեցտարի պետք ե հիմք դնենք 10—12 խոշոր հանքահորի և գործի մեջ խոշորացնենք, վերաշնենք հին հանքահորերը: Հին հանքահորերի նըման վերաշինում, և հետո ել խոշորացում ծրագըրված ե շինարարական 50 որյեկտի համար: Մենք նըկատի ունենք յերեք հսկա հանքահոր կառուցել. կարեք կլինի ածուխի արդյունահանման մեքենայացումը 70 տոկոսով մեծացնելու: Վորպեսզի շաղափող գործիքների աշխատանքը յետ չմնա աշխատանքի այն մասից, վոր կապված ե տրանսպորտային կարգի աշխատանքի հետ, հարկ է լինում ավելացնել այսպես կոչված «ցիլիների» թիվը: Հիշենք, վոր Դոնավազանում սուր ե դրված ջրի մատակարարման հարցը, վոր մենք պետք ե ահագին միջոցներ դնենք բնակարանային շինարարության մեջ ամբողջ շենքը ստեղծելու համար:

Դոնեցի ավագանի ելեկտրիֆիկացիան ուշացել ե. սա փաստ ե: Մենք պետք ե շտապով շինենք Զուկովի ելեկտրոկայանը, բայց պետք ե մտածենք նաև Լիսիշանսկի կամ Տուկովսկի ելեկտրոկայանների շինարարության մասին, միաժամանակ շարունակելով աշխատանքը մի ամբողջ շարք գործարանային ելեկտրական կայանների վրա: Դուք տեսնում եք, թե ինչ մասշտարության այդ հսկայական աշխատանքները:

Կենտրոնական արդյունաբերական ռայոննի ելեկտրական գլխավոր միավորումը հնգամյակի վերջում մեզ կտա 3 ու կես միլիարդ կլվ.-ժամ, այսինքն ավելի, քան մինչպատերազմյան Ռուսաստանում բոլոր ելեկտրոկայաններն եյին տալիս: Ելեկտրոներգիա մշակելու այսպիսի մասշտարք նկատվում ե միայն Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում յերկու տեղ և մի տեղ ել կանադայում: Մենք Դոնեցի ավագանում ավելի խոշոր կարգի մեծություն ենք ծրագրում: Հնգամյակի վերջում Ուկրայինալի ուայոն ական ելեկտրոկայանների մշակումն արդեն կանցնի 4 միլիարդ կլվ.-ժամից:

Հետեւալ հնգամյակում, լիովին գործի գցած Դնեպրոստրոյով, ելեկտրահաղորդումը 6 միլիարդ կլվ.-ժամ կլինի, իսկ սահմանված զրությունը՝ 1300 հազար կլվ.: Սա կլինի մեծագույն գերազոր միավորներից մեկը, վոր համաշխարհային ոեկորդին ե մոտենում: Յես կլինը ձեր ուշադրությունը դարձնել այսպիսի թշվերի վրա: Ուկրայինալի մեքենաշինման աճումը ծրագրված ե 5,4 անգամ, դիզելաշխնմանը՝ 5,2 անգամ, ընդհատվող հոսանքի մեքենաների շինելունը՝ 3,8 անգամ, ապահարատուրայինը՝ 4,8 անգամ, շոգետուրողեներատորներինը՝ արտադրած 45 հատից մինչև 460 հատ և այլն և այլն: Յես կարծում եմ, վոր իրենց մասին հենց այս թվերն են խոսում: Յեկ յերբ ուկրայինացիները վիճում են ավտոմոբիլային լրացուցիչ գործարանի մասին, թերագնահատում են այն, վոր իրենք ամուր դիրքեր արդեն բռնել են:

Յես ասել եմ արդեն, թե Ուրալն այդ ժամանակի ընթացքում պետք ե բոլորսվին վերաշխված լինի, թե

նրա արդյունաբերական հիմնական ֆոնդերն ավելիքան 6 անգամ կմեծանան: Յես չեմ կարող մանրամասն կանգ առնել Ուրալի արդյունաբերության ընութագրման վրա: Հավանականաբար ընկ. Կուրիշիկը կանցնի Ուրալի արդյունաբերության ըոլոր տեսակներին: Ուզում եմ ձեր ուշտղությունը դարձնել Ուրալի արդյունաբերական վերակառուցման վիճակի մասին ամենամեծ չափով հոգատար լինելու անհրաժեշտության վրա ելի այն պատճառով, վոր Ուրալը մեր պաշտպանության հիմնական բազան ե:

Ընկերներ, վոչ մի կասկած չկա, վոր չենք կարող հուսալ, թե խաղաղ հանգստանալներս անվերջ ե. Նա ժամանակավոր ե: Մենք շատ անգամ պետք ե վերադառնանք մեր պլանը պաշտպանության կարիքների տեսակետից գնահատելուն: Յել ամեն անգամ մեր առաջ կծառանա Ուրալի արդյունաբերության դարգացման, այնտեղ քիմիական գորավոր մի բուն, մետաղամշակման հզոր որգաններ կառուցելու հնարավորության հարցը, ամեն անգամ Ուրալը, նրա դրությունը ուշադրության կենտրոն կլինեն:

Յես պետք ե վերապահություն անեմ, վոր մեր հնգամակի չմշակված հատվածներից մեկը զինվորական գերատեսչության կարիքների շարադրանքն ե: Յես կարծում եմ, վոր մեր բանավոր արած ծրագրութների մեջ ել շատ բան այդ ուղղությամբ կարիք կլինի վերականահատելու: Հոժարությամբ համաձայն եմ զինվորական գերատեսչության ցուցումին, թե մեր պլանի մեջ զինվորական գերատեսչության կարիքները թերամշակ են: Կարող ե պատահնել վոր մեր հնգամայա պլանում միքիչ նվազեցրած լինենք այդ կարիքները: Բայց

մենք, ընկերներ, մեր թվերը կուռք չենք դարձնում մեղ համար. պլանի թվերին մենք նախում ենք իբրև կողմորոշող (օրիենտիր) թվերի: Մի մոռանաք, ընկերներ, վոր նախքան հնգամայա պլանի թվերի կենսագործվելը դրանք մի շարք դեպքերում տարեկան պլանների կոնտրոլ թվերի մեջ կվերանայվեն, և կարծում եմ, վոր վոչ միայն այդ հատվածում, այլ և ուրիշ հատվածներում անհրաժեշտ կլինեն տեղաշարժումները: Սակայն, ինարկե, նրանք չեն կարող վոչ մի հատուկ բեկում մացնել պլանի՝ իբրև ամբողջական սիստեմի՝ մեջ:

Անհրաժեշտություն ունենալով սեղմել զեկուցմանը այս մասը, յես կինդրեյի միայն հետեւալը նշել: Չնայած վոր մենք ամենագլխավոր ուայոնները նրանց սպասարկման գործում ասածվա պիս ուսցնում ենք, այնուամենայնիվ այս պլանի մեջ բավականաչափ ամուր նշված ե արդյունաբերության դիպի արևելք առաջընթանալու գիծը, նոր ուայոնների, ազգային հանրապետությունների վերելքի գիծը:

Իսկապես, յեթե ներկայումս արդյունաբերական հին ուայոնները հիմնական ֆոնդերի կողմից դասավորվում են այն կարգով, վոր կենտրոնական-արդյունաբերական ուայոնները բոնում են 30 տոկ., Ուրալինան՝ 26,7 տոկ., Լենինգրադը՝ 10 տոկ., անգրկովկասյան հնարապետությունները՝ մոտ 10 տոկ., Ուրալը՝ 4,2 տոկ., ապա հնգամայա վերջում հիմնական ֆոնդերն արդեն ուրիշ կերպ են դասավորվում—ՈւԽՍՀ՝ 26 տոկ. (իսկ 26,7 եր), կենտրոնական-արդյունաբերական ուայոնները՝ 21,6 տոկ. (իսկ 30 եր), Ուրալը՝ 9,5 տոկ., Լենինգրադը՝ 7,6 տոկ.: Թյուրքմենստանի արդյունաբերության հիմնական ֆոնդերը կամեն 3 ու կես ան-

գամ, Ուզբեկստանինը, Ղրիմինը և ԿՍՄ՝ 4 անգամ, Կազակստանինն ու Ներքին Վոլգայինը՝ 4 ու կես անգամ և այլն։ Կարող ե արդյոք պլանի մեջ նախատեսվել մի վորոշ ռեզերվ՝ ռայոնների միջև ուժն ու միջոցները վերադասավորելու համար։ Արդյունաբերության ֆինանսական պլանի մեջ ըստ ոպտիմալ պլանի ունենք մոտ մեկ միլիարդ ռուբլու ռեզերվ, բացի այդ, պետք է նույնպես մոտ կես միլիարդ պահեստի միջոցներ և գարկային սիստեմով մոտ 200 միլիոն ունենք։ Մենք այդ ռեզերվներն ի միջի այլոց նրա համար ել ենք թողել, վորպեսզի հնարավորություն ունենանք միջոցները ռայոնների միջև վորոշ չափով վերաբաշխելու։

Ընկերներ, թույլ տվեք հիմա անցնեմ պլանի սոցիալական հատածին։ Յեթե իմ նախընթաց բացադրության մեջ յես աշխատում եյի թեկուզ ընդհանուր գըծերով ցուց տալ ձեզ պլանի տեխնիկա-տնտեսական կողմը, ապա պլանն ամրողացնեմ հասկանալու համար պակաս ուշադրություն չպիտի դարձնեք նրա սոցիալական հատածին։ Արդ, բնչ ընդհանուր ցուցիչներ պետք ե այստեղ զատենք։ Այդ, ըստիս, յերկրի հիմնական ֆոնդերն են, այսինքն ստացվածքային կարողությունը տնտեսական կենդանի մարմնի մեջ։ Ի՞նչ պես ե նա բաշխվում մի կողմից պետական և կոռպերատիվ և մյուս կողմից մասնավոր հատվածների միջև։ Ներկայումս նա բաժանվում ե այնպես, վոր մենք 50-ական տոկոս ունենք այդ հիմնական ֆոնդերում՝ մի կողմից պետական և կոռպերատիվ հատվածում, մյուս կողմից մասնավորում։ Հնգամյակի վերջում ուժերի ուրիշ հարաբերակցություն կինք։ Հիմնական Փոնդերի

ուղիղ յերկու յերրորդը կցենվի սոցիալիստական համածում յեզ մեկ յերրորդը՝ մասնավոր։

Յեթե պլանի սոցիալական հատածի այդ մասից անցնենք ուրիշ կարեռագույն մասերին, ապա հ որկ կլինի առաջին տեղը քաշել այն առաջընթացությունները, վոր մենք կունենանք պրոլետարիատի դրության մեջ։ Ամենից առաջ կնշեմ, վոր այս պլանով ծրագըրված արդյունաբերության վերակազմավորումը կա գիտալիստականից նրանով սուր տարբերություն ունի, վոր նրան միաժամանակ ուղեկցում ե աշխատող ուրությաների թվի վոչ թե նվազումը, այլ ավելացումը։ Վարձու ամբողջ աշխատանքի համար այդ ավելացումը հաշվում ե 4 միլիոն նոր բանվոր։ Այդ տոկոսն առանձին ճյուղերում միատեսակ չե։ Մինչդեռ տը սնապորտի անձնակազմն աճում ե ընդամենը 50 տոկոսով, շինարարական բանվորների բանակը՝ 126—200 տոկոսով ե աճում, վոր յես, իմիջի այլոց, նշել ևմ։ Պրության ամրապնդությունը հաշված նաև շինարարական բանվորներին, ամբողջ յերկու միլիոն մարդով ավելանում ե։ Հնգամյակի վերջում արդյունաբերական բոլոր բանվորները լոթժամյա բանվորական որվա կանցկացվեն։ Բանվորական որվա կրծատումը տարվա մեջ 159 ժամ կանի, վորը հնարավորություն կտա գործող անձնակազմի մեջ 300 հազար նոր բանվոր ներս առնելու ձիշտ ե, բանվորների բանակի այդ մեծացումը խիստ տարբերվում ե նախորդ ժամանակաշրջանի աճումից ու տեմպից, բայց վասան այն ե, վոր մենք, այնուամենալիք, մեծացում ունենք, այնինչ վերակազմավորման համանման պրոցեսսներն Արևմուտքում ամենուրեք բանվորների բանակի սուր կը ը-

ճատումով են ուղեկցվում: 1932—33 թ. միայն ցենզային արդյունաբերության բանվորների թիվը կլինի 4.080 հազար. մոտ 35 տոկ. աճ: Անվանական աշխատավարձը կաճի 47 տոկոսով, իրականը՝ 71 տոկոսով: Վերլուծումը ցուց է տալիս, վոր, ասենք, Մոսկվայի համար իրական աշխատավարձի մակարդակով կանցնենք Բերլինի ու Պարիզի բանվորներից ու կըսկըսենք մոտենալ Լոնդոնի բանվորների ստանդարտին, կենսական մակարդակին:

Գործազրկության տեսակետից բանվոր դասակարգի գրությունն ինչ կլինի: Այդ նույնպես չափանց կարեռ մոմենտ ե պլանի սոցիալական հատածի մեջ, մանավանդ յեթե հիշենք, վոր ենց այստեղ եյին մեր ամենամեծ յերկուդուները: Միության ազգարնակությունն այդ հնդամյակում կաճի 18 միլիոն մարդով: Զափահաս բանվորների աճը կլինի 9 միլիոն: Ավելացրեք սրան 9 միլիոն, վոր մենք համարում ենք գյուղում ավելացող աշխատանք, ավելացրեք մեկ միլիոնից ավելի գործազրուրկները, և ինչ ե սուացվում: Ստացվում ե աշխատանքի 19 միլիոնանոց բանակ, վոր մենք պետք ե վորեն կերպ զբաղեցնենք՝ գործազրկությունը հաղթահարելու համար, թե պետ ե մենք 4 միլիոն նոր բանվոր ենք նախատեսում, բայց և այնպիս այդ թվից մինչև 19 միլիոնը շատ հեռու յի: Իսկ բնչ ճանապարհով ե լուծվում այդ գժվարագույն խնդիրը: Մենք մի շարք բարանսներ, ազլուսակներ ենք տպագրել վորոնք պատկերում են մեր կենդանի աշխատանքի յեկամուտներն ու ծախսերը, և այդ աղյուսակներում դուք կտեսնեք, վոր խնդիրը լուծվում ե ամենից առաջ մեր գյուղատնտեսության բարենորոգու-

մով, նրա աշխատատարողության մեծացումով: Մենք այդ աշխատատարողության մեծ ընդարձայնում ենք ծրագրում թե հատիկացին կուլտուրաների ավելի կատարելազործված մշակման գծով, վոր աշխատանքացին նոր պրոցեսներ ե պահանջում, վոր մեր գյուղատնտեսներն են մշակել, և թե տեխնիկական կուլտուրաների, կենդանաբուծության, գյուղատնտեսական մթերքների վերամշակման գծով, և այն: Աշխատատարողության այդ ընդլայնումն այնպիսի յի, վոր գյուղում ավելացող ուժի ընդհանուր չափը առնվազն 5 միլիոնով պակասում ե: Այնուամենալիք ընդհանրապես և ամբողջությամբ մենք քաղաքի գործազրկություն ենք ստանում, վոր պլանի մեջ մոտ 800 հազար ե հաշված: Սակայն ծերության ապահովագրի մաս միջոցներով ծըրագրում ենք լրացուցիչ մոտ 200 հազար մարդ հանել: Վերջին հաշվով քաղաքի գործազրկությունը կարող ե իջնել ընդամենը մինչև 500 հազար մարդ:

Առանձնապես աշակերջուշագրություն ենք դարձնելու բանվոր յերիտասարդության անդքաղությունը կարձելուն: Մենք պետք ե առեն ջանք գործ դընենք, վորպեսզի բանվոր յերիտասարդությունը դուրս մնա յոթնամյա դպրոցների բարձր դսուստաններում նըկատվող մալզածքից: Մենք առաջարկում ենք իրական աշխատավարձի 71 տոկ. հավելումից սոցապահովագրման կարգով 2—3 տոկ. դատել թոշակացին ֆոնդից զատ մի նոր միլիարդանոց ֆոնդ ստեղծելով բանվոր յերիտասարդությանը նպաստներ տալու համար և այլպիսով նրան ապահովելով դպրոցներում, տեխնիկումներում և բուհ-երում սովորելու:

Վոչ պակաս գժվարին խնդիրներ կան մեր առաջ

անձնակաղմի հոսունության դեմ ողաքարելու գործում: Մեր ունեցած բոլոր ուժերը պետք ե նվիրենք մեր բնակարանալին գործը բարձրացնելու համար, այդ բանին տալով սուր զասակարգային ուղղություն: Հնգամակի վերջում քաղաքային պրոլետարիատի համար բնակարանալին տարածությունը պետք ե աճի 30 տոկոսով, իսկ հիմնարկությունների տներում ապրող պրոլետարիատի համար՝ մոտավորապես 40 տոկոսով: Բընակարանալին շինարարության վերելքը, վորի համար մենք առնվազն մոտ 5 միլիարդ ենք ծախսում, մեր կարծիքով անձնակաղմի հոսունության դեմ պարագրելու հատուկ ազդեցիկ միջոց ե: Կարծում ենք, վոր այդ ծախսերն արտադրական ահա գին դրական նշանակություն ունեցող հարցեր են:

Ի՞նչ ծրագրութիւննենք տեսնում պլանում ժողովը դական յիկամուտների բաշխման կողմից: Գյուղատնտեսության բաժինն ընկնում ե, վոր ինդուստրիալիզացիայի բնական հետևանք ե: Մենք այդ անկումը կ'որոշել ենք 46-ից մինչև 39 տոկոս: Մասնավոր հատվածի բաժինն ընկնում ե 47-ից մինչև 34 տոկոս: Միջին շնչի յեկամուտի աճ ամբողջ բնակչության վրա գալիս ե մոտ 60 տոկոս: Պրոլետարիատի յեկամուտը մոտավորապես 90 տոկոսով ե աճում:

Քաղաքի և գյուղի բարեկեցցության մակարդակը (մոտենալով իրար) բարձրանում ե մոտավորապես 50 տոկոսով:

Ցես արդեն խոսել եմ այն մասին, թե ինչ դեր կունենա գյուղատնտեսության սոցիալիստական հատվածը սոցիալական հատածի մեջ:

Կնշեմ, վոր գների գծով մենք այնպես ենք ըն-

թանում, վոր արտադրանքի ինքնարժեքը 35 տոկոսով իջեցնելիս մեծաքանակ առեւտում գները միայն 24 տոկոսով ենք իջեցնում, իսկ մանրածախում՝ 20 տոկոսով: Գյուղատնտեսական գների նկատմամբ մոտավորապես կայունացման գիծն ենք բռնում, վոր այնպես անհրաժեշտ ե գյուղատնտեսության բարձր շցումը խթանելու համար:

Այս բավական ե՝ տեսնելու համար, թե այս հընդամյակում ինչքան ե աճում գյուղատնտեսության սոցիալիստական հատվածը, ինչքան են ուժեղանում նըրա պրոլետարական ավանդարդի ուժերը:

Միքանի խոսք սոցիալ-կուլտուրական հատածում մեր առաջ կանգնած խնդիրների մասին: Ընկերներ, պլանը չի իրագործվի, ինթե մենք նախորոք չիրականացնենք նրա համար անհրաժեշտ կադրերի նախապատրաստման հսկայական առաջընթացությունը: Կաղըրերի պլրորիմը, սոցիալ-կուլտուրական շինարարության պլրորիմն ահագին գեր ե խաղում: Ի՞նչ ենք արել մենք այս ժամանակամիջոցում: Մենք շինարարական այդ ետապը վոտ ենք դնում կես-անգրագետ ազգայինակությունով վորը, ճիշտ ե, այնուամենալիվ չափազանց բարձրացել ե նախկին մակարդակից, վորովհետև մենք պետությունը կառավարել սկսեցինք, իերը տղամարդկանց 45 տոկոսը և կանանց 25 տոկոսն եյին գրագետ: Մենք չենք կարող հաշտվել անգրագետ ազգայինակության ալյաքան հսկայական քանակի հետ: Մեր առաջ կանգնուծ խնդիրներից զլուխ հանելու համար մենք պետք ե զպրոցներում սովորողների թիվը 50 տոկոսով բարձրացնենք: Յիթե մինչ հեղափոխական շրջանի 8 միլիոնի գիմաց ներկայումս չնդամյա պլանը — 4

գպրոցներում ունինք 15,5 միլիոն, ապա այդ թիվը առնվազն 6 միլիոնով ելի պետք ե մեծացնենք: Մեզ խնդիր ենք դնում՝ ակտիվ տարիքի բանվորների լիակատար գրագիտության հասնել, առնվազն 18 միլիոն չափահասների և դեռատիների անգրագիտությունը վերացնել: Բացի այդ անհայտեղան գուովթեքումով արհետպրոցով ընդգրկել մինչև 5 միլիոն այն ակտիվ գյուղացիներին, վորոնց մենք մեր սոցիալիստական հատվածի մեջ ենք կանչում:

Պետք ե փաստենք, վոր խոշոր արդյունաբերության մեջ ներկայումս հազիվ 800 հազար այնպիսի բանվորներ ունենք, վորոնց կարող ենք վորակավորված համարել: Սրան պետք ե ավելացնենք առնվազն 700 հազար և նրանց ամբողջ ժամանակում գործի ընթացքում վերափորակավորենք: Վորակավորումը բարձրացնել անհրաժեշտ ե, վորպեսզի ֆաբրիկաների ու գործարանների կենդանի աշխատանքի միջավայրում տեխնիկական վերազինման հետ անընդհատ ընթանալ կարողանան:

Մենք ունինք մոտավորապես 20 հազար ինժեներ, 20 հազար տեխնիկ և 11 հազ. գյուղատնտես, իսկ մեր ծրագրով պետք ե հասնենք 54 հազար ինժեների, այսինքն ավելացնենք 34 հազար, տեխնիկներին պետք ե ավելացնել 44 հազար, մեր ֆաբրությունի գլոբոցների աշակերտների թիվը պետք ե ահազին չափով բարձրանաւ: Ցեղած 11 հազարի հետ մեկտեղ անհրաժեշտ ե ունենալ 34 հազար գյուղատնտես, իսկ գլխավորը՝ պետք ե նորից ու նորից ուշազրություն դարձնենք գյուղական ուսուցիչների 400 հազարանոց այն բանակին, վորը գյուղատնտեսի առաջին ոգնականն և լինելու:

Հենց նա յե, վոր պետք ե ազրոնոմիապես զրագետ ակտիվ ստեղծելուն ոգնի: Յեթե մոտեկից դիտենք այդ ինդիրները, կտեսնենք, թե ինչու մենք, իրոք, նրանց իրազործման մասին խոսում ենք իրեն ինչ-վոր կուլտուրական արշավի մասին, ինչու կուլտուրական ճակատ խոսքն ենք կիրառում: Այդ ինդիրներն այնքան բարդ են, վոր այստեղ պետք ե մարտականորեն, մարտական լարումով գործել, իր տեսակի մի դիրքային կոիվ վարել: Մենք վոչ միայն տեխնիկներ, գյուղատնտեսներ ու ինժեներներ պետք ե ստեղծենք, մենք պետք ե զրանց նոր տիպն ստեղծենք: Մի մոռանաք, ընկերներ, վոր սոցիալիստական գրոհին զուգընթաց աճում ե վոչ միայն կուլակների և նրանց յենթարկվածների սուր հակադրումը չքափորության ու միջակների խըմբին, այլ և ինտելիգենցիայի շարքերում ել նույնական սուր սահմանածրում ենք նկատում: Մի կողմից՝ մարդիկ, վորոնք աշխատանքի այս տարիներին խակապես զնացել են մեզ հետ խտացրած ճակատով, մյուս կողմից՝ այնպիսիները, վորոնք ամբողջ ժամանակ աշխատել են հարկադրված, վորոնք այժմ ամենախորին թերագնահատությամբ են վերաբերվում շենաբարական այդ նոր, հսկայական նպատակադրումներին, այդ մարդիկ, կարելի յե ասել, մեր գեմ գարանամուտ են, նրանց նպատակակետը մեր պարտությունն ե: Այսպես կոչված տեխնիկական ինտելիգենցիայի այդ բաժնում մենք պետք ե ունենանք մեր սեփական աշխատավորները, պետք ե ընտրենք զրանց պրոլետարիատի կազմերից, պետք ե սինչեա բուհերի բարձրագույն աստիճանի գլոբոցներ պրոլետարիատի այնպիսի անցում ապահովել, վորպեսզի ամենից ավել-

դպրոցներում ունենք 15,5 միլիոն, ապա այդ թիվը առնվազն 6 միլիոնով ելի պետք է մեծացնենք: Մեզ խնդիր ենք դնում՝ ակտիվ տարիքի բանվորների լիակատար գրագիտության հասնել, առնվազն 18 միլիոն չափահասների և դիւռատիների անգրագիտությունը վերացնել: Բացի այդ անհամեստ ե գուշղթեքումով արդգրոցով ընդդրկել մինչև 5 միլիոն այն ակտիվ գյուղացիներին, վորոնց մենք մեր սոցիալիստական հատվածի մեջ ենք կանչում:

Պետք է փաստենք, վոր խոշոր արդյունաբերության մեջ ներկայումս հազիվ 800 հազար այնպիսի բանվորներ ունենք, վորոնց կարող ենք վորակավորված համարել: Սրան պետք է ավելացնենք առնվազն 700 հազար և նրանց ամբողջ մասսան գործի ընթացքում՝ վերաբորակավորենք: Վորակավորումը բարձրացնել անհրաժեշտ ե, վորպեսզի ֆարբեկաների ու գործարանների կենդանի աշխատանքի միջավայրում տեխնիկական վերազինման հետ անընդհատ ընթանալ կարողանան:

Մենք ունենք մոտավորապես 20 հազար ինժեներ, 20 հազար տեխնիկ և 11 հազ. գյուղատնտես, իսկ մեր ծրագրով պետք է հասնենք 54 հազար ինժեների, այսինքն աշխատանք 34 հազար, տեխնիկներին պետք է ավելացնել 44 հազար, մեր ֆարբործությունի գալուցների աշակերտների թիվը պետք է ահազին չափով բարձրանալ: Յեղած 11 հազարի հետ մեկտեղ անհրաժեշտ ունենալ 34 հազար գյուղատնտես, իսկ գլխավորը՝ պետք է նորից ու նորից ուշադրություն դարձնենք գյուղական ուսուցիչների 400 հազարանոց այն բանակին, վորը գյուղատնտեսի առաջին ողնականն է լինելու:

Հենց նա յե, վոր պետք է ազրոնոմիապես գրագետ ակտիվ ստեղծելուն ոգնի: Յեթե մոտիկից դիտենք այդ խնդիրները, կտեսնենք, թե ինչու մենք, իրոք, նրանց իրագործման մասին խոսում ենք իրեւ ինչ-վոր կուլտուրական արշավի մասին, ինչու կուլտուրական մակատ խոսքն ենք կիրառում: Այդ խնդիրներն անքան բարդ են, վոր այստեղ պետք է մարտականորեն, մարտական լարումով գործել իր տեսակի մի դիրքային կոկի վարել: Մենք վոչ միայն տեխնիկներ, զյուղատնտեսներ ու ինժեներներ պետք է ստեղծենք, մենք պետք է զբանց նոր տիպն ստեղծենք: Մի մոռանաք, ընկերներ, վոր սոցիալիստական գրոհին զուգընթաց աճում ե վոչ միայն կուլտուրների և նրանց յենթարկվածների սուր հակագրումը չքավորության ու միջակների խըմբեն, այլ և ինտելլիգենցիայի շարքերում ել նույնպիսի սուր սահմանածրում ենք նկատում: Մի կողմից՝ մարդիկ, վորոնք աշխատանքի այս տարիներին ինկապես գնացել են մեզ հետ խտացրած ճակատով, մյուս կողմից՝ այնպիսիները, վորոնք ամբողջ ժամանակ աշխատել են հարկադրված, վորոնք այժմ ամենախորին թերագնահատությամբ են վերաբերվում շինարարական այդ նոր, հսկայական նպատակադրումներին, այդ մարդիկի կարելի յե ասել, մեր գեմ դարձնամուտ են: Նրանց նպատակակետը մեր պարտությունն ե: Այսպես կոչված տեխնիկական ինտելլիգենցիայի այդ բաժնում մենք պետք ե ունենանք մեր սեփական աշխատավորները, պետք է ընտրենք զրանց պրոլետարիատի կաղըերից, պետք է սինչև բուհերի բարձրագույն աստիճանի գալուցներ պրոլետարիատի այնպիսի անցում ապահովել, վորպիսզի ամենից ավե-

լի տաղանդավոր բանվորները կարողանան վորքան կարելի յե շուտ աճել-դառնալ կարմիր ինժեներներ ու տեխնիկներ, գորոնց մենք կարողանալինք լիովին վստահել, տնտեսության սոցիալիստական շինարարական այս դժվարապուլն հտապում:

Ինժեների, տեխնիկի, գյուղատնտեսի իսկ տիպը պիտի այլ լինի, քան անցյալ տարիներում տեսածները: Դա մեզ պիտք չե: Դրանք պիտք ե լինեն թե սառն հաշվի և թե ամերիկական արագաշարժությամբ ու ճարտարությամբ մարդիկ և միաժամանակ մարդիկ, գորոնք նոր շինարարության վոգերությամբ են համակված: Պետք ե կարողանալ զուգակցել տեսական պատրաստվածությունը տնտեսական գործնականին, բուհների և տեխնիկումների ճակատի՝ գործող պիութարիատի շարքերին մոտենալուն: Այս բոլորը կաղմակերպչական կարգի ահագին խնդիրներ են, այս բոլորն իրականացնելն այնքան ել հեշտ չե: Բայց հենց այժմ ել մենք տեսնում ենք, թե ինչպես մեզ ոգնության են գալիս աշխատավոր ինտելիգենցիայի նոր ջոկատները, նոր ձեռվ շաղկապվելով բանվորա-պուղացիան աշխատանքի զորայուներին:

Կարծում եմ, ընկերներ, յեթե այս նյութերով, ինչ պլանին կցած մեր ֆինանսական ամփոփումի մեջ մենք տալիս ենք, հետեւելու լինենք ֆինանսավորման պիտուրներին, ապա դուք կտեսնեք, վոր այստեղ ել հաշիվը բավականին զգուշավոր ե: Զնայած վոր ֆինանսական պլանում մենք ժողովրդական յեկամուտներից տնտեսության կարիքների համար մորիլիքացիայի լինք յենթարկում մոտ 50 տոկոսը, այսինքն միջոցների այնպիսի քանակ, վորը կապիտալիստական

պետությունը կարող ե միայն մեծ լարման մոմենտին, ուղղմական պաշտպանության մոմենտին մորիլիպացիայի լինթարկել, չնայած վոր բյուջետակին մեկ սիստեմը (հավաքական նետոռ բյուջեն) կպահանջի այդ յեկամուտի 31 տոկոսը, այնուամենայնիվ տուրքերի և յեկամուտների ուրիշ ամեն տեսակի աղբյուրների հաշվին ընդհանրապես և ամբողջությամբ վոչ միայն մեծ շրջահայեցողությամբ, այլ և վորոշ ուղերձներով և արված: Սա ցուց է տալիս, վոր պլանը ֆինանսականի կողմից ել հուսալի յե կազմված: Ամբողջ խնդիրն այն է միայն, վոր այս պլանի առանձին մասերը վոչ թե կոտորակված իրականացվելին, այլ ինչպես պլանի մեջ ե նշված՝ ինչպես միասնական սիստեմ:

Հապա ինչ ե պիտք, վոր այս պլանը կենսագործվի: Յեթե ինձ հարցնեք, թե ինչ կարգով են դասավորված այս պլանի իրականացման նախադրյաները, յես կասելի. այս պլանի հաջողության առաջին և հիմնական գրավականը կուսակցության շարքերի հզոր միասնականությունն ե, կուսակցական յերկաթե հըղործուքը, վոր պրոլետարական դիկտատուրան ե իրականացնում: Յեթե այստեղ ընդհատումներ կլինեն, ապա դրանք անհապաղ կանդրագառնան թե բանվոր դասակարգի տրամադրությունների և թե այսպիս կոչշված տեխնիկական ինտելիգենցիայի լայն շերտերում: Կուսակցության ամբողջունը, միասնականությունը, նրա հաղթանակելու հավատն առաջին կարեռագույն նախադրյան ե, վորն անհրաժեշտ ե, վորպեսզի պլանը 100 տոկոսով իրագործվի:

Յերկրորդը, վոր այս հնդամյակում անհրաժեշտ

ե, խորհրդային ապարատի ամբողջ կազմակերպությունը նոր ձևով կառուցելու եւ Այդ ապարատի գըտումից զատ հարկավոր և նրա մեջ արժեքների վերագնահատում կատարել, առաջգանից ավելի մեծ ձըգտումն և հարկավոր գեպի կուսակցության դեկավարությունը:

Յեփ, վերջապես, պետք է նորաձև կապեր սահմանել խորհրդային լայն հասարակայնության հետ: Յեթե մեր արդյունաբերական աշխատանքի վերաբերյալ ասում ենք, թե «ցեռանկյան» կուսակցության, արհմիությունների և տնտեսավարների կանոնավոր աշխատանքն ինդուստրիալ աշխատանքի հաջողությունների ամենագլխավոր նախադրյալն ե, ապա պետական վողջ տնտեսական պլանի հատածում ուժերի կանոնավոր հարաբերությունը կամ, ավելի ճիշտ, կուսակցության, խորապարատի և հասարակայնության կանոնավոր կազմակերպությունը պլանի բախտըն են վորոշում: Կարծում եմ, ընկերներ, վոր մենք այս պլանը կարող ենք թե գիտական և թե տնտեսական իրականության հետ կապակցված համարել: Յես հավատացած եմ, վոր այս պլանը կոզմի վերացնելու այն տատանումները, վոր անխուսափելիորեն կապված են անցողիկ շրջանի, նոր շինարարության սահմաններում կատարված բեկման հետ, յերբ անխուսափելի նոր դժվարություններ են ծագում: Յես հավատացած եմ, վոր այս պլանը ցույց կտա անհեթեթությունը արոցկիստների պնդումի, թե ինդուստրիալիզացիան պատշաճ տեմպերն ապահոված կարող են լինել միայն այնպիսի հարաբերության վրա դեպի գյուղացիության ահագին մասսաները, յերբ այդ գյուղացիները ներկա-

յանում են իբրև իր տեսակի գաղութային ճորտեր: Պլանը ցույց է տալիս, թե ինչպես կոնկրետորեն իրականանում ե առաջնաթագությունը պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիության ամենասերտ շաղկապի հիմունքներով: Պլանը ցույց է տալիս, թե ինչպես ենք մենք իրականացնում այդ շաղկապը և ինչպես դրա տակը կնում ենք արտադրական հզոր բազիսը: Իսկ մյուս կողմից այդ պլանը հարվածում է բոլոր հոռոնեաններին, վորոնք չեն հավատում պլանային տընտեսության ուսուուրսներին, վախենում են ինդուստրիալզացիայի բարձր տեմպերից: Մենք հավատում ենք, վոր աշխատավորները կաջակցեն մեզ տնտեսության պլանային խակական ուժիններին զործում: Հենց տնտեսության պլանային ուժիմը կոզմի ամրապնդելու ինդուստրիալ առաջնաթագ տեմպը: Այ թեքածան ախոյաններին պլանը ցույց է տալիս, թե նրանց թերահավատությունը քաղաքական ինչպիսի ուրացողություն ե, Մեր ուժն աշխատավոր մասսաների հըզորության մեջ ե, վորոնք իրենց շինարարության հենց այն փուլն են թեակոխում, յերբ նրանք իրենց կամքը, իրենց նպատակները տարեցտարի ավելի ու ավելի իրական կենսագործված կաեսնեն:

Այս պլանի իրականացումն խսկապիս պայքարի զորավոր միջոց և թեքման դեմ թե դեպի աջ և թե դեպի «ձախ»: Պլանը հզոր միջոց է, վորպեսպի մենք ստեղծենք կամքի այն միասնականությունը, վոր վլաղիմիր իւիչը համարում եր մեր տնտեսական շինարարության հաջողության ամենագլխավոր և վճռող գրավականը: (**Ֆափահարություններ**):

Վ. Վ. ԿՈՒՅԲԻՇԵՎԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

Բնկերներ, ժողովրդական տնտեսության հնգամյա
պլանի կարևորագույն հարցերից մեկն ամբողջապես ժո-
ղովրդական տնտեսության և հատկապես արդյունաբե-
րության զարգացման տեմպերի հարցն եւ Այս միջա-
վայրը, վորի մեջ Հոկտեմբերին՝ հաղթանակած պրո-
լետարիատը սոցիալիզմ և կառուցում, ինչ ել վոր լի-
նի, թէ արդյունաբերության և թէ ժողովրդական տըն-
տեսության զարգացման արագ տեմպեր և պահան-
ջում։ Յեվ այն հանգամանքը, վոր մենք տեխնիկա-
պես հետամնաց լերկում ենք ապրում, մանր կոտո-
րակված գյուղատնտեսություն ունեցող մի լերկում,
վոր մենք գտնվում ենք թշնամի կապիտալիստական
շրջապատման պարագայում, մի կողմից հենց արագ
տեմպերի անհրաժեշտություն և առաջ բերում, իսկ
մյուս կազմից մեծապես խանգարում եւ, արգելակ և
լինում, վորպեսզի այդ տեմպերն իրականացվեն։ Մենք
պետք եւ, ինչ ել վոր լինի, պատմական կարճ ժամա-
նակաշրջանում հասնենք և անցնենք մեր կապիտա-
լիստական թշնամիներին, այլապես սոցիալիզմի կա-
ռուցումը չի կարող ապահովված լինել. մեզ այնպիսի
զարգացում և այնպիսի տեմպեր են հարկավոր, վորոնք
պահովելին կապիտալիստական կախումից ազատվե-
լը և մեր Միության պաշտպանունակության ուժեղա-
ցումը։ Ահա հարցերի այդ ամբողջ գումարը զարգաց-

ման տեմպերի պրոբլեմը դնում եւ իրեն մեր պլանա-
վորման կենտրոնական պրոբլեմներից մեկը։ Մենք քիչ
աշխատավորներ չունենք, վորոնք շատ ուժեղ կասկա-
ծում են մեր զարգացման մեծ տեմպերի հնարավորու-
թյանը։ Յես արհմիությունների համագումարում իմ
արած զեկուցման մեջ քաղվածքներ բերել եմ մեր
լերկության պետական մարմիններում աշխատող մեր մի
շարք տնտեսագետներից, վորոնք նույնիսկ մեր նախ-
կին, շատ ավելի փոքր հեռանկարակին ծրագրումների
տեմպերը գնահատում ելին իրեն անհասանելի, իրեն
բացարձակապես անիրական։ Յես այդ տնտեսագետնե-
րից միայն լերեքի վրա կանգ կառնեմ և քաղվածքներ
կը բերեմ։ Ահա, որինակ, տնտեսագետ Դեզեպը գրում ե.

Ի՞նչպես կարելի յե լուրջ ընդունել զար-
գացման այդ տեմպերը, յերբ նույնիսկ տնտեսա-
կան բուռն աճման այնպիսի ժամանակաշրջանում,
ինչպիսին, որինակ, Ռուսաստանն եր ապրում
1900—1913 թ. թ., արտադրանքի Փիզիկական
ծավալի աճումը և ազգային յեկամուտի աճու-
մը չեյին հասել այն տեմպին, ինչ հնգամյա
պլանով և նշանակած։ (Экономическое обозрение»

№ 5, 1927 թ.):

Ա. Ա. Նիկիտսկին «Վեստնիկ ֆինանսօվ»
որպանում (№ 7, 1927 թ.) գրում եր.

Ժողովրդատնտեսական և ֆինանսական հըն-
դամյա պլանն լայ ենթափ տա չափազանցրած ե...

պլանի բնդունած ենթափերի ոգտին պատճառա-
բանուրյունները գրեթե միւս վրիպում են նպատա-
կից։ Աներածես ե պլանի ավելի գգուշավոր և ի-
րական տարբերակ։

Մի ուրիշ հեղինակ՝ Ալբ. Վայնշտենը «ԷԿՈНО-
МИЧЕСКОЕ ОБОЗРЕНИЕ», իմեջ (№ 7, 1927 թ.) գրում է.

Հեղանիսակի հիմնական արատը ժողովրդական
տնտեսության բոլոր նյուիների զարգացումը չափա-
զանց արագ տեմպով նախագծելն ե... ուժից վեր
յեվ անիրական:

Յեվ պետք են կատար ունենալ, վոր այդ առվում
եր հնգամյա պլանի սկզբնական ուրվագծերի մասին,
վոր կազմել եր Պետպլանը ընկ. Սարումիլինի զեկա-
վարությամբ, վորտեղ, առաջինը՝ շատ ավելի փոքր
տեմպեր եին նախագծված, քան ինչ մենք հիմա չենք
նախագծում, և, յերկրորդ, տարեցտարի իջնող տեմ-
պեր, վորովհետև այն ժամանակ իշխում եր այն պատ-
կերացումը, թե վերակազմավորման շրջանը վոտք դը-
նելով մենք չենք կարող պահպանել զարգացման բար-
ձըր տեմպերը:

Բուրժուատան տնտեսագետների այդ խմբակը
1927 թվին հնգամյակի գլխավոր արատ համարում եր
ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի զարգա-
ցումը չափազանց արագ տեմպով, ուժից վեր և անի-
րական նախագծելը: Այսինչ խոսքն այսպիսի հնգա-
մյակի մասին եր, վորով լենթագրվում եր արտադրան-
քի աճում 1926—27 թ. 17 տոկոսով, 1927—28 թ.
12 տոկոսով, 1928—29 թ. 9 տոկոսով, 1929—30 թ.
9 տոկոսով, վերջապես, 1930—31 թ.՝ 8 տոկոսով: Այդ
նախագծումը, Պետպլանի առաջին նախագծումը, վորի
սկզբնական տարին 1926—27 թ. եր, անց եր կացվում
այն ժամանակ, յերբ մենք չափազանց քիչ տարրեր
ունեինք ստույգ պլանավորման համար, յերբ մենք
տակավին բավարար պատկերացում չունեինք վերա-

կազմավորման շրջանի իրական հնարավորություննե-
րի մասին, յերբ, բնականաբար, դժվար եր հաշվի առնե
տնտեսության մեր խորհրդային սխտեմի ունեցած լ
րոլոր ուսումնաբար ության արտադրանքի աճման այդ թվե-
րը — հնգամյակի առանձին տարիներում 12 տոկ., 9
տոկ., 9 տոկ. և 8 տոկ.—մի ամբողջ շարք տնտեսա-
գետներ համարում եին ուժից վեր, անիրական: Բուր-
ժուական մտքի այդ ներկայացուցիչները մեր յերկ-
րում մեծ մեղք, ժողովրդական տնտեսության համար
մեծ վնաս ելին համարում այդ նույնիսկ չափազանց
ցած տեմպերի նախագծումը:

Իսկ ոեալ իրականության մեջ իրոք ինչպես ե-
յին գնում մեր զարգացման այդ տեմպերը: Բանից
գուրս ե գալիս, վոր մենք այժմ արգեն ունենք այն
բանի ապացույցը, վոր մեր նախկին նախագծումներն
ավելի քիչ եյին, քան այն, ինչի վոր հասանք աշխա-
տանքի հետևանքով. այսպես, 1926—27 թվի համար
արդյունաբերական արտադրանքի աճում ծրագրվում
եր 17 տոկոսով, իսկ իրոք 19 տոկ. աճի հասանք:

Անցած 1927—28 թվին արդյունաբերական ար-
տադրանքի Պետպլանի սկզբնապես նախագծված 12
տոկ. աճման դիմաց մենք իրոք ունեյինք 23 տոկ.
աճ, այսինքն զբեթե յերկու անգամ ավելի. այս 1928
—29 թվին ըստ Պետպլանի լենթագրվում եր 9 տոկ.
աճում, բայց իրոք 20 տոկոսից ավելի կլինի: Արդեն
այս տնտեսական տարվա առաջին կիսամյակը լիակա-
տար ակներկությամբ ապացուցում ե, վոր քանակա-
կան ցուցիչների, արտադրանքի բնագավառում մենք
կարող ենք տված առաջադրությունն ամբողջությամբ

կատարել: Այսպիսով կյանքը գործով հայտաբերեց, վոր մենք անբավարար ելինք հաշվի առնում մեր բոլոր հնարավորությունները, անբավարար ելինք հաշվի առնում այն բոլոր առավելությունները, վոր տալիս ե մեզ խորհրդային սիստեմն իր հողի ազգայնացումով, ֆաբրիկաների ու գորարանների ազգայնացումով և պլանային տնտեսավարումով:

Գործնականը ցույց տվեց, վոր մենք ավելի արագ տեմպով կարող ենք զարգանալ, քան կապիտալիստական յերկրները: Ինչպես հայտնի է, զարգացման ամենից ավելի արագ տեմպ ունեցող յերկրը Միացյալ Նահանգներն են: Արդ, զարգացման ամենամյա ինչ տեմպ ե տիպիկ Միացյալ Նահանգների համար: Յեթե վերցնենք 1850—1860 թ. թ. տասնամյակը, այդ տարիներին զարգացման տեմպը 8,7 տոկ. և 1860—1870 թ. թ. կազմում ե 8 տոկ., հետեյալ տասնամյակում՝ 5,8 տոկ., հաջորդում՝ 4,9 տոկ., 1890—1900 թ. թ. տասնամյակում՝ 4 տոկ.: Այսպիսով Միացյալ Նահանգներում արդյունաբերության աճման առավելագույն տեմպը 8,7 տոկ. եր՝ 1850—1860 թ. թ. ժամանակաշրջանում: Մենք նույնը տեսել ենք նաև մինչեղափոխական Ռուսաստանում: Յարական Ռուսաստանում այսպես կոչված զարգացման բուռն տարիներին աճը 8 տոկ. եր, սիցին աարիներին իջնելով մինչեւ 5 տոկ. և ավելի ցած:

Այսպիսով այն տեմպերը, վորոնցով մենք աճում ենք, փաստորեն, կյանքի մեջ, շատ են գերազանցում այն ամենից, ինչ հայտնի է բուրժուական յերկըների համար և ինչ հայտնի յեր մեր մինչեղափոխական բուրժուական Ռուսաստանում: Մենք հնգա-

մյա պլանում զարգացման արագ տեմպեր ենք նախագծել: Յես մանրամասնորեն կանգ չիմ առնի թվերի վրա, վորովհետև համապատասխան թվերի մեծամասնությունընկ կրժիթանովսկին բերել ե. յես այդ թվերից միայն միքանիւը կկրկնեմ, վորոնք ամենից ավելի գունեղ պատկերում են մեր արդյունաբերության զարգացման տեմպը: Մենք հնգամյակի վերջում այս տարվա 4,100 հազար տոննի դիմաց կարտադրենք 10 միլիոն տոնն չուգուն, և տարեկան աճի տեմպը 20 տոկոսից ավելի կլինի: Քիմիտկան պարարտիչների բնագավառում հընդամյակի վերջին տարում կունենանք 8 միլիոն տոնն անցյալ տարվա սեր ունեցած 175 հազար տոննի դիմաց: Ածուխի բնագավառում հիմիկվա մեր ունեցած 36 միլիոն տոննի դիմաց կունենանք 75 միլիոն տոնն արդյունահանություն: Ելեկտրոներգիալի բնագավառում զարգացման ավելի մեծ տեմպեր կունենանք, այժմյա ունեցած 5 միլիարդ կլիմամի դիմաց կունենանք 22 միլիարդ կլիմամի: Մեքենակառուցման բընագավառում ել ավելի քան 3 անգամ աճում ենք: Արդյունաբերական տրտադրանքի աճի ընդհանուր տեմպը հնգամյակում արտահայտվելու լի 167,7 տոկոսվէ: Արդյունաբերական արտադրանքն ալդ հնգամյակում տալու լի աճենամյա 20 տոկոսից ավելի աճ: Արդյունաբերության համար այդ տեմպը վերցրած ե բոլորվին ոեալ տվյալների հիմունքով, վորոնք իրենց կատարման հնարավորության տեսակետից վոչ մի կասկած չեն ներշնչում: Արդյունաբերության համար սեր տնտեսության մյուս ճյուղերի համեմատությամբ աճման ավելի բարձր տեմպ ենք վերցրել, համապատասխան այն դերին, վոր հնգամյակի մեջ արդյունաբե-

ըութիունը խաղում և իրրե մեր վողջ տնտեսությունը սոցիալիստական ձևով բարենորոգող ուժ, իրրե ժողովրդական տնտեսության առաջավոր ճյուղ, վոր ստեղծագործության բարենորոգում և ժողովրդական տնտեսության բոլոր հատվածները, այդ թվում և գյուղատնտեսությունը:

Ինչպի են բացարձում այդ մեծ տեմպերը, ապագայի նախագծումների այդ ահազնությունը: Նրանք բացարձում են խորհրդացին սիստեմի այն առավելություններով, վորոնք հետևանք են Հոկտեմբերյան հեղափոխության մեջ պրոլետարիատի հաղթանակելու, Հոդի ազգայնացումը, արտադրության միջոցների և գործիքների սեփականության բռնագրավումը, ամբողջ տնտեսության մեջ պլանային սկզբունքը, յերկրի աշնական վերակազմավորման գործում բանվոր դասակարգի ստեղծագործ ենթօգիտայի մուլիկացիան, — այս բոլորն այնպիսի առավելություններ են, վոր ծանոթ չեն գորեւ յերկրի և գորոնք մեզ հետագալում առաջ ընթանալու համար բոլորովին չտեսնված ուժի ծակներ են տալիս:

Տեմպերի հարցը մեր զարգացման սկզբունքային կարևոր հարցն ե, և հենց այդ հարցն ե, վոր վեճելի յե վոչ միայն այստեղ հիշած բուրժուական տնտեսագետների համար, այլ և մեր կուսակցության մի ամբողջ շարք միջնաշերտերի համար:

Դուք, ինարկե, գիտեք, թե ինչ խոսակցություններ են լինում այն մասին, թե մենք չափազանց մեծ լարումով ենք գնում: Մեզ ասում են՝ չի՞ կարելի արդյոք միքիչ կամաց, չի՞ կարելի արդյոք զարգացման մի փոքր հանգիստ ընթացք վերցնել, չի՞ կարելի ար-

դյոք արդյունաբերության զարգացումը յետ պահել վորպեսզի տեմպերը գյուղատնտեսության հետ հավասարեցնենք, և այն, եալին: Այդ բոլոր խոսակցություններն այլ լան չեն, քան ինթե մեր կուսակցության, նրա վորոշ միջնաշերտերի մեջ այն մանր-բուրժուական տատանումների արտացոլում, վորոնք շատ ընական են, ինկատի ունենալով մանր սեփականատերերի հսկայական շերտերի առկայությունը մեր յերկրում, ինկատի ունենալով, վոր մենք մանր, մասնավոր, կոտորակված գյուղատնտեսություն ունեցող յերկիր ենք: Յես դրա վրա մանրամասն հետո կանգ կառնեմ: Այժմ յես ուզում եմ միայն փաստել, վոր տեմպերի հարցը մեր կուսակցական քաղաքականության կարևորագույն հարցն ե և իզուր չե մեր մի շարք համագումարներում, կոնֆերանսներում, ԿԿ պլենումներում և այլն սուր ծեծվել: Կուսակցությունն այդ հարցի վրա յե սեենում իր ուշադրությունը, վորովհետև նա սկզբունքային հարց ե վոչ միայն մեր տընտեսական քաղաքականության համար, այլ և թե յերկրի ներսը և թե գուրսը կապիտալիզմի գեմ սոցիալիզմի մղած վողջ պայքարի համար: Նա սկզբունքային հարց ե, ըստ վորի մեր՝ բայլշերիների կուսակցությունը ամենափոքր զիջում իսկ չի անելու անկումային տրամադրություններին, չհավատալու տրամադրություններին, մանր-բուրժուական խավերից, մեր միջավայրը թափանցող տրամադրություններին, վորոնք հետևանք են մեր պետական ապահարատի մի մասը ևս, բանվոր դասակարգի և մեր կուսակցության մի մասը ևս ընդգրկող մանր-բուրժուական տարերքի: Այս սկզբունքային մարտական հարցում, վորի մեջ

մենք մեր դիրքերը չպետք եւ և չենք կարող հանձնել, ժողովրդական տնտեսության հնգամյա պլանը տարավ և այլ կամաց գության ԽՎ համագումարն եր տվել:

Բայց մեզ համար, իհարկե, կարեոր են վոչ միայն զարգացման տեմպերը. պրոլետարիատի կուսակցությանը հետաքրքրողը պարզապես արտադրական ուժերի զարգացումը չե. մեզ արտադրական ուժերի այնպիսի զարգացում, ամբողջ ժողովրդական տնտեսության այնպիսի աճում և հարկավոր, վարն ապահովեր սոցիալիստական հասարակության կառուցումը: Իսկ զրա համար ամենից առաջ հարկավոր են առաջ անցնող տեմպեր ծանր ինդուստրիայի համար, ինդուստրիայի, վոր արտադրության միջոցներ, արտադրության գործիքներ և արտադրում:

Ժողովրդական տնտեսության հնգամյա պլանն ինչպես և նախագծում զարգացման հարաբերակցությունը արտադրության միջոցների և սպառման միջոցների միջև, արդյունաբերության և գյուղատնտեսության միջև:

Արդյունաբերական արտադրանքի 2,7 անգամ աճելու ընդհանուր տեմպ ունենալով, սպառման միջոցներ արտադրող արդյունաբերության կողմից այս հնգամյակում մենք ունենք 2,3 անգամ աճում, իսկ արտադրության միջոցների արտադրության կողմից աճում ենք 3 $\frac{1}{4}$ անգամ: (Տես աղյուսակը՝ եջ 113):

Նույնը և կապիտալ աշխատանքների նկատմամբ: Արդյունաբերության կապիտալ ներդրումների գումարը, չեթե վերցնենք ԺՏ-ի կողմից պլանավորվող արդյունաբերությունը ելեկտրիֆիկացիայի հետ մեկ-

ԺՏ-ի կողմից պլանավորվող արդյունաբերության բովանդակ արտադրանքը
(Անփոփոխ գների միլիոն ռուբլիներով)

	1927/28 թ.		1932/33 թ.		Աճումը %
	Բացարձակ	%-ով	Բացարձակ	%-ով	
«Ա» սյունյակ . . .	4.438,6	41,0	14.272,5	49,3	321
«Բ» . . .	6.385,5	59,0	14.708,3	50,7	230
Ընդամենը	10.824,1	100,0	28.980,8	100,0	267,7

տեղ, կազմում ե 15,3 միլիարդ ռուբլի: Այդ գումարից 70 տոկոսը գնում ե ծանր ինդուստրիալին, արտադրության միջոցներ արտադրող ինդուստրիալին, և միայն 20,6 տոկոսը՝ թեթև արդյունաբերությանը: Նոր շինաբարության տեսակաբար կշնոր 1927/28 թ. 38,4 տոկոսից աճում հասնում ե 1932/33 թ. 57 տոկոսի: Հետևանքը, ԺՏ-ի պլանավորած գործող հիմնական կապիտալը 9,7 միլիարդ ռուբլուց աճում ե մինչև 23,3 միլիարդ ռուբլի կամ 238 տոկոսով: (Տես աղյուսակը՝ եջ 114—115):

Ծանր ինդուստրիալից, արտադրության միջոցներ արտադրող արդյունաբերությունից, իհարկե, ամենից առաջ պետք ե կանգ առնել մեր պլանի եներգետիկ մասի վրա և ամենից առաջ ելեկտրոշինարարության վրա:

Ընկ. Կրժիքանովսկին արդեն առել ե, վոր ըստ հնգամյա պլանի ելեկտրոներգիայի արտադրությունն

Ց Ա Ր Ա Տ Ա Բ Ե Ր Ա	Կա						
		1927/28թ.	1927/28թ.				
Կապիտալ աշխատանքների ֆիզիկական ծավալը (1927/28 թ. գներով)			2.176,0	3.225,0	4.571,0	5.204,0	5.809,0
ա) ելեկտրաշինաբարության հետ մեկտեղ	1.584,9		1.790,0	2.730,0	3.970,0	4.500,0	4.950,0
բ) տռանց ելեկտրաշինաբարության	1.302,9						
Կապիտալ ծախսումներ (ինդեքսի իջումն հաշվի առնելով)			1.976,6	2.683,4	3.392,7	3.589,2	3.699,6
ա) ելեկտրաշինաբարության հետ մեկտեղ	1.584,9		1.619,8	2.265,4	2.939,7	3.103,2	3.158,6
բ) տռանց ելեկտրաշինաբարության	1.302,9		1.247,2	1.738,9	2.276,7	2.400,5	2.409,0
Նույն թվում «Ա» սյունյակում	938,1		362,6	499,5	602,0	608,8	619,6
» » «Բ» »	364,8						
Կապիտալ ծախսումների ուղղությունը (ոայոնական կայանների ելեկտրաշինաբարության հետ մեկտեղ)			807,2	1.304,2	1.873,4	1.991,1	1.982,8
ա) նոր շինաբարություն	607,4		762,9	795,6	778,8	769,2	790,8
բ) ընդույնում և վերակադարձավորում	712,9		144,4	149,2	151,1	153,5	161,6
գ) հիմնական վերանորոգում	123,1		146,6	248,9	330,9	362,5	383,9
դ) ընակշինաբարություն	115,7						
ե) զիտական-ուսումնասիրական և հետախուզական աշխատավայրերի	24,1		38,7	105,3	133,4	149,8	161,6
Կապիտալ ծախսումն. բաշխումն ըստ խմբերի, %-%-ով			77,0	76,5	77,5	77,3	76,0
» » «Ա»	72,0		22,3	22,0	20,5	19,6	19,6
» » «Բ»	28,0						
Նոր շինաբարության տեսակաբար կշիռը կապիտալ աշխատանքների մեջ (ոայոնական ելեկտրոնակայանն. հետ մեկտեղ)	38,4		41,9	50,2	57,2	58,2	57,0
Գործող հիմնական կապիտալը տարվա վերջին (1927/28 թ. գներով)	9.783		10.874	12.761	15.850	19.455	23.366

Պիտակ աշխատանքները (միլիոն ռուբ.)					Հարկաց բարակացում
1928/29թ.	1929/30թ.	1930/31թ.	1931/32թ.	1932/33թ.	
2.176,0	3.225,0	4.571,0	5.204,0	5.809,0	20.985,0
1.790,0	2.730,0	3.970,0	4.500,0	4.950,0	17.940,0
1.976,6	2.683,4	3.392,7	3.589,2	3.699,6	15.341,5
1.619,8	2.265,4	2.939,7	3.103,2	3.158,6	13.086,7
1.247,2	1.738,9	2.276,7	2.400,5	2.409,0	10.072,3
362,6	499,5	602,0	608,8	619,6	2.692,4
807,2	1.304,2	1.873,4	1.991,1	1.982,8	7.958,7
762,9	795,6	778,8	769,2	790,8	3.907,3
144,4	149,2	151,1	153,5	161,6	762,8
146,6	248,9	330,9	362,5	383,9	1.472,8
38,7	105,3	133,4	149,8	161,6	618,8
77,0	76,5	77,5	77,3	76,0	77,0
22,3	22,0	20,5	19,6	19,6	20,6
41,9	50,2	57,2	58,2	57,0	54,2
10.874	12.761	15.850	19.455	23.366	+13.583

ալժմ 5 միլիարդ կիլովատտ-ժամի դիմաց աճում ե
մինչև 22 միլիարդ կիլովատտ-ժամ:

Ինչպես տեսնում եք, հսկայական աճում ե նա-
խազգվում. ենիրգիայի արտադրության այդ աճումը
հիմնվում է ելեկտրոկայանների շինարարության հրս-
կայական, հղոր թափի վրա, Բացի համաշխարհային մե-
ծություն ահազին հիդրոկայանից, վոր ունենք հանձին
Դնեպրի հիդրոկայանի, մեզանում ելի 42 ռայոնական
կայաններ են կառուցվում, այնպիսի կայաններ, ինչ-
պես Սվիբինը, Լենինգրադի մոտ Փոքրիկ Վիշերա տորֆի
կայանը, Դոնավաղանի Շտերովկա կայանի նման հսկան,
վոր ընդլայնված ե և ահազին գորությունունի, Զուեյի
կայանի ահազին շինարարությունը, Կենտրոնական-
արդյունաբերական ռայոնի կայանների հսկայական
շինարարությունը, Ուրալում, Ն.-Նովգորոդի մոտ կա-
ռուցվող կայանը, վերջապես Սիբիրի և ծագրերկրների
հղոր ելեկտրոշինարարությունը,—այս բոլորը մեր ամ-
բողջ ժողովրդական տնտեսության ելեկտրովերազին-
ման մի ահազնատեսիլ պատկեր ե:

Ամենից ավելի լարված լիս համարում եմ այս
հնգամյակի շինարարական ծրագրը սկ մետաղների
բնագավառում: Այս լարված ծրագիրը մենք պետք ե
հանձն առնելինք, ինկատի ունենալով սկ մետաղների
պակասը նախընթաց տարիներում և այն անհրաժեշ-
տությունը, վոր, ինչպես ընկ. Զերժինսկին եր ար-
տահայտվում, ինչ ել վոր լինի, մեր լերկիրը դարձը-
նենք մետաղյա, դադարեցնենք մետաղների այն սովը,
վոր արգելակում ե մեր հետագա տնտեսական զարգա-
ցումը: Դրա համար մենք նախազել ենք հնգամյակի
վերջում արտադրել 10 միլիոն տոնն չուգուն, այնինչ

անցյալ տարի ընդամենը միայն $3^{1/2}$ միլիոն տոնն եր
հալված:

Չուգունի այդ քանակն արտադրելու համար հար-
կավոր ե ապահովել գոյություն ունեցող գործարան-
ների վերակազմավորումը:

Այս հնգամյակի վերջում լոթ միլիոն տոննից
ավելի կհալեն գոյություն ունեցող գործարանները, և
միայն մոտ յերկու և կես միլիոն տոննը նոր գործա-
րանները կարտադրեն: Բայց, այնուամենայնիվ, նոր
գործարանների ծրագիրը շատ հոյակապ ե. այստեղ
են այնպիսի հսկաներ, ինչպիսին Մագնիտոգորսկի,
Տելբեսի, Կրիվոյ Ռոգի, Լիպեցկի և Խովտորսկի գործա-
րաններն են, արդյունաբերական բոլոր հիմնական
ուայուններում մետաղաձուլման գործի հղոր զարգա-
ցումը պետք ե ապահովի սկ մետաղների պակասի
լեկվեցացիան մեր մեքենաշինության մեջ, տրանս-
պորտում և գյուղատնտեսության մեջ:

Պետք ե ասեմ, վոր գործարանների այն ահա-
զին քանակը, վոր յինթագրվում ե շինել այս հնգա-
մյակում կամ նրա սկզբում, գուցե միքիչ կրճատվի
այն գեպքում, յեթե գործող գործարաններում մեզ
հաջողվի սկ մետաղաձուլության բնագավառում ավելի
եֆեկտավոր ցուցիչների հասնել: Դրա համար կան
մի շարք տվյալներ, դրա համար կա Յեվրոպայի ու
Ամերիկայի փորձը, կա և մեր փորձը, վորոնք այն
են ասում, թե այդ տեսակետից մենք գեռ շատ քիչ
բան ենք արել: Գուցե մեզ հաջողվի գոյություն ու-
նեցող ձեռնարկությունների աշխատանքը բարելավե-
լով, նրանց ավելի շատ եֆեկտավորության ու վե-
րակազմավորման ճանապարհով հասնել այն բանին,

վոր շինարարական ծրագիրը միքիչ կրծատվի, առանց արտադրանքի քանակին վսասելու, զուցե և մեր յերկրի բաց թողած մետաղների քանակին ավելացնելով: Կասկածից դուրս ե, վոր պլանով արդյունարերության այս ճյուղի համար նախագծված միջոցները չպետք ե նվազեցվեն, վորովհետև ու մետաղաձևության լրացուցիչ զարգացումը վոչ միայն ցանկալի, այլև հետեւյալ հնագամյակում զարգացման համապատասխան տեմպերն ապահովելու համար անհրաժեշտ ե:

Դունավոր մետաղաձևության արտադրությունը յենթադրվում է 1927/28 թ. 141,1 միլիոն սուբլուց 1932/33 թ. բարձրացնել 475,1 միլիոն սուբլու կամ 336,7 տոկոսով: Բայց և այնպես, չնայած աճման այս ահագին տեմպերին, մենք գունավոր մետաղների քաղցը վերացնելուց շատ հեռու յենք:

Ածուխի բնագավառում 1927/28 թ. 36 միլիոն տոնն արդյունաբերության դիմաց նախագծված է 75 միլիոն տոննի հսկայական մի ծրագիր: Դրա համար պահանջվում է հանքահորերի նոր շինարարության հսկայական ծավալում: Մենք պետք ե նոր հանքահորեր բանանք, ածուխի տառնյակ խոշորագույն հանքահորեր բանանք: Հզրապես զարգանում է վոչ միայն ածուխի հին ռայոններուն դոնավաղանը, այլև զարգացման արագ տեմպեր ենք տալիս այսպիս կոչված ածուխի բնագավառում հետամնաց ռայոնների համար, այնպիսի ռայոնների, ինչպիսին Մերձմոսկովյանն ե, Ռւրալը և մանավանդ Սիբիրը:

Նավթի բնագավառում թե արդյունահանման և թե վերամշակման ահագին ծրագիր ենք նախագծում:

Նավթի արդյունահանությունը պետք է կրկնապատկի, նավթի վերամշակությունը պետք է աճի յերկու և կես անգամ:

Ընկեր Կրժիժանովսկին թվել ե այն ահագին նվաճումները, ինչ մենք հնգամյակի ընթացքում: Պետք է իրացնենք տորփի բնագավառում:

Պլանը ծրագրում է մեր մեքենաշինական արդյունաբերության բովանդակ արտադրանքի յերեք և կես անգամ աճում, իսկ գյուղատնտեսական մեքենաշինության քառապատկում: Զնայած մեր մեքենաշինության հսկայական աճմանը, պետք է ասել, վոր յեթե օբյեկտիվ հնարավորություն լիներ, ապա պետք եր աճման ավելի մեծ տեմպ հաղորդել արդյունաբերության այս հիմնական ձյուղին, վոր աշխատում ե յերկրի ինդուստրիացման և մեր ամբողջ ժողովրդական տնտեսությունը վերազինելու համար: Իրոք, չնայած այդ հսկայական ներդրումներին, չնայած վոր մեքենաշինության բնագավառում շինարարության ահագին ծրագիր և յենթադրվում, մենք, այնուամենակիվ, մեքենաների մի ամբողջ շարք տեսակների համար հալթայթման զգալի պակասորդ կունենանք, զեռևս չենք ազատվի ոտարերկրյա կապիտալիստական պետություններից կախումն ունենալուց: Ահա մեքենաշինության բնագավառում մեր շինարարական ծրագրի համառոտ բնութագիրը:

Տրակտորաշինության բնագավառում: Ստալինգրադի արակտորային գործարանից զատ, վոր ինտենսիվորեն կառուցվում է այս շինարարական սեզոնում, լեկող տարգանից արդեն կակտենք կառուցել տրակտորային մի նոր գործարան Ուրալում: Մենք Պուտի-

լովսկի գործարանն ընդլայնում ենք, վորպեսզի հընգամյակի վերջին տարում 20 հազար տրակտոր արտադրի: Յենթագրում ենք տրակտորային գործարանամասի հզոր ընդլայնում Խարկովում, վոր իրապես մի ամբողջ գործարան ե, Անհնարին չի, վոր իեթե մեր տրանսպորտը նվազեցնի շոգեկառքերի շինարարական ծրագիրը, ապա Ուկրայնայում նախկին շոգեկառքեր կառուցող գործարաններում մեծ զարգացում կտտանա տրակտորաշինարարությունը:

Շարժիչների և կաթսաշինարարության բնագավառում, նոր գործարանների՝ շինարարության կողքին հզորապես զարգանում են գոյություն ունեցող գործարանները:

Ծանը մեքենաշինության բնագավառում, կառուցվում ե Սվերդլովսկի մեքենաշինական գործարանը, կրամատորսկի գործարանն այնպէս պետք և վերակազմավորվի, վոր ելապես մի նոր հզոր գործարան դառնա, վորն սպասարկելու յի ծանը մետաղաձուլությանը և Ուկրայնայի ածխային անտեսությանը:

Հաստոցաշինության բնագավառում, յենթագըրվում և նոր գործարանների շինարարություն և գոյություն ունեցողների վերակազմավորում և սացիոնալիզացիա:

Գյուղատնտեսական մեքենաշինության բնագավառում, Ռոստովի գործարանից զատ Սիբիրում կկառուցվի քամհարների, ցանքահավաք և սերմազտիչ մեքենաների գործարան, բարդ կալսիչների և ցանող մեքենաների գործարան Պովոլժյելում, տրիերների և ցանիչների գործարան Ռուբալում, կոմբայնների գործա-

րան Ստալինգրադում, տրակտորներին կցվող գործիքների գործարան Ուկրայնայում:

Ավտոշինարարության բնագավառում վորոշված ե ավտոմոբիլի գործարան կառուցել Նիժնի-Նովգորդում: Բայց զրանով չի սպառվում ավտոշինարարության մեր նախատեսած հսկայական ծրագիրը: Նա դեռ վերջնականապես չի հաստատված և հատուկ ուսումնասիրության կենթարկվի: Յենթագրվում ե նույնապես յերեք տոննանոց բեռնատար ավտոմոբիլների գործարան շինել: Յենթագրվում ե Մոսկվայի և Յարովավի գոյություն ունեցող գործարանների հզոր ընդլայնումը: Ավտոշինարարության զարգացման նախանձորզներ են մի ամբողջ շարք ռայոններ—թե Ուկրայնան, թե Լենինգրադը, թե Յարսուլավլը և այլն: Յես այժմ այդ հարցի մասին իմ անձնական կարծիքը չեմ հայտնի, վորովհետեւ այդ գործն ուշադիր ուսումնասիրություն և պահանջում: Մի բան միայն կասեմ, վոր ավտոշինարարության բնագավառում ռայոնների այդ մրցակցությունը հեշտ կլինի վերացնել, ինչ չափով վոր ավտոշինարարության ծրագիրն այն ձեռվ, ինչպես հնդամեակումն ե նախագծված, անվիճելիորեն անբավարար գուրս գա մեր տնտեսության աճող պահանջները բավարարելու համար: Պահանջ կա ավտոշինարարությունը հետագայում զարգացնելու՝ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի պահանջներն ավելի լրիվ բավարարելու համար: Ուստի ե, ամենա/ն հավանականությամբ, մեր առաջանարժեշտություն կծառանա ավտոշինարարության ծրագիրը միծացնելու և նրա արտադրությունը մի շարք ռայոններում լրացուցիչ կերպով կազմակերպելու:

Գործիքների շինարարության բնագավառում, ահազին ծրագիր և յենթագրվում գործարանները մասնագիտացնելու և մի շարք նոր ձեռնարկություններ կառուցելու:

Զնայած այս հսկայական շինարարական ծրագրին, մենք մեքենաշինարարության բնագավառում կունենանք մեր ժողովրդական ամբողջ տնտեսության պահանջների չքավարարվածություն: Յեթե վերցնենք միայն արդյունաբերությունն ու տրանսպորտը, յեթե խոսենք արդյունաբերական-տրանսպորտային սարքավորման մասին, ապա այն վեց միլիարդից, վոր հընդգամյակի ընթացքում պետք ե գնել ժողովրդական տնտեսության այդ հատվածի մեջ, մենք ինքներս կարող կլինենք 4,5 միլիարդ, այսինքն 75 տոկոսը արտադրել, և մեր յերկրին հարկավոր սարքավորման ամբողջ մասսայի 25 տոկոսն արտասահմանից կներմռածի:

Ճիշտ ե, տարեցտարի բարձրանում և պահանջների սեփական մեքենաշինությամբ ապահոված լինելու այդ տոկոսը, բայց, այնուամենալիք, հնդամյակի վերջում մենք իմ մատնանշած այդ պակասորդը կունենանք: Մենք կարծում ենք, թե հնդամյակի վերջին տարում մեր պահանջների գրեթե 90 տոկ. բավարարումը կապահովենք, բայց վորովհետեւ հնդամյակի առաջին տարիներն ապահովածության շատ ավելի քիչ տոկոս կտան, ապա ապահովության միջին տոկոսը կլինի 75: Ներկայումս, 1928—29 թ., մենք արդյունաբերության ու տրանսպորտի մեքենայի պահանջի մոտավորապես 64 տոկոսն ենք բավարարում: Հատկապես մեծ պակասորդ ունենք հաստոցաշինարա-

րության կողմից: Մենք ալսուել բոլոր հինգ տարիներին ապահովածության 40 տոկ. կունենանք, մնացածը հարկադրված կլինենք արտասահմանից ներմռածել:

Զերմռաժային սարքավորման բնագավառում, վոր առանձնապես կարենը ե, ինկատի ունենալով եներգետիկ ահազին ծրագրը հնդամյակի համար, մըտածում ենք հնդամյակի վերջում պահանջների ներքին արտադրությամբ բավարարման տոկոսը հասցընել 95—100-ի: Յես չեմ բնութագրի մեքենաայթալիթման կացությունը արտադրության ուրիշ ճյուղերում, այս փաստերը բավական են՝ ցուց տալու համար, վոր, չնայած ահազին ծրագրին, մենք դեռևս մեքենաշինության բնագավառի բոլոր հարցերը չենք լուծում, մենք դեռևս չենք կարողանում բավարարել մեր յերկրի պահանջները: Ուստի և առանձնապես անթուլատրելի յես սառն վերաբերմունքը դեպի մեքենաշինությունը, նրան արհամարհելը և արդյունաբերության այդ ճյուղի վերակազմավորող դերի նսեմացումը: Մեքենաշինությանը պետք ե մեր հնդամյա ծրագրում առաջնահարգ տեղ տրվի՝ ինչպես արդյունաբերության մի ճյուղի, վորն իսկապես վերակազմավորում ե մեր ժողովրդական ամբողջ տնտեսությունը և արդյունաբերությունը մասնավորապես: Դեպի այս կողմը պետք ե հատուկ ուշադրություն դարձվի: Ժողովրդական տնտեսության այդ ճյուղը պետք ե հատուկ ոժանդակություն գտնի կուսակցության ու խորհրդագույքին պետության բոլոր մարմինների կողմից: Յես կանգ չեմ առնի ծանր ինդուստրիայի մյուս ճյուղերի վրա. թե անտառային և թե շինարարական նյութերի դորմռած ես մենք համապատասխան տեմպեր

ենք տալիս: Իսկ քիմիական արտադրության մասին հետո կխոսեմ:

Այժմ կանգ կառնեմ թեթև ինդուստրիալի վրա: Յես արդին ասել եմ, վոր թեթև ինդուստրիան ավելի փոքր տեմպով և զարգանում, քան արտադրության միջոցներ արտադրող ինդուստրիան: Նրա մեջ միջոցներ գրվում են ավելի քիչ՝ ընդամենը 22 տոկոս, աճումը, ծանր ինդուստրիայի 3,2-ի դիմաց, յենթադրվում է 2,3 անգամ, բայց և այնպես, չնայած վոր ծանր ու թեթև ինդուստրիայի միջև հարաբերակցությունը կատարելապես կանոնավոր է նախագըծված, յես անհրաժեշտ կդանելի թեթև ինդուստրիան թերագնահատելուց զգուշացնել: Թեթև ինդուստրիան ժողովրդական տնտեսության տնտեսության մեջ ահազին գեր և խաղում թե բնակչության պահանջները բավարարելու տեսակետից և թե քաղաքի ու գյուղի միջև կազմն ամրապնդելու տեսակետից: Թեթև ինդուստրիան զյուղի հետ կապվում է մի կողմից իրեն սպառման նլութեր հայթայթող, իսկ մյուս կողմից՝ իրեն գլխավորապես գյուղատնտեսական հումք վերամշակող արդյունաբերություն: Թեթև ինդուստրիայի զարգացումը գյուղատնտեսական կուլտուրաների համապատասխան, զարգացում և նշանակում: Տեքստիլի դարձացումը նշանակում է բամբակաբուծության, վուշաբուծության, կանեփարուծության զարգացում, և այլն, և այլն: Շաքարի արդյունաբերության զարգացումը ճակնդեղի նման տեխնիկական կուլտուրայի զարգացումն է: Կաշվի արդյունաբերության կարգացումը անասնապահության զարգացում է նշանակում և այլն: Մի խոսքով՝ թեթև արդյունաբերության բոլոր ճյուղերն

այսպես թե այնպես կապված են գյուղատնտեսության հետ, ուստի և գյուղատնտեսության վրա վորոշ ազգեցություն են անում նրա աճման տեսակետից, գյուղատնտեսության զարգացման ծրագրի մեծացման և գյուղատնտեսության՝ կուլտուրական ավելի բարձր աստիճանի բարձրանալու տեսակետից: Բայց թեթև ինդուստրիան զբանից զատ միջոցների վերամշակման և ծանր արդյունաբերությունը ֆինանսավորելու կարևոր լծակ է: Այդ մասին բոլորովին վորոշ արտահայտվեց կե նոյնիմբերյան պլենումը, վորը նշեց թեթև ինդուստրիայի նշանակությունն այդ բնագավառում: Այդ պատճառով թեթև ինդուստրիայի զարգացումը պէտի կատարվի մեր նախագծած տեմպերով: Նրանք բնակչության սպառման զգալի աճման համար բավարար են, նրանք բավարար են մեր գյուղատնտեսության մեջ տեխնիկական կուլտուրաների հզոր զարգացում տալու: Աճում է բամբակի արդյունաբերությունը, աճում է վուշի արդյունաբերությունը, մեծանում անասնապահությունը թե բրդի արդյունաբերության մատակարարման տեսակետից և թե կաշվի արդյունաբերության մատակարարման տեսակետից:

Հնդամցա պլանը նախագծելիս չի կարելի սոռանալ տնախագործ արդյունաբերությունը: Կարելի կլինիկ կարծել, թե մեր ծանր ինդուստրիայի և առնասարակ մեր ինդուստրիայի զարգացման այս խոշոր տեմպերը, վոր հասուն չեն վորեն կապիտալիստական յերկրի, ծագում են տնախագործների, տնախագործական այն արհեստները՝ վերացնելու հաշվին, վոր հին ժամանակներից իվեր ալգալի զարգացած են մեր յերկրում: Բայց դա սխալ պատկերացում է:

Մենք մեր արդյունաբերության աճման խոշոր ծրագրի հետ մեկտեղ նախատեսում ենք նաև տնայնագործ արդյունաբերության համապատասխան աճումը։ Տնայնագործ արդյունաբերության արտադրությունը մեծանում է յերկու անգամ, և տնայնագործությամբ զբաղվող անձերի թիվը ել չափազանց մեծանում է։ Յեթև ներկայումս տնայնագործ արհեստ ներով պարագների թիվը մոտ 4 միլիոն է, ապա հնգամյակի վերջում այդ թիվը հասնում է 6 միլիոն մարդու։ Այսպիսով տնայնագործ արդյունաբերությունը կարեվոր է թե բանվորական ավելացող ուժի գեմ պայմանագրելու տեսակետից և թե իրքն մեր ժողովրդական տնտեսությանը սպառման առարկաներ մատակարարելու աղրյում։

Այսպիսով հնգամյա պլանը բոլոր հիմնական սահմանումների մասում ամբողջությամբ կատարել է XV համագումարի դիրեկտիվը, արտադրության միջոցների արտադրության աճման զգալիորեն ավելի մեծ ծրագիր և ավել և հենց դրանով ապահովել մեր ժողովրդական տնտեսության իսկական ինդուստրիացումը։ Նախագծած և մեքենաշինության, արդյունաբերության եներգետիկ ճյուղերի, վառելանութիւն ածուխի, նավթի, տորֆի և այլն արտադրության հսկայական աճում, մետաղաձուլման գունավոր մետաղների մասի հսկայական աճում։ Այս բոլորը բնորոշ են այս պըլանի համար, և այս պլանն իրավամբ կարող է կոչվել յերկրության պլան։

Բայց և այնպես կուսակցությանը և իշխանությունն իր ձեռքը վերցնող պրոլետարիատին միայն այդ չի պետք։ Մեզ ժողովրդական ամբողջ տնտեսու-

թյան արագ տեմպեր են հարկավոր։ Մեզ պետք է, վոր արդյունաբերության և ժողովրդական տնտեսության տարրեր ճյուղերի միջև համապատասխան տեմպեր պահպանվեն։ Մեզ հարկավոր է, վոր արտադրության միջոցներն սպառման միջոցներից արագ զարգանան։

Բայց մենք պետք են ապահովենք, վոր արտադրողական ուժերի այդ աճումը կատարվի սոցիալիստական տարրերի ավելի ու ավելի ամբաղնդման ու կապիտալիզմի տարրերի գնալով ավելի մեծ վտարման պարագաներում, վոր արտադրողական այդ ուժերի զարգացումն ընթանա մեր յերկրի սոցիալիստական շինարարության գծով։

Հնգամյա պլանի այդ հատածի մեջ հատուկ հետաքրքրություն է շահում արդյունաբերության և գյուղատնտեսության փոփհարաբերությունների հարցը։ Արդյունաբերությունը մեր ժողովրդական տնտեսության առաջատար սկզբունքն է։ Միայն արդյունաբերությունը և միայն նրա արագ զարգացումը կարող են ապահովել մի կողմից գյուղատնտեսության զարգացումը և մյուս կողմից այդ գյուղատնտեսության զարգացումը դեպի սոցիալիզմ։ Ընկ. կենինն ասում եր, թե մեր յերկրում պրոլետարիատի դերն են դեկավարել մանր տնտեսատերերի անցումը դեպի հանրախացրած կոլեկտիվ աշխատանք։

Ի՞նչպես և յերկում մեզ մեր հնգամյա պլանն իր աստածով, այդ տեսանկցունով։ Մենք գյուղատնտեսությանը արտադրության միջոցներ հայթայթող արդյունաբերությանը զարգացման աշխի ընկնող տեմպեր հնար տալիս։ Յես արդեն մասսամբ խոսել եմ այդ

տեմպերի մասին, բայց թույլ տվեք, վոր գրտ վրտ
միջիչ ավելի մանրամասն կանգ առնեմ:

Ամենից առաջ տրակտորների մասին: Զեղ ծա-
նոթ ե մեր աղքատությունը այդ տեսակետից, դուք
գիտեք մեր հետամնացությունը տրակտորային արտա-
դրության բնագավառում: 1928—29 թ., ալսինքն
հնգամյակի առաջին տարում մենք կլարողանանք ըն-
դամենը միայն յերեք և կես հազար տրակտոր ար-
տադրել, յեթե Խարկովի և Պուտիլովսկի գործարան-
ներն ել հաշվենք: Մենք պետք ե տարեկան գոնե
հարցուր հազար տրակտոր արտադրենք, վորաքեզի
բավարենք գլուղատնտեսության, մանավանդ նրա
սոցիալիստական հատվածի աճող պահանջները: Այս
հնգամյակի ընթացքում Պուտիլովսկի գործարանում
տրակտորների արտադրությունը կածի այս կերպ,
այժմ 3000, յեկող տարի 5000, 1931 թ. 5000, հետո
10000, հետո 15000—20000 վերջին տարում, 1932—
33 թ.: Խարկովի գործարանն ել կմեծացնի իր ծրագի-
րը: Ստալինգրադի տրակտորի գործարանն արդեն
1930—31 թվից կոկսի վորոշ քանակությամբ տրակ-
տորներ տալ կհասցնի թիվը 1931—32 թ. 10000-ի և
1932—33 թ.՝ 30000-ի, այսինքն նրա լիակատար կա-
րողությունը կիրացվի հետեւյալ հնգամյակի առաջին
տարում: Ռեպալի տրակտորի նոր գործարանն ել, ակ-
ներեւ ե, նույնպես հնգամյակի վերջում մոտ 20000
—30000 տրակտոր կհանի: Այսպիսով հնգամյակի վեր-
ջին տարում մենք տարեկան մոտավորապես 60000
տրակտոր կտանք: Բայց այդ դեռ բավական չե, և
մենք գլուղատնտեսական սոցիալիստական հատվածին
սպասարկելու համար չենք կարողանա տրակտորների

բնագավառում ազատվել ներմուծման խոշոր ծրա-
գրից:

Դյուղատնտեսական մեքենաշինության գործում
մենք ծրագրում ենք արտադրությունը 1927—28
թվի համեմատությամբ քառապատկել, այսինքն
1927—28 թ. 153 միլիոնի փոխարեն 610 միլիոն
ոռորդ արտադրանք կտանք, բայց, այնուամենայնիվ,
չնայած այդ հսկայական աճմանը, արտադրու-
թյան այդ մակարդակը չափազանց անբավարար ե:
Մենք ժողովրդական Տնտեսության Գերագույն Խոր-
հըրդի վերջին պինումում այդ հարցը քննելով գյու-
ղատնտեսական մեքենաշինության մասում արդյունա-
բերության ելի հետագա աճումը հախագծեցինք:
ԺԾԴԽ համապատասխան մարմինները մշակել են այդ
հարցը, և մենք կարծում ենք, վոր մեքենաշինության
իր մեջ միջոցների վորոշ վերաբաշխումով, մի ամ-
բողջ շարք ձեռնարկությունների շինարարությանը
միջիչ ավելի արագ ձեռնամուխ լինելով և գոյություն
ունեցող գործարանների վերակազմավորումն արագ
թափով անցկացնելու ճանապարհով մեզ կհաջողվի
գյուղատնտեսական մեքենաշինության բնագավա-
ռում արտադրանքը 700 միլիոն ոռորդ ավելի
գումարի հասցնել:

Քիմիական պարարտիչների բնագավառում ընդ-
հանուր ծրագիրն այստեղ մի անգամից ավելի հրապա-
րակվեց. այդ պարարտիչների բալանսը դեռևս լիուլի
չի բավարարի գյուղացիություն հայտնած պահանջ-
ները հանգային պարարտիչների վերաբերմաքը: Պա-
րարտիչների այդ 8 միլիոն տոններ, վոր կցը վեճին մեր
գյուղացիության հողերի վրա, պահանջի միայն
չնդամյա պլանը—5

մի մասը կըավարարի: Հարկ լեզավ, որինակ, վոր
հնգամակի վերջին տարիներին մեր գյուղատնտեսու-
թյանը պարարտիչներ հայթալիք գործը բալանսի
բերելու համար հայթալիքան ցանցից մեր Միության
մի ամբողջ շարք ռայոններ դուրս թողնենք: Այսպես,
որինակ, միքանի ռայոններ արտադրվող պարարտիչ-
ների քանակով լիովին բավարարելու համար պետք է
մի ամբողջ շարք մարզեր դուրս գցենք, ասենք՝ Ներ-
քին վորգայի մարզը, Բաշկիրիայի մարզը, Ուկրաինա-
յում հողերի միայն մի մասն է վերցրած, հացահատիկի
մասում բոլորովին դուրս են գցված Միքրի, Ղրիմի,
Անդրկովկասի, Միջին Ասիայի տարածությունները
և ալլն: Յեվ միայն ռայոնների մի սահմանափակ քա-
նակ վերցնելով մենք կուտանանք 30 միլիոն հեկտար,
վոր մենք այդ պարարտիչով կարող ենք միայն 30% ո՞՛ով
բավարարել յեթե խոսելու լինենք ֆոսֆրաթըթ-
վի մասին: Այս չափազանց կողմորոշ (որինատիր) և
վորմե մեկի համար պարտադիր չեղող թվերը յես մի-
այն նրա համար եմ բերում, վորպեսզի պատկերավո-
րեմ այն հսկայական ծրագիրը, վորը հնգամյակի վեր-
ջում պարարտիչների արտադրությունը 20 անգամ
մեծացնելով գենես ելի անբավարար է մեր գյու-
ղատնտեսությանը մատակարարելու համար: Համե-
նայն ղեպս մենք համարում ենք, վոր այս ծրագիրը
բավարար է՝ կատարելու համար գյուղատնտեսության
բնագավառում այն առաջադրությունը, վոր կառավա-
րությունն ու կուսակցությունն են ավել բերքատվու-
թյունը 35 տոկոսով բարձրացնելու մասին: Գյուղա-
տնտեսության սպասարկումը ահա այս գյուղատնտե-
սական մեքենաներով, վորոնց մասին յես խոսում եմ,

այս քանակի պարարտիչների կիրարկումը, բացի այդ
վնասատուների գեմ պայքարելու միջոցների կիրարկու-
մը, վորոնք հնգամյակի վերջում կբավարարեն ժողո-
վրդական տնտեսության դրեթե բոլոր պահանջները, —
այս ամենը բազա յեն, վորպեսզի գյուղատնտեսու-
թյունը քանակապես և վորակապես այն մակարդակին
բարձրացնեն, ինչ Պետական Պլանային Հանձնաժո-
ղովն ենախագծել: Այս ամենը միատեղ վերցրած՝ հը-
զոր բազա յեն, վորպեսզի գյուղատնտեսության կոլ-
լեկտիվացման տեեպերը պահպանվեն այնպես, ինչ-
պես նախագծված են հնգամյա պլանում:

Սրա կապակցությամբ յես իբրկու խոսք կասեմ
քիմիական արդյունաբերության բնագավառի շինա-
րարական ծրագրի մասին: Մենք քիմիական արդյու-
նաբերության մեջ զնում ենք 140 միլիոն ոռութիւն: Նա-
խագծվում են ահագին քանակությամբ նոր ձեռնար-
կություններ, հների հզոր ընդլայնում: Հստ գործի ե-
յության խոսքս վերաբերում ե մի նոր արդյունաբե-
րություն ստեղծելուն, վորը մեղանում մինչհեղափո-
խական Ծուսաստանում բոլորովին սաղմային զրու-
թյան մեջ եր: Պետք ե ասել, վոր արդյունաբերության
շինարարության ամբողջ պլանից քիմիական արդյու-
նաբերության բնագավառի շինարարական ծրագիրն
ամենից ավելի բարդն ու ամենից ավելի դժվարն ե,
վորովհետեւ այստեղ մենք ամենից ավելի անզրագետ
ենք տեխնիկապես, և այստեղ մեր կազմերն ամենից
ավելի խղճուկ են: Մենք քիչ ինժեներներ ունենք,
քիչ՝ գիտակ մարդիկ, քիչ՝ վորակավորված բանվոր-
ներ և քիչ գիտելիքներ այդ բնագավառում: Այսինչ
ծրագիրը, քիմիական արդյունաբերության տեմպն ըդ-

գալիորեն ավելի խոշոր և նախագծված, քան արդյունաբերության մյուս բոլոր ճյուղերում: Յեկ այդ մեծագույն ուշագրություն և պահանջում դեպի արդյունաբերության այս ճյուղը, վորը, քացի այն, վոր հարկավոր և թե զյուղատնտեսությանը և թե ժողովրդական ամբողջ տնտեսությանը, ժողովրդական տընտեսության կարևորագույն մի ճյուղն ե, վոր ապահովում և մեր իերկրի պաշտպանունակությունը:

Այսպիսով մենք զարգացման հսկայական տեմպի հնք նախագծել արդյունաբերության այն ճյուղերի համար, վորոնք արտադրաբար սպասարկում են գյուղատնտեսությանը. Արդյունաբերության զարգացման այս ծրագրի հիման վրա այն մասում, վորտեղ արդյունաբերությունը իբրև բարենորոգող գործոն դարձած և դեպի գյուղատնտեսությունը, այս հղոր նախագծումը պետք է հեղափոխականացնող ազդեցություն անի գյուղատնտեսության վրա և կուսակցությանը հնարավորություն տա իսկապես մոտենալու այն խնդրի լուծմանը, վոր Վլադիմիր Իլյիչն եր դընում, և վորի մասին յես հիմա խոսեցի՝ գյուղի սոցիալստական բարենորոգման խնդրի, իրոք, յես ձեզ կհշեցնեմ այն ցուցիչները, վոր ալստեղ արդեն հրապարակվել են: Հանրայնացրած հատվածն ըստ ցանքի տարածության ունենալու յե 27 միլիոն հեկտար, վորոնցից 22 միլիոնը կոլտնտեսությունների, 5 միլիոնը խորհունտեսությունների: Հանրայնացրած հատվածի բավանդակ արտադրանքի միջ լինելու յե 16 տոկոս, իսկ հացահատիկի ապրանքային արտադրանքի մեջ՝ 43 տոկոս:

Այդ չոր թվերը խոսում են սոցականակարգային այն

հսկա առաջընթացության մասին, վոր լինելու յե գյուղում, վորպեսզի այդ չոր թվերը կենսագործվեն և ունակ իրականություն գառնան: 43 տոկ. ապրանքային հաց: Յեթե այժմ մեզանում գյուղացիության վերնաշերտի, կուլակներին և ունեոր միջակներին ել հետը հաշված, մոտավորապես 10 տոկոսը ապրանքային հացի 30 տոկոսի տերն ե, ապա հնգամյակի վերջում, ինչպես տեսնում եք, դրությունը վճռականապես շուռ և գալիս—ապրանքային հացի 43 տոկոսը կլինի հանրայնացրած հատվածի ձեռքում: Դրա կապակցությամբ ել այլ կերպ և դրվում հացահատիկների ամբողջ պըրուիմը, քաղաքների և սպառող ույայոնների մատակարարման ամբողջ պըրուիմը: Պետությունն իր ձեռքում կպահի քաղաքի և գյուղի միջև ապրանքաշնչանառության կարգավորման գործում այնպիսի զորավոր լծակներ, վոր մեր ներկայումս ապրած դժվարությունները հեշտ կլինի հաղթահարել հնգամյակի վերջում: Յեկ բոլորովին ակներն ե, վոր գյուղատընտեսության բնագավառում այդ վճռական առաջընթացությունը, գյուղատնտեսության միջ սոցիալստական տարրերի այդ մուծումը տեխնիկայի հասարակ հաղթանակ չի:

Այդ առաջընթացությունը ձեռք կբերվի իբրև հետեանք կատաղի պայքարի, վոր մեր կուսակցությունը կմզի գյուղի կապիտալիստական տարրերի դեմ, հենվելով չքավորության, բատրակության վրա, դաշն կապած միջակի հետ: Դասակարգային պայքարն ուղղ սոցիալստական առաջընթացությունների լիովին անխուսափելի և պարտադիր ուղեկիցը կլինի, և ծիծակելի կլիներ մտածել, թե սոցիալստական տարրերի

այդ մուծումը գյուղատնտեսության մեջ կարող ե անցնել «խաղաղ» ու «անվրդով», առանց դասակարգային պայքար սրելու գյուղում:

Միայն մի մեջբերում կանեմ ընկ. Լենինից, վորը շատն եր տեսնում այն բանից, ինչ մեր կուսակցականների մի ամբողջ շարք, նույնիսկ ներկա մոմենտում, չի տեսնում և չի հասկանում:

Դասակարգի վոչնչացումը,—գրում եր Վլադիմիր Իլյիչը,—դասակարգային յերկարաժակ, դըժվարին, համառ պայիշարի գործ և, վորը կապիտալի իշխանությունը տապալելուց հետո, բուրժուական պետությունը ավերելուց հետո, չի կորչում (ինչպես յերեսակայում են հին սոցիալիզմի և հին սոցիալ-դեմոկրատիայի փնթիները, այլ միայն իր ձևերն ե փոխում, շատ տեսակետներով դառնալով ավելի կատաղի: (Լենին, ԽVI, եջ 227):

Ներկա մոմենտում մեր գյուղում դասակարգային պայքարի բոլորովին ակնհայտ սրումն կա, և այդ հենց իբրև հետեւանք սոցիալիստական տարրերի հաջող գըրոնի: Խորհրդային իշխանության ու պրոլետարիատի նկատմամբ կուլակության ունեցած դասակարգային ատելության այնպիսի արտահայտության վիճակագըրությունը, ինչպես տերըրն ե, ցույց ե տալիս, վոր անցյալ տնտեսական տարվա ընթացքում և այս տընտեսական տարում, յեռամյակից յեռամյակի, կուլակության կողմից տերըրիստական ակտերի քանակն աճում ե: Այստեղ մենք գործ ունենք դասակարգային կովի կոնկրետ արտահայտման հետ, վորն ավելի ու ավելի կատաղի ձևեր ե ընդունում:

Մեռնող վարման յենթակա դասակարգն անձ-

նատուր չի լինում, և յերբ մենք փորելով այդ դասակարգի արմատներին ենք հասնում, յերբ սոցիալիստական տարրերն ավելի ու ավելի յեն գյուղ թափանցում, բոլորովին բնական ե, վոր այդ դասակարգի գաղագությունն ու կատաղությունը պիտի աճի: Ուստի և խաղաղ ճանապարհով չե, վոր պետք ե սոցիալիզացիայի յենթարկվի գյուղը, խաղաղ ճանապարհով չե, վոր պետք ե աճեն կուտնտեսություններն ու խորհրդային տնտեսությունները: Կուտնտեսություններն ու խորհրդային տնտեսությունները միաժամանակ արգյունաբերության առաջատար գերի արտացոլումն են, վորը տարեցարը կմեծացնի գյուղին գյուղատնտեսական գործիքներ և արտադրության միջոցներ հայթայթելու գործը, և միենույն ժամանակ բանվոր դասակարգի զեկավարած միջակ ու չքավոր գյուղացիության՝ գյուղի կապիտալիստական տարրերի գեմ մղած դասակարգային պայքարի հաջողության արտացոլումն ե:

Ապրանքաշրջանառության բնագավառում,—վորպեսզի ինձ տված ժամանակի սահմաններից չելնեմ, այստեղ մանրամասն կանգ չեմ առնի, —ապրանքաշրջանառության բնագավառում ևս մասնավոր կապիտալի վտարման զգալի տեմպեր են նախագծված: Բայց սխալ կլիներ մտածել թե մասնավոր կապիտալի այդ վտարումը մեր սոցիալիստական շինարարության և գյուղատնտեսության հանրախնացրած հատվածի աճման մեխանիկական հետեւանքն ե միայն: Կատաղած չկա, վոր այս բնագավառում ևս սոցիալիզմի հաղթանակը վորոշ դասակարգային պայքարի հետեւանք ե: Նեպմանն ու կուլակը մի ուժ են, վորը մենք պետք

և հաղթահարենք, մի ուժ են, վորը սոցիալիստական շինարարության հաջողությանը զուգընթաց, ամենաբազմազան ձեերով վոտքներիս տակը քար և դնելու: Այստեղ և տերրորը, այստեղ և միջազգային բուրժուազիային կուրժուազիային կոչ անելը, այստեղ և սարստաժը (նենգադուլը), այստեղ և ֆիսասարարությունը և այլն, և այլն, — այս բոլորը մեռնող թշնամու դասակարգային կատաղության արտահայտություններն են: Յեկ դասակարգային պայյքարի այս բոլոր ձեերն, անկասկած, չեն հանդարտվի, չեն մեղմանա, այլ այս հնգամյակի ընթացքում ավելի կատաղի ձեեր կը նորունեն: Յեկ հենց աւսպես պետք ե կողմը որշել կուսակցությունը, այլ փոչ ընդհակառակը, ինչպես այդ մեր կուսակցության մեջ աջ տարրերն են անում: Կուսակցությունը և բանվոր դասակարգը բուրժուաղիայի սրվող ընդդիմադրության, մեր յերկրի բուրժուական, կապիտալիստական դասակարգերի մնացորդների դեմ պայմանական կողմորոշումով միայն կվարողանան իսկապես հաղթել: Իսկ գործը պատկերացնել այնպես, թե՝ մենք անում ենք, աճում ենք, և դրանով ամեն ինչ սպառվեց, — այդ նշանակում ե՝ կամա թե ակամա, վերջիվերջո գինաթափել բանվոր դասակարգը, վորովհետև մեզ համար կարևորը միայն աճումը չե, կարեորը անումն ե դիպի սոցիալիզմ: Իսկ այդ աճումն անխուսափելիորեն ընդդիմադրություն և առաջ բերում կապիտալիստական դասակարգերի կողմից, իսկ այդ ընդդիմադրությունը մեր կողմից դիմագրավելու, ձնշելու համար մեր վողջ կուսակցությունն ու ամբողջ բանվոր դասակարգը պետք ե համապատասխանաբար զորահավաքված լինեն:

Ընկերներ, իսու այս նյութի վրա ելի կանգ կառնեմ միքիչ հետո, իսկ այժմ թույլ տվեք անցնել հնգամյապլանի մյուս բաժիններին:

Հնգամյա պլանի չափազանց կարեոր մի բաժինը և այսպիս կոչված կուլտուրական հնգամյակը — բանվոր դասակարգի և ընդհանուր բնակչության կուլտուրական սպասարկման բնագավառի նախագծումները: Հնգամյա պլանում մեր ունեցած նախագծումները վկայում են այդ կուլտուրական սպասարկման աչքի ընկնող աճման մասին: Բնակարանային շինարարության բնագավառում նախատեսված ե շինարարության մի ահազին ծրագիր, վորը հնարավորություն ե տալիս բանվորների շատ ավելի մեծ քանակություն ապահովելու բնակարանային տարածությունով և ակումբագին, հիվանդանոցային շինարարության բնագավառում յուրաքանչյուր բանվորի ապահովված լինելու աստիճանը բարձրացնելու: Զերնարկություններում և ֆաբրիկաներում ակումբների, լվացքատների, բաղնիքների և այն՝ ձեռփ գանազան կուլտուրական հիմնարկությունների շինարարության բնագավառում հնգամյա պլանի մեջ խոշորագույն առաջընթացուներ են ծրագրված, վորոնք բանվոր դասակարգի բարեկեցությունը բարձրացնելու գործում աչքի ընկնող հաջողություններ են արտահայտում: Պետական Պլանային Հանձնաժողովի նախագծումը ունալ աշխատավարձը 70 տոկոսով բարձրացնելու մասին, ամբողջ արդյունաբերությունը 7-ժամկան բանվորական որվա անցկացնելը, բանվորներին և զյուղացիներին մի ամբողջ շարք սպառման առարկաներ ավելի մեծ չափերով հայթալիքներ, քան մինչև այժմ, հզոր կոմմու-

նաև շինարարությունը, բնակարանալին շինարարությունը և այլն, և այլն,—այս բոլորը բանվոր դասակարգի բարեկեցության մեծագույն փերելքի պատկեր և ստեղծում այս հնգամյակի վերջում, միաժամանակ բարձրացնելով նաև գյուղացիության բարեկեցությունը:

Բայց վորպեսզի կատարվի այս հսկայական հընդամյա ծրագիրը, վորպեսզի հասնենք այդ քանակական ցուցիչներին, վորպեսզի հասնենք տյն բանին, վոր մեր հնգամյակն իրոք սոցիալիզմի շինարարության ծրագիր լինի, դրա համար պետք է մի ամբողջ շարք վորպեսկան ցուցիչների հասնենք, այսինքն զգալիորեն բարելավենք մեր ամբողջ աշխատանքը: Համապատասխան թվերն այստեղ արդեն կարդացվել են, աշխատանքի արտադրողականության 110% բարձրացում, արդյունաբերական արտադրանքի ինքնարժեքի 35% իջեցում, փոխադրությունների արժեքի 25% իջեցում, թողնման գների 24% իջեցում, բերքատվության 35% բարձրացում, և այլն, և այլն,—այս բոլոր վորպեսկան ցուցիչներն իրեւ այդ հաջողություններին և արդյունքներին հասնելու հնարավորության նախադրյալ ինչպես կատարման պայման, կազմում են հնգամյա պլանի հիմքը ամբողջությամբ:

Վորպեսզի այդ վորտկական ցուցիչները կատարվեն, մեր շարքերի շատ մեծ վերակարգավորում և պահանջվում, պահանջվում է մեր աշխատանքի մեթոդների փոփոխություն, պահանջվում է մեր պետական ամբողջ ապարատի զգալիորեն ավելի մեծ կարգ ու կանոնի յենթարկվածություն և բանվորական մասսաների ահագին ակտիվություն, առանց վորի, ան-

շուշտ, չի կարող իրագործվել սոցիալիզմի շինարարության այդ հսկայական պլանը: Աշխատանքի դիսցիպլինայի բնագավառում, ինչպես գիտեք, մեղանում ամեն ինչ ել հաջող չե, և ակներեւ և բոլորովին, վոր հնգամյա պլանը չի կատարվի, չեթե ներկայիս գոյությունն ունեցող գրությունը մնա:

Աշխատանքի դիսցիպլինայի հարցը գլխավոր հարցն ե, այն հարցը, վորն իր մեջ պարունակում է վոչ միայն բանվորների կաղղերի անմիջականորեն կարգ ու կանոնի յենթարկված լինելու հարցը, այլ այն հարցը, վորն իր մեջ և առնում մի ամբողջ շարք բարդ հարցեր, և դեպի վորը պետք է մոտենալ սոցիալական վորոշ հատածի հայեցակետով: Մենք գիտենք, վոր մեր բանվոր գասակարգի կազմը չափազանց անմիասներ ե, մենք արդյունաբերության մի ամբողջ շարք ճյուղերում կագրային եթե բանվորների համեմատաբար ցած տոկոս ունենք: Բանվոր դասակարգի կազմի մեջ նոր-նոր գրավված գյուղացիական տարբեր շատ ունենք: Եենթադրվում է այս հինգ տարբերում բանվորների քանակական 700 հազար մարդով՝ ավելացնել: Արդյունաբերության մեջ նոր-նոր ներկրավված բանվորների քանակական այդ աճումն իրականացնելու համար հարկավոր է գյուղից համեմատաբար ավելի մեծ քանակությամբ բանվորներ ներգրավելու ուստի և բանվոր գասակարգի այդ նոր հում մասսաները ֆաբրիկաւ գործարանալին քուրայում կը ըթելու և վերամշակելու պրոբեմը չափազանց կարենը և անմիջապես վերաբերում է աշխատանքի դիսցիպլինային ու աշխատանքի արտադրողականությանը, վորովհետեւ հենց այդ տարբերն ու բան-

վոր դասակարգի այդ միջնաշերտերը մեծ մասսամբ տմհնից ավելի քէչ դիսցիպիլինալիք լինթարկված, աշխատանքային դիսցիպիլինալին ամենից ավելի քէչ յենթարկվողներն են: Այսինչ աշխատանքի արտադրողականության հարցը կապիտալիզմի վրա սոցիալիզմի տանհիքը հաղթանակի վորոշող հարցն ե: Յես ինձ թույլ կտամ հիշեցներ, թե վլադիմիր Ռլիչն ինչպես եր մոտենում և ինչպես եր դնում աշխատանքի արտադրողականության հարցը: «Խորհրդային իշխանության հերթական ինսդիրները» գրվածքում նա ասում եր.

Ամեն մի սոցիալիստական հեղափոխության մեջ, յերբ արդեն լուծված է իշխանությունը պրոլետարիատի ձեռքով նվաճելու խնդիրը, եքապրոպերիատորներին եքապրոպերիացիայի յենթարկելու խնդրի զլխավորապես և հիմնականորեն լուծվելուն՝ զուգացեռ առաջին կարգ և քաշվում կապիտալիզմից ավելի բարձր կենսակարգ ստեղծելու արմատական խնդիրը, այսինքն աշխատանքի արտադրողականության բարձրացման և գրա հետ կապված (և դրա համար) նրա բարձրագույն կազմակերպության խնդիրը:

Աշխատանքի արտադրողականության բարձրացումն ամենից առաջ պահանջում և խոշոր ինդուստրիալի նյութական հիմունքի ապահովություն՝ գառելանյութի, յերկաթի արդյունագործման, մեքենաշինության, քիմիական արդյունաբերության զարգացում:

Աշխատանքի արտադրողականության բարձրացման մի ուրիշ պահան և, առաջին, բնակչության մասսայի կրթական ու կուլտուրական

վերելքը... յերկրորդ՝ տնտեսական վերելքի պահման և նույնապես աշխատավորների դիսցիպիլինայի, աշխատելու շնորհքի, արագաշարժության, աշխատանքի բեղունության, նրա լավագույն կազմակերպման բարձրացումը: (Հատոր X^o, եջ 209):

Հարկավոր ե ամրացնել այն, ինչ մենք ինքներս ենք նվաճել, ինչ դեկրետով ենք անցկացրել, որինականացրել, քննարկել, կանխրոշշել — աշխատանքային ամենուրյա դիսցիպիլինայի ամրապինդ ձեերի մեջ առնել: Այս ամենադժվարին, բայց և ամենաշնորհակալ խնդիրն ե, վորովնեակ նրա լուծումը միայն մեզ սոցիալիստական կարգեր կտա: Պետք ե սովորել աշխատավոր մասսաների բուռն, գարնան ջրերի պես հորդող, բոլոր ափերից յելնող միահնդային դեմոկրատիզմը միացնել լերկաքրյա դիսցիպիլինային աշխատանքի ժամանակ, մեկ անձի՞ աշխատանքի ժամանակ խորհրդային դեկապարի կամքին անդիմագարձ հպատակվելուն: (Հատոր X^o, եջ 220-221):

Վագիմմիր իլլիչը չեր վախենում հարցն ուղղակի դնելուց, թե՝ բանվոր դասակարգի առանձին միջնաշերերի մեջ դիսցիպիլինարության բացակայությունը բանվոր դասակարգի վրա բուրժուական և մանր-բուրժուական տարերքի արած ազդեցության արտահայտություն ե:

... Բուրժուական և մանր-բուրժուական տարերքը, — ասում եր Լենինը, — խորհրդային իշխանության դեմ պայքարում ե յերկու կերպ, մի

կողմից՝ զինված ուղղակի ապստամբությունների ուղիով, իսկ մյուս կողմից այդ տարերքը գործում եներքուստ, ոգտագործելով տարրալուծման ամեն մի տարրը, կաշառվելու ամեն մի թուլությունը, վորպիսզի ուժեղացնի անդիսցիպլինարությունը, սանձարձակությունը, բառոր (Հատոր Խ, էջ 215):

Յեկ մի ուրիշ տեղ՝

Միթե կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում,-- ասում ե կենինը,-- դասակարգային կովի եյությունն այն չը, վոր բանվոր դասակարգի շահերը պաշտպանի այն մի բուռն բանվորներից, դրանց խմբակներից ու շերտերից, վորոնք համառորեն կառչած են մնում կապիտալիզմի տրադիցիաներին, սովորություններին և շարունակում են առաջվա պես նայել խորհրդային պետությանը—«Նրան» աշխատանք հանձնել ինչքան կարելի յե քիչ և վատ, «Նրանից» դրամ պոկել հնոր յեղածի չափ շատ: (Հատոր Խ, «Մեր լրագրերի բնութի մասին»): Աշխատանքի յերկաթյա դիսցիպլինան, ինչպես այդ բոլորովին ճիշտ նշում եր վլադիմիր իլյիչը, պետք ե զուգորդված լինի լայն գեմոկրատիայի և բանվորական լայն մասսաները պետության ու տընտեսության կառավարման գործին ամեն կերպ ներդրավելու հետ: Կոմմունիստական նոր դիսցիպլինա պետք ե հաստատվի պրոլետարիատի շարքերում:

Պետք ե հաջողեցնել, վոր բոլոր ձեռնարկություններում այնպիսի հանգամանքներ ստեղծվեն, վոր բանվոր դասակարգը պրոլետարական դիսցիպլինան

խախտողներին նաևի ինչպես իրեն ոտար մարդկանց, վոր բանվոր դասակարգը դատապարտի նրանց այն վասի համար, վոր պրոլետարական պետության են պատճառում: Բանվոր դասակարգի լայն ակտիվությունը պետք ե կապված լինի նրա շարքերի խոշորագույն դիսցիպլինարության հետ: Կարելի յե դրան հասնել, և կհասնենք, յերբ մեր կուսակցական, արհեստակցական կազմակերպությունների առանցքավիճ խնդիրներից մեկը կղառնան՝ բանվոր դասակարգի ներգրավումը արտադրական խորհրդակցությունների մեջ, արտադրության բնագավառում բանվորներին մասսայորեն սոցիալիստական մրցության մեջ գրավելու աշխատանքը:

Մեր մամուլն ել պետք ե այդ պրոբլեմը դնի իրեկ կարեռագույն խնդիրներից մեկը: Ի՞նչպես եր դնում Վլադիմիր իլյիչը տնտեսական կյանքի մեջ մասուլի մասնակցության հարցը: Յես լինինի վերջերս «Պրավда»-յում հրապարակված հոդվածից միայն մի կտոր կրերեմ. այդ հոդվածը Խորհրդային իշխանության հերթական խնդիրները՝ գրվածքի սկզբնական ուրվագիծն եւ Ահա՝

«Մեր խնդիրն ե, — ասում ե այնտեղ Վլադիմիր իլյիչը, — մամուլը զիխավորապես որվա բարդական նորուրյուններ հաղորդող որգանից դարձնել բնակչության մասսաների տեսեսական դաստիարակության լուրջ որգան: Մամուլն առաջին խև տեղը պետք ե ոնի աշխատանիքի հարցերը նրանց անմիջական գործնական դրույնի: Խորհրդային իշխանության համար առանձին խուզուագույն ձեռնարկություններում յեկ գուղական առանձին հա-

մայնեներում աշխատանքի կազմակերպումն է հենց
ամբողջ հասարակական կյանքի ամենազդիչավոր,
արմատական լեկ հրատապ հարցը, Յեթե նայելու
լինենք մեր թերթերին, ապա հետև է համոզվելը,
թե դեռեվս ինչքան անչափ մեծ տեղ ենք տալիս
մենք բուրժուագիտայի դրած հարցերին, այն հարցե-
րին, փորոնցով նա ցանկանում է աշխատավորների
ուշադրությունը նեղացնել սոցիալիստական վերա-
շինուարյան կոնկրետ գործնական խնդիրներից: Մենք
մամուլը սենսացիաների որգան լինելուց, քա-
ղաքական նորություններ հաղորդելու պարզ
պապարատ լինելուց, բորժուական ստիլ գեմ
պարարող որգանից պետք է դարձնենք, — յեկ
կդարձնենք, — մասսայի վերադասիարակման գոր-
ծիք, մասսային աշխատանքը նոր ձեզով կարգի
դնելուն ծանրացնելու գործիք: Այն ձեռնարկու-
թյուններն ու զյուղական համայնքները, փորոնք չեն
յենրարկվի ինքնակարգապահության վերականգն-
մանը յեկ աշխատանքի արտադրողականության
բարձրացմանը վերաբերող փորեկտ կոչերի յեկ պա-
հանջների, սոցիալիստական կուսակցությունների
կողմից սել տախտակին կդրվին և կանցկացվեն կամ
հիվանդ ձեռնարկությունների շարքը, փորոնց
նկատմամբ հարկ և լինում հատուկ հարմարանք-
ների հատուկ քայլերի և որենքների — ճանա-
պարհով առողջացման միջոցներ ձեռք առնել, և
կամ տուգանքիած ձեռնարկությունների կարգը կփո-
խադրվին, փորոնք փակման են յենրակա, յեկ փո-
րանց մասնակիցները պետք է ծովովդրական դատա-
սանին հանձնվեն:

Ահա մամուլի այս խնդիրները չպետք ե մոռացության տրվեն: Մամուլը կարող ե շատ բան անել, վորպեսզի ոգնի հնգամյա պլանի կատարմանը, վորպեսզի ոժանդակի դժվարությունները և անկարգությունները վերացնելուն, վորպեսզի պրոպագանդանի ամենալավ տնտեսություն անելու որինակները և մեր տեխնիկական նվաճումները:

Հնգամյա պլանի իրականացման կարեռապույն պայմանը կադրերի պրոբլեմն ե: Հաշվի առնելով այդ դրսի ամրող կարևորությունը, անհրաժեշտ ե թե քանակի և թե փորակի կողմից ավելի մեծ չափով ապահովել սեփական մասնագետների նախապատրաստումը և լայն չափերով ոտարերկրյա մասնագետներ հրավիրելը, միաժամանակ հատուկ ուշադրություն դարձնելով վորակավորված բանվորական ուժ նախապատրաստող բոլոր ողակների աշխատանքի բարելավմանը: Այդ նպատակով պետք ե ոգտագործվեն, ընդույնվեն և լավացվեն տեխնիկական և արհեստագիտական բարձրագույն, միջնակարգ և ստորին կրթության բոլոր տեսակներն ու հնարավորությունները, վորով արդյունաբերությունը պետք ե ապահովվի թե ինժեներա-տեխնիկական և թե բանվորական վորակավորված ուժի համապատասխան քանակով: Ավելի լայնութեն պիտի ծավալի թերզոպալի և Ամերիկայի տեխնիկական փորձն ոգտագործելու աշխատանքը տեխնիկական ոժանդակության պայմանագրեր կնքելու ձևով, վոր վերաբերում են այդ ուղղությանը կոնցեսսիոն առանձնապես բարենպատ քաղաքականության պայմաններ ստեղծելուն և մեր մասնագետ-տեխնիկական, վորակավորված բանվորներին և ուսանողու-

թյան ամենից ավելի ընդունակ մասը յերկարատև ժամկետներով արտասահման ուղարկելուն:

Հնկերներ, հնգամյա պլանի մասին խոսելով, չի կարելի, թեկուզ միքանի խոսքով, կանգ չառնել նրա սկզբի տարվա մասին:

Մենք մի ամբողջ շարք դժվարություններ ունեք, վորոնք հիմնականում բացարձում են մեր տնտեսության ու հասարակության բնության մեջ որյեկտիվության թաղված պատճառներով—մեր յերկրում զորավոր և զարգացած արդյունաբերության, մանավանդ արտադրության միջոցներ արտադրող արդյունաբերության, մետաղաձուլման, մեքենաշինության, եներգետիկ արդյունաբերության բացակայությամբ։ Արդյունաբերության ինտ մնալը մեր առաջ կանգնած խնդիրներից, գյուղատնտեսության չափազանց հետամսցությունը, վորոնք հետեանք են հասարակ ապրանքարտադրողների մանր, կոտորակված, անհատական տնտեսություն ունենալու, իսկ այդ ապրանքարտադրողները հենց այդ անհատական ու կոտորակված բնութիւնորդներից չեն կարող այդ ձևերով ոգտագործել տեխնիկայի բոլոր նվաճումները, բարձրացնել իրենց տնտեսության արտադրողականությունը և ապրանքայնությունը,—ահա մեր ներկայիս դժվարությունների արմատը։ Տեխնիկական ու կուլտուրական ցածրագույն արդյունաբերությունը կառուցվածքի մի ամբողջ շարք անհամաչափություններն ու հակասությունները, վորոնք ժամանակություն ենք ստացել կապիտալիզմից, մեր տնտեսության կառուցվածքի մի ամբողջ շարք անհամաչափություններն ու հակասությունները, վորոնք պետք են հաղթահարվեն, վորպես ոնտեսությունը կարողանա ավելի սահուն կերպով զարգանալ, կապիտալիստական թշնամական ողակումը,

մեր ու համաշխարհային տնտեսությունների միջև վորոշ փոխհարաբերությունների անհրաժեշտությունը, վորովհետև մենք չենք կարող մեր յերկրը վերաշխնել առանց ոտարերկրյա տեխնիկայի, առանց արդյունաբերության մի ամբողջ շարք ճյուղերի համար թե սարքավորում և թե հումք գնելու, —այս բոլորը սաստկացնում ենին մեր առաջ կանգնած դժվարությունները։

Այս բոլոր դժվարությունները. վորոնք հետագա շարժման մեջ պետք են հաղթահարվեն, և վորոնք ներկայումս վորոշ արգելապիթներ ստեղծում են, բարդանում են քաղաքում և գյուղում դասակարգային կովի սրման շնորհիվ, վորով զգալիորեն ծանրանում են այդ դժվարությունները։

Մեր ունեցած այդ բոլոր դժվարությունները կարող են միայն մի ամբողջ շարք ձեռնարկումներով հաղթահարվել։ Այս տարի մենք մի ամբողջ շարք անբարեհաջող գործուներ ունենինք, վորոնցից կարեւրագույններն են՝ հացամթերման գործի և քաղաքներին ու սպասող ուայոններին հաց մատակարարելու դժվարությունները։ Այդ ժամանակավոր դժվարությունները, վոր հիմնականների սրումն են, ինարկե, մեղնից եւ հասուկ միջոցներ, ինչ-վոր վորոշ շարժեր են պահանջում, բայց միթե կարելի չե այդ դժվարությունների ազդեցության տակ ընկրկել այն խնդիրներից, վոր մենք մեր առաջ դրել ենք հնգամյա պըլանում։ Կարելի՞ չե, ասենք, այդ դժվարությունների ազդեցության տակ սկսել նեղ տեղերին հավասարվել, հարմարվել, ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի տեմպը ալդ նեղ, հետամնաց տեղերին հարմարեցնել։ Մեր կուսակցության մեջ այսպիսի ձայներ

են լսվում, յերբեմն այսպիսի տրամադրություններ են հանդիպում քանի վոր հացի բանը վատ ե, միքիչ կանգնեցնենք յերկրի ինդուստրիացման տեմպը. փոխանակ մեր արդյունաբերության համար արտասահմանից սարքավորում և հումք բերելու, հաց բերենք, և այն: Մինչդեռ բոլորովին պարզ ե, վոր արտասահմանից հաց բերելը վերջիվերջո այլ բան չե, քան մեր արդյունաբերությունը խափանող և ինդուստրիացման տեմպը դանդաղեցնող հակաւական գործոն, Մի խոսքով՝ ի՞նչպես պետք ե շարժեր անել. այժմ, այս դըժվարությունների դեպքում շարժե՞ր անել արդյոք վերջիվերջո դեպի սոցիալիզմի կառուցումը տանող ձեռնարկումների հաշվին, թէ յերկրում յեղած ռեսուրսների հաշվին, կապիտալիստական տարրերի հաշերի հաշվին, այդ կապիտալիստական տարրերի շահերի հաշվին:

Յես կարծում եմ կուրի կլիներ այն քաղաքականությունը, վորը կսկսեր այդ ժամանակավոր դըժվարությունները բուժել ինդուստրիացման տեմպը խափանելով, խորհանտեսությունների և կոլտնտեսությունների զարգացումը և առհասարակ սոցիալիստական տարրերի աճումը դանդաղեցնելով:

Այդպիսի քաղաքականությունը, այսորվա համար ինչ-վոր վողորմելի պլյուսներ ստանալով, կկտրեր այն ձյուղը, վորի վրա նստած ե մեր հետապա բարեհաջող զարգացումը այդ որգանական դժվարությունները վերացնելու ուղղությամբ: Յերկրի ինդուստրիացումը մեզ հարկավոր ե վոչ թէ հենց այնպես, այլ վորպիսզի ժողովրդական տնտեսության բոլոր ձյուղերի միջն հավասարակշռություն սահմանվի: Ինդուստրիացումը և նրա մեծ տեմպերը մեզ հենց նրա համար են հար-

կավոր, վորպեսզի վերջիվերջո հնարավորություն ունենանք այդ դժվարությունները հաղթահարելու սոցիալիստական տարրերի շատ ավելի հզոր աճման ուղղով, այն տարրերի, վորոնք պետության ձեռքն են տալիս ժողովրդական ամբողջ տնտեսությունը կարգավորելու հնարավորությունը: Ուստի չարաչար մուլություն և ամենախորին սխալ կլիներ, յեթե այդ դժվարությունների ազգեցությամբ խուճապի մեջ ընկնիվնք, մեր քաղաքականության գլխավոր գիծը այս կամ այն վերանայման կամ կրծտածան յենթարկելինք ինդուստրիացման, կապիտալիստական տարրերը գրոհելու բնագավառում:

Մենք կարող ենք յենել մեր ներկայումս ապրած բոլոր դժվարություններից, յեթե ոգտագործենք մեր տրամադրության տակ յեղած բոլոր ռեսուրսները: Մասնավորակես կուսակցության կենտրոնական կոմիտեի վորոշումը հացը հանձնելու մտքով միքանի ռայնների (Ուրալի, Սիբիրի, Կազակստանի) կուլակության դեմ հասարակական ազգման միջոցներ կիրառելու մասին—մի այնպիսի շարժ ե, վորը միքիչ մեղմելու յեներկայումս մեր ապրած դժվարությունները: Անշուշտ աճելու ելին այդ դժվարությունները այն գեպքում, յեթե կենտրոնական կոմիտեն չձեռնարկեր այդ միջոցին: Կենտրոնական կոմիտեն հենց այնպես ե շարժ կատարել, ինչպես անելու յեր պրոլետարական կուսակցությունը, վոր ընդունում ե այդ դժվարությունները, բայց նրանց պատճառով խուճապի մեջ չի ընկնում և չի ուզում իջեցնել տեմպը ինդուստրիացման և կապիտալիստական տարրերի դեմ կովելու բնագավառում: Մենք շարժ կատարեցինք

կուլակի հաշվին, նրանից հացի ավելցուկները խլելու հաշվին, նրա ռեզերվները վերցնելու հաշվին, բնավ չշոշափելով գյուղի միջակ մասսաների շահերը, չշոշափելով ինդուստրիացման ռեզերվները: Այդ պատճառով ել այս միջոցը չպիտի նկատվի իրրև մեր քաղաքականության փոփոխություն, իբրև մեր քաղաքականության բնագավառում գյուղատնտեսության նկատմամբ վորեւ տեղաշարժություն: Կուսակցությունն առաջլա պես ընդունում է, վոր գյուղատնտեսության բնագավառում մեր քաղաքականությունն իրեն խնդիր և դնում գյուղի սոցիալիստական տարրերի հաղթանակը կապիտալիստական տարրերի դեմ, միջակ ու չքավոր լայն մասսաների մղած դասակարգաչին կովի միջոցով: Միջակի հետ դաշնը գյուղի հարցում մեր քաղաքականության հիմքն է: Բայց այդ դաշնը գնաւով ավելի ու ավելի փոխում է իր բնույթը, փոխվում է և գյուղացիության հետ բանվոր դասակարգի շաղկապի բովանդակությունը: Շաղկապի այդ նոր ձևերը փոփոխություններ են կրում արդյունաբերության ամրապնդմանը զուգահեռ, նրա դեկավար դերի, ժողովրդական ամբողջ տնտեսության մեջ նրա առաջատար դերի ամրապնդմանը զուգահեռ, մեր տնտեսության բոլոր հատվածներում սոցիալիստական տարրերի ամրապնդմանը զուգահեռ:

Այնպիսի մեթոդներ, ինչպես կոնտրակտացիան, մեքենահայթայթումը, վարկը, ինչպես խողոր խորհունտեսությունների կազմակերպումը և դրանց ոգնությունը շրջապատի գյուղական բնակությանը, ինչպես մեքենա-տրակտորային կայանները, կոլտնտեսությունների կազմակերպումը և այլն, — այս բոլորն

զգալիորեն փոխում են գյուղացիության հետ բանվոր դասակարգի շաղկապի ձևերը: Այդ ձևերն ավելի ու ավելի արտադրական են դառնում, այսինքն այնպիսի, վորոնք արմատակի բարեփոխում են գյուղացու տնտեսությունը, վորոնք այն մանրից խոշոր, անհատականից կոլեկտիվ հն դարձնում, վորոնք ավելի ու ավելի յին պատվաստում կոլլեկտիվ աշխատանքը և դրա հետ մեկտեղ փոփոխության են յինթարկում գյուղացիների՝ իբրև անհատ ապրանք արտադրողների՝ սեփականատիրական հոգեբանությունը:

Շաղկապի ձևերը փոխվում են, և դրան համապատասխան արագանում և կոլլեկտիվացման աճումը, արագանում և սոցիալիստական տարրերի հաղթանակը գյուղում:

Ընկերներ, այն գժվարությունները, վորոնց մասին յես խոսեցի, վորոնք հիմնականում վերացվել կարող են միմիայն մեր յերկրում սոցիալիզմի խոշոր հաղթանակների հետևանքով, — այդ գժվարություններն իրենց հաղթանարելու համար պահանջում են մեր կուսակցության կողմից ամենամեծ լարում և ամենամեծ եներգիա: Մենք մեր աշխատանքը պետք ե վերածենք այնպես, վորպեսզի կյանքում իրադրենք ընկ. կենինի արտահայտած կանոնը, վորպեսզի յերկաթյա դիսցիպլինայի կողքին, առանձին ձեռնարկությունների անպայման միանձնյա կառավարման կողքին հզորապիս զարգանա ամբողջ բանվոր դասակարգի ակտիվությունը տնտեսության կառավարման և մեր հասարակության բարեփոխման գործում:

Ինչքան մենք ավելի վճռականորեն կողմ-

նակից լինենք անխնա ամուր իշխանության, ճիշտ՝ կատարողական գունդցիաների վորոշ մոմենտներին աջասանիքի վրուս պրոցեսների համար առանձին անձերի դիկտատորացին, — առում եր Վաղիմիք իլյիչը, — այնքան ավելի բազմազան պետք է լինեն ներքեց կոնտրոլի ձևերն ու յեղանակները, վորպիսզի խորհրդավորն իշխանությունը խեղաթյուրելու հնարավորության վորեւ ստվերը լուծենք, վորպիսզի կրկնակի ու անդուլ արժատահան անենք բյուրոկրատիզմի մոլախոտը: (Ենին, հատոր Խ^ւ, եջ 223—224):

Այդ կարելի յե անել լայն մասսաներն այդ դըժվարին պլանի կատարման պլոցեսում անխուսափելի մեր թիրությունների քննադատության, սեր բյուրոկրատիզմի քննադատության, պակասությունների ու սխալների քննադատության ներդրավելով:

Բայց, ընկերներ, ինքնաքննադատության այդ զարգացումը, բանվոր դասակարգի ակտիվության հզոր զարգացումը, բանվոր դասակարգի միլիոնավոր մասսաների լայն մասնակցությունը տնտեսության բարձրացման համար կատարվող մրցմանը այն ժամանակ ե միայն հնարավոր, յերբ մեր լենինյան կուսակցությունը մինչև վերջ տոկուն լինի, յերբ նա դասակարգացին անադարտ դիմ ունենա, յերբ առանց տատանումների գնա կովելու սոցիալիզմի համար, վոր հենց ինքը ձեզ առաջարկվող հնգամայ պլանի կատարումն ե: Աներեր, միասնական ճակատով, հաղթանակելու հնարավորության լիակատար հավատով — ահա ինչպես պետք ե մեր կուսակցությունն այդ մարտի մեջ մտնի:

Յեվ բոլորովին ակներկ ե, վոր դըա համար հարկավոր և մեծ աշխատանք տանել այն տատանումների դեմ պայքարելու գործում, վոր մեր առանձին միջնաշերտերում կան: Հարկավոր ե վճռականորեն պայքարել աջ թեքման դեմ, վորը վերջիվերջո այլ բան չե, քան յեթե մանր-բուրժուական տարերքի արտահայտություն, վոր բանվոր դասակարգի մի մասն եւ մեր կուսակցության վորոշ միջնաշերտերն ել ե կլանում: Միայն մեր շրջանում աջ թեքումը հաղթահարելով, միայն մեր կուսակցությունը մինչև վերջին մարդը զինելով պայքարի յեռանդով, հաղթանակի հավատով, մեր կուսակցության ճիշտ գծի հիման վրա, վոր մեր կուսակցության համագումարներն ու կենս սահմանել — միայն այդ դեպքում կարող ենք համանել հնգամայ պլանի նախորդուած արդյունքներին: Հնգամայ պլանը միմիայն իր չափերով հոկայական պլան չե, նա դասակարգացին այն կատարի կովի պլանն ե, վոր մենք կմենք թե ներսում, թե դրսում: Հնգամայ պլանը սոցիալիզմի և կապիտալիզմի պայքարի պլանն ե, Այս հնգամայ պլանի հաջողությունը վկայություն, յերաշխիք կլինի այն բանի, վոր մեր յերկրի բանվոր դասակարգը, հաղթանակելով Հոկտեմբերին, վերջնականապես կտնկի սոցիալիզմի գրոշակը մեր յերկրում և դրանով հարցուրապատիկ կմեծացնի վողջ աշխարհում պրոլետարիատի հաղթանակի հոսքավորությունը: Դժվարությունների հանդեպ ընկրկումները, այդ սրբնթաց առաջարժման գահավիժումները, սոցիալիզմի աճման տեմպերի նվազումը քաղաքում և գյուղում, — այս բոլորն անխուսափելիորեն կտանի դեպի այն, վոր մեր յերկրի պրոլետարիատը սոցիալիզմի ու

կապիտալիզմի այս մեծ բռնամարտում կկորցնի իր դիրքերը։ Ուստի՝ կոիվը բոլոր տատանումներին, կլո-
սիվը անկայուն բոլոր տարրերին, կոիվը մանր-բուր-
ժուական խուճապին ու լքմանը յենթարկվող բոլոր
տարրերին, պայքարը աջ թիքման դեմ—հնդամյա
պլանի կատարման կարեռագույն պայմանն են։ (Ծա-
փահարուրյուններ)։

Գ. Մ. ԿՐԺԻԺԱՆՈՎՍԿՈՒ ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔԸ

Ընկերներ, մեր առաջ բազմազան հոետորների
մի ամբողջ շարք անցավ։ Բայց յես կարծում եմ՝ ա-
ռաջին՝ մենք պետք են չենք, վոր հնդամյակի մեր
առաջ անցած քննադատման հանրագումարն ընդհան-
րապես և ամբողջությամբ, անշուշտ, զրական ե։ Մի
ամբողջ շարք ընկերներ բավական պայծառ, բավական
վճռական շեշտում են այդ աշխատանքի դրական
հատկությունները։ Վոչ մի կասկած չկա, վոր այդ աշ-
խատանքը, ինչպես նախազգուշացրել ենի, առաջին
մերձեցման աշխատանք և ի մասնավորի, յիթե դուք
ինձ առաջարկեյիք թվել այդ աշխատանքի թերու-
թյունները, հավանորեն յես այդ շատ ավելի հանդա-
մանորեն անել կվարողանալի, քան այստեղ արտա-
հայտվողներից շատերը։ Սակայն բանն այդ առանձին
թերությունները չեն։ Բանն այն ե, վոր այս հնդամյա
պլանը, իր ներկա դրությամբ, յերևակայություն չե,
անզործ բանաստեղծի ստեղծագործություն չե, այլ
աշխատավորների մի անազին կոլլեկտիվի, նույն
թվում և զիտական ժաքի ներկայացուցիչների բազ-
մամյա աշխատանքի մի հանրագումար, վոր կարող ե
անտեսության վրա, մեր հեռանկարութիւն պլանների
կատարելագործման վրա դրվող աշխատանքի հիմքը
դառնալ։

Թույլ տվեք կանգ չառնել հոետորների այն մասի վրա, վորոնք գործի այդ կողմն ելին շեշտում: Մենք, կոմմունիստներս, ինչպես հայտնի յե, շատ ել ախորժում չենք գովեստներն ու ծառալությունների շեշտումը: Թույլ տվեք գեթ քիչ խոսքերով կանգ առնել հոետորների մի ուրիշ խմբակի վրա՝ այն հոետորների վրա, վորոնք հաշվի չառնելով դրության լրջությունը, հաշվի չառնելով այն պատասխանատվությունը, վորով պետք ե համակված լինելին, յերբ խոսում ելին մեր տնտեսական ամբողջ հնգամյակի աշխատանքի պատասխանի մասին, այս ամբիոնից ջանում ելին այսպես թե այնպես վարկարեկել այս հնգամյա պլանի սկզբունքային դրվածքը:

Այդ մասի հոետորների մեջ միայն յերկու պայծառ դեմք գտնվեցին՝ մի կողմից ընկ. Լարինը և մյուս կողմից ընկ. Ռիազանովը: (Կոսիոր. «Հսկապես մեկ կողմից և մյուս կողմից»: Փիծաղ): Հենց այս յերկու հոետորը կարծես յերկու բեեռ ելին, բայց հնգամյա պլանի քննադատման ասպարիզում՝ ինչ-ինչ պատճառներից՝ միացան:

Հստիս, առաջին տեղն, այնուամենայնիվ, ընկ. Լարինը պետք ե բռնի: Նրա վարկը՝ իբրև շատ «բարեխիզ» բանավիճողի՝ մեզ լայնորեն հայտնի յե, և հարկ չի լինի, վոր յես դրա վրա կանգ առնեմ: Վլադիմիր Իլյիչը նրա աջն ու ձախը հոյակապ կերպով նկարագրել ե կուսակցական X համագումարում:

Կրկնողություն չանենք: Այս համագումարում մեկն ասաց, թե յերբ Լարինը ձեռնամուխ ե լինում արաբական թվերին, դրանք արաբական հեքիաթներ են դառնում: Այդ պատճառով, յերբ լսեցի, թե Լարինը

մտադիր ե անցնել մեր հնգամյա պլանի թվերի մշակմանը, խոստովանվում հմ, ընկերներ, սարսուռ անցակ մարմնովս:

Բայց և այնպիս յես այսպես կասեմ. ավելի լավ ե թվերի բանաստեղծ լինել կամ, ինչպես ասում են, «քերթող», քան թե քերթող: Ընկ Լարինը դրական հատկություններ ել ունի: Նրան հատուկ ե՝ ուրախություն հարուցել. սա դրական հատկությունն ե: Ավելի լավ ե ուրախանավ քան լաց լինել, և մտնավանդ կոկորդիլոսի արցունքներ թափել: Յեզ ահա պլանի առթիվ միքանի «արցունքների» վերաբերամբ ցանկություն ունեմ մի յերկու խոսք տսելու:

Ընկ. Լարինին բախտը չի բերում, յերբ նա հեռանկարացին պլանների քննադատությունով ե յեւնում: Առաջին արտալածքը (Վալազկա) նա արեց, ինչպես ձեզ հայտնի յե, ելեկորիթիկացիայի պլանի քըննադատման ժամանակը ՌՕԹՊՐՕ-ի պլանի քննադատման ժամանակ: Դուք, ընկերներ, հավանականաբար հիշում եք Վլադիմիր Իլյիչի հոդվածը տնտեսական միասնական պլանի մասին, վորտեղ նա ընկ. Լարինին կարգին բմբլել եր: Բայց այդ դասն ոգուտ չըերեց ընկ. Լարինին. Նա բան չսովորեց: Նա նույնիսկ նեղություն չի քաշել նայելու այն նյութերին, վոր բաժանված են ձեզ, վորովհետև յես համոզված եմ, վոր յեթե նա աչքի անցրած լիներ այդ նյութերը, այնպիսի ներողամտությամբ չեր խոսի այդ «փոքրիկ սպիտակ գրքույկի» մասին, վորի մեջ, նրա կարծիքով, նույնիսկ դասակարգալին կարգվածք չկա: Զվարճալի՛ գրություն: Խոկ մենք, ահա, Քաղբյուրուի հանձնաժողովի անդամներս, վորոնք ձեր ուշագրությանն

առաջարկված բանաձևի մեջ պետք եւ համառոտակի քաղվածքով վոչ միայն մեր հնդամյա պլանի տիեսնիկատնտիսական հիմունքները տայինք, այլ և պլանի սոցիալական հատածը, — մենք թվերի բավականաչափ քանակություն գտանք լիովին ստուգ եւ, ինչպես հենց ինքը Լարինն արտահայտվեց, գործնական, դասակարգայնորեն հիմնավորված բանաձևի համար: Բանից դուրս լեկավ, վոր այդ փոքրիկ գրքույկը բավական եւ պլանի սոցիալական հատածի գլխավոր գծերը ատլու համար, իսկ այդ հենց այն եւ, ինչ կոչվում եւ ուժերի դասակարգային դասավորում:

Լարինը հակասում եւ Լարինին:

Բայց յես կարծում եմ, վոր բացի այդ սպիտակ գրքույկից դուք միքանի կապուէտ գրքույկներ եք ստացել եւ, ի միջի այլոց, ընկ. Ստրումիլինի գրքույկը, վորը նվիրված եւ սոցիալական հատածի չափազանց մանրակրկիտ վերլուծմանը, հենց սոցիալական հարաբերությունների մանրակրկիտ հաշվառքին, վորտեղ բերված են աշխատանքի բալանսի բավականին մանրամասն հաշվվերը, վորտեղ վերլուծվում են սոցիալական կարգի ամենահրատապ հարցերը, — գործազրկության հարցերը, պրոլետարիատի՝ վորպես մեր շինարարության բարդ սոցիալական ամրողջի մեջ ավանդարդի հետագա դերի հարցերը:

Յես կարծում եմ՝ դուք ստացել եք նույնպես ամփոփումը, պլանալին համագումարի աշխատանքների գրքույկը: Յեվ յես շատ ափսոսում եմ, վոր ձեզ չեն բաժանել «Պլանու հօգայություն»-ի յերկրորդ ու յերրորդ համարները, վորտեղ, ձեր շահերն ինկատի առնելով, մենք հրապարակել ենք — մանավանդ յեր-

րորդ համարում — հնդամյակի յերկրորդ հատորի ամենագլխավոր աշխատանքները, վորոնք այս հավաքական ակնարկին հիմք են ծառայել, Բայց հենց այժմ, յեթե կցանկանաք, կարող եք ստանալ «Պլանու հօգայություն»-ի այդ յերրորդ համարը: Դուք նրանով և պլանալին համագումարի աշխատանքներով կտևսնեք, թե ինչքան մեծ ե այն նյութը, վորը մենք հիմնական գծերով տրամադրության տակ ունեցինք այս ամփոփող ակնարկը կազմելիս:

Ընկ. Լարինը գտնում ե, վոր մեր աշխատանքի գլխավոր զանցառություններից մեկն այն ե, վոր մենք չենք կանչել նրա ծանոթներին:

Ընկ. Լարինը բոլորվին մոռանում ե, վոր Պետպլանի ներկայումս աշխատող ապահովատն այլևս բոլորվին չունի այն գծերը, վոր իրեն ծանոթ ելին Պետպլանում ունեցած իր նախկին գործնականից: (Ույզենիան. «Նա առհասարակ անպլանացին մարդ ե»):

Ներկայումս Պետպլանի հինգ հարյուր աշխատավորներից հարյուրը կոմմունիստ են: Բայց վորովհետեւ յես առանձնապես անբարեխողմ եմ համարում ընկ. Լարինի այն մեղադրանքը, վոր իրը թե անտեսագետ կոմմունիստները մասնակցելու անբավարար ելին հրավրվում, և վորովհետեւ «կոսոքերին չեն հավատում», ուստի յես մի փոքրիկ փաստաթուղթ կկարդամ, վորը վկայում ե գեղի այդ հարցը իմ վերաբերունքի մասին: Հնդամյակի առթիվ վիճաբանություններ սկսելուց առաջ յես մասնակցել եմ կոմմունիստական ձեմարանի հենց իմ ոգնությամբ կազմակերպված խորհրդակցությանը, վորտեղ յես բառացի հետևյալն եմ ասել (հաճությամբ չի, վոր բերում եմ իմ խոսքերը,

բայց հարկադրված եմ, վորովհետեւ այս մեղադրանքը յես ծանր եմ համարում): Յես կոմմունիստական ձեմարանը համարում եմ կոմմունիստական տեսական մտքի կենարոն, և ահա թե հնգամյա պլանի առաջիկա աշխատանքների առթիվ յես ինչ ասացի՝ դիմելով կոմմունիստական ձեմարանում աշխատող կոմմունիստաներին.

Յես պետք ե ասեմ, վոր Պետպլանը ներկայումս արդին դառնում ե ուշադրության առարկա: Ինձ մոտ զանազան պատգամավորներ են գալիս. վերջին ժամանակներս յապոնական ու գերմանական պատգամավորություններն ելին, վորոնք ամենամեծ հետաքրքրությամբ ելին դիտում մեր աշխատանքը: Պարզ ե, վոր մեր ամեն մի սխալը, յուրաքանչյուր թերությունը մեր թշնամիները մեծագույն հաճուկքով կոգտագործեն, իսկ յուրաքանչյուր հաջողություն սոցիալիստական պրոպագանդի ամենահզոր գործիք կլինի: Յես կարծում եմ, վոր յեթե ճիշտ դուրս գան մեր ընդհանուր դատողությունները, ապա հենց վերակազմավորման շրջանի առաջին ետապը ցուց կտա, վոր, հակառակ մեր անբավարար կազմակերպության, հակառակ պլանային աշխատանքի մեջ մեր առաջամարտիկ լինելուն, մենք ընդհանրապես և ամբողջությամբ կհաղթահարենք... դժվարությունները և անտեսական աճող պրոցեսսների այնպիսի տեմպեր կտանք, վոր աշխարհին դեռ անհայտ են: Մենք դրանով հենց կապիտալիստական աշխարհի առաջ «կհրապարակենք փաստաթղթեր», վորոնք նրա համար շատ ավելի

վտանգավոր են, քան առաջները մեր հրապարակած դիվանագիտական փաստաթղթերը.. Մենք հենվում ենք իրականության սոցիալիստական բարենորոգմանը, վորը դեպի մեծ Միության ակտիվներն այնպիսի ուղիներ ե տալիս, վորոնց աշխարհն անձանոթ ե...

Կարծում եմ, վոր իրավունք ունենք պահանջներու, վորպեսզի այս աշխատանքներում մենք ամեն տեսակ ողնություն գտնենք ամեն կողմից և առաջին ներքին կոմմունիստական ձեմարանի կողմից... Յես կցանկանայի, վոր... պլանավին համագումարում... Կոմմեմարանից յեկած ընկերները մեզ հետ միատեղ ճեն ճերային լլանալին իսկական աշխատանքի յուղով և մտածելին. թե ամենից ավելի հաճությամբ ինչ պրոբեմներ կառնելին իրենց բաժին:

Կարծում եմ, ընկերներ, վոր գուք չեք լինի վերջին մարտիկներ:

Ահա, ընկերներ, ինչ եմ յս ասել կոմմունիստական ձեմարանի աշխատավորներին դիմելիս, և հույս ունեմ, վոր այդ խոսքերը բավականաչափ բնութագրում են այն դիրքը, վոր յս և Պետպլանի իմ ընկերներն ունենք դեպի կոմմունիստական տեսական միտքը՝ մինչդեռ ծավալվում եր վերակազմավորումը, վորը մեր աչքի առաջ պետք ե վերափոխի մեծ յերկրի կյանքը, յերբ մենք վոչ մի բոպե չենք մոռացել, թե կոմմունիզմն աշխարհ է յեկել վոչ թե փիլիսոփայորեն խորհրդածելու, այլ այս աշխարհի գեմքը վերակազմելու:

Ընկ. Լարինն արհամարհաբար նշում եր, թե այն ամենը, ինչ վոր լավ բան կա մեր աշխատանքների մեջ, յեկել և դրսից, և վոր անցյալում հնգամյակ կազմամյա պլանը — 6

մելու հանրածանոթ փորձերը միմիայն մինիմալիստական բացասական գծեր եյին արտացոլում:

Նա ամենից առաջ մոռացել ե, վոր մեր նախկին հեռանկարային պլանների մինիմալիստական գծերը հատուկ էյին վոչ միայն Պետպլանի աշխատանքներին, այլ և սեր տնտեսական ամբողջ ճակատին: Նրանք վերականգնման շրջանի ժառանգությունն են: Բայց միթե այդ պլանների մեջ միայն վատ բան կար:

Կարծում եմ, ընկերներ, վոր պատմությունն արդպես զրվում է միայն ըստ Լարինի: Իսկ հետո, ընկ. Լարին, ասացեք, ինդրեմ, պախարակելի՞ յև արդյոք, վոր Պետպլանն ու նրա աշխատավորները, պլանային աշխատավորների ամբողջ կոլեկտիվը զգաստ լսում է կուսակցության ցուցմունքները: Ընկերներ, մենք մեզ շարքային մարտիկներ ենք հումարում: Ահա նա, նախագահությունն այնտեղ, վերևուն ե, իսկ յես այստեղ, ձեր շարքերում: Յես իմ կարեռագույն խընդիրն եմ համարում՝ իմ ամենորյա աշխատանքի մեջ զգաստ վերաբերվել կուսակցական կենտրոնների ասածին, մեր համագումարների ասածին, և ուրախությամբ կարող եմ հավաստել, վոր հնագամյակի ներկա լայն քննարկումը կրկին ու կրկին հաստատեց, վոր նրա մեջ մենք ճիշտ ենք արտացոլում կուսակցական ՀՅ համագումարի և հետագա պլենումների վորոշումները: (Կոստիոն. «Ճիշտ ե»): Անցյալում ընկ. Լարինի հետ շատ տարածայնություններ ունենալով հանդերձ յես արհամարհեցի այդ, յերբ հարկ յեղավ հացի սղու սպասումը կրծատելու պլանի մասին խորհրդածելու: Յես նրա վերջին «ալկոհոլային մասնագիտության» դործով նրան դիմեցի, հրավիրեցի նրան Պետպլանի

համապատասխան խորհրդակցությանը և շատ ոգտագործեցի նրա ընդարձակ իրազեկությունն այդ ալկոհոլային հարցում: (Ծիծաղ): Յես կմխիթարեմ ընկ. Լարինին, վորը չի գադարում կարբիկատուրիստների ծառայությունների միջոցով իմ անձը դուրս բերել իրեւ գիտեմոլ թագավորության դեկավար ԽՍՀՄ մեջ: Յես կարող եմ ձեզ հաղորդել հերքելով բամբասողական այդ հերյուրանքները, վոր, ոգտվելով ընկ. Լարինի և նրա աշխատակիցների աշխատանքներով, մենք այս հնգամյակում ամեն միջոցի դիմեցինք, վորապեսզի ալկոհոլը, հացի ողին միր բյուջեի նվազագույն ուստարակ դառնա: Էստ պլանի մենք քաղաքներում ալկոհոլի սպառումը կրծատում ենք $70^{\circ}/\text{o}$ -ով, սկսում ենք սուր կերպով կրծատել նրա սպառումը գլուխում: Բայց դուք գիտեք, ընկերներ, վոր մենք գեպի հացի ողուն հենվելը յեկանք վոչ թե վորով հետեւ գեպի հարբեցողությունը հատուկ հակում ունենք, այլ մեր բյուջեն բալանսի բերելու ձեզ ամենքիդ հայտնի գժվարին հանգամանքների շնորհիվ: Կարծում եմ, վոր ել հարկ չկա, վոր յես կանգ առնեմ ընկ. Լարինի՝ իրեւ այս համագումարի հոետորի՝ վրա:

Կանգ կառնեմ մյուս հոետորի՝ ը. Ռյազանովի վրա: Ես, գիտեք, վոր ը. Ռյազանովը, չնայած իր տարիքին, բնության այնպիսի մանուկ ե, վոր նրան այլ կերպ պետք եվերաբերել: (Ծիծաղ): Դեպի նա բոլորովին բարեխիղճ վերաբերմունք չզբուրվեց: Ծիծաղում եկին, իսկ մի հոետոր, յերբ ը. Ռյազանովը այնքան ևլ հաջող չեր խոսում գնդիկասոնակալների մասին, նրա հասցեին այնպիսի բացականչություն արեց՝ իրը «գնդիկների» կողմից այնքան ել լավ չե նրա բանը:

Յես ալդպես չեմ մտածում, ընկերներ: Յես կարծում եմ, վոր նա «զնդիկներ» շատ շատ ունի, բայց դըժքախտությունն այն է, վոր այդ զնդիկները տարբեր կողմեր են պտտվում: (Լյուբչենկո. «Առանց սռնակալների»): Այդ գնդիկների ընթացքին հասնել չես կարող: Նա յելավ այնպիսի գոռում-գոչումով, բայց վերջում այնպես լեզուն ծամեց, վոր յես նույնիսկ հետևել չկարողացա, թե ինչպես այդ արեց: Հետաքրքական են նրա մտքի վորոտները: Հիշում եք նրա ճառի սկիզբը. նա սկսեց պերճախոսել այն մասին, թե մենք տակավին տարերքի հարվածներին ենք յենթակա, թե մենք վոչ մի կերպ չենք կարող դեռևս յերկնապլան ստեղծել, թե յերկինքն ե բերքի բախտը վորոշողը. նա չափազանց պերճախոս եր նաև յերկրորդ տարերքի՝ արտասահմանի կապիտալիստական աշխարհի մասին: Բայց նա բոլորովին մոռացավ, վոր մենք հենց այդ մոմենտներն եյինք իրը արդարացում բերել պլանի յերկու տարբերակի համար: Բարեհաջող մոռանալով այդ հանգամանքը, նա կայտառ հայտարարեց՝ իսկ յես մեկ պլանի կողմնակից եմ: Նա այդպիսի անսովոր թեթեռությամբ ցատկեց բոլոր տարերքների վրայից:

Դուք գիտեք, վոր պլանի յերկու տարբերակը, ե միջի այլոց, պայմանավորված եյին այն նկատառումով ես, վոր հեռանկարակին շինարարության վորոշիչ դրույքը, վորակական ցուցիչներին ուղղված դրույքը, մեր տեսակետով չեր կարող ամուր թվերի մի շարքում արտահայտվել: Սակայն յերկու տարբերակում ել մենք շինարարության մի ընդհանուր գծի յենք հետամտել ե, ինարկե, ավելի ծանրանում

Ֆլինք ոպտիմալ տարբերակի վրա: Բայց և այնպես նախնական տարբերակն արգեն արեց իր ծառայությունը և լավ ե, վոր գոյություն ունի այն: Բայց յես լիսլին համակարգիք եմ Քաղբյուրուին և Ժողկոմիորհին, թե ներկայում աշխատավորների լայն մասսաների ակտիվությունը զորահավաքելու համար մեզ համար ձեռնոտու յե ուշադրությունը կենտրոնացնել ոպտիմալ տարբերակի վորոշ դրույքների վրա: Մինիմալիզմի և մաքսիմալիզմի մասին գերհեղելքան ամեն տեսակի խորհրդածություններ Ոյազանովի մոտ,— վորովհետև նա Հեգելի պես չեր խոսում,— (Ոյազանով. «Թողեք վոր լսեմ եմ»): Ափսոսում եմ, ը. Ոյազանովի, վոր գուք ուշացաք: Յես ասում եյի, վոր հարկ չկա ը. Ոյազանովի վրա զայրանալու: (Ոյազանով. «Զեղ նման հեզ մարդը ինչպիս զայրանա»): Զեր սեփական բարեհոգությունը ամեն յերկակայությունից գերազանց ե: Նա միատորեն իմ ոժանդակությանն ե դիմում, յերբ ինձ պլանի ուղերձների թուլության համար մերկացնում ե: Ինձ համար շահ չեն նրան այդ վոչ այնքան լավ գործում ոգնել: Յես պետք ե նրա պատճառաբանությունների այդ մասի վրա միքիչ կանգ առնեմ, վորովհետև հանաքը մի կողմ, բայց ը. Ոյազանովը այսեղ շատ ծանր մեղադրանք շպրտեց: Նա ասաց. «Ճեսեք՝ ինչ պատկեր. ե: Մենք Փինանսական պլանում պիտք ե 86 միլիարդ հավաքենք, վորպիսի շինարարության այդ պլանն իրականացնենք, իսկ ուղերձում բնդամենը 500 միլիոն ունենք»:

Յես նրան խորամանկորեն թելաղբեցի՝ մեկ միարդ, նա ասաց՝ մեկ միլիարդ. Յեվ այսուղ տակ առնեմ այսուղ միլիարդ, նա ասաց՝ մեկ միլիարդ, իսկ ուղերձում բնդամենը 500 միլիոն ունենք»:

բռնեցի նրան, վոր չգիտի, թե մեր բյուջելում ինչ-քան ոեղերվ կա: Զեղ ի սարսափ, ը. Ռյազանով, յես պետք ե ասեմ, վոր բյուջելի ոեղերվը 500 միլիոն և: Այդ ի՞նչպես կարող ե պատահել, վոր մենք բյուջելում 1932/33 թվի վերջում ունենանք ընդամենը 500 միլիոն: (Ռյազանով. «Պլուս 300 միլիոն»): Յես կարծում եմ, վոր յեթե 1932/33 թվի 500 միլիոնանոց ոեղերվը համեմատելու լինենք այն ոեղերվի հետ, վոր մենք ներկայումս ունենք, ապա այդ այնքան ել վատ չի, բայց յիս, իհարկե, չափազանց ուրախ կլինելի, յիթե կարողանայի ասել, թե մենք այստեղ կունենանք մի-ցերկու գույք միլիոնրդ: Այսրենական ճշմարտություն ե, վոր պլանային ամուր ոեժիմը, չընդհատվող տընտեսության ոեժիմն ամրապինդ կհաստատվի միայն այն ժամանակ, յերբ ոեղերվի հողվածները մեզ մոտ պլանի մեջ, ուրիշ տեսք ունենան, քան ինչ այժմ ու-նեն: Հապա ինչո՞ւ նրանք այժմ չունեն այն տեսքը՝ վոր ցանկալի յե մեր արհեստով «ոսկերչվիստներին», ինչո՞ւ: Ընկերներ, այստեղ մեր շինարարության մի ուրիշ որենքն ե դրսերդվում: Մենք մեր տնտեսական աշխատանքը մեծ լարումով ենք տանում: Այս պլա-նում լարվածությունը, համեմատած անցյալ հնդա-մյակի լարվածության հետ, չի ընկնում, այլ աճում եր Պետպլանում վիճաբանությունների ժամանակ մի հը-ռետոր ձիշտ նշեց, թե ինչու յե այդ այդպիս, և ինչու մենք այդպիսի լարումից չենք խուսափել, նա մոտա-վորապես ալսպիս ասաց, տնտեսական սոցիալիստա-կան շինարարության այդ հսկայական աշխատանքը կարող ե պատկերացվել իբրև մի ահազին բեռ բարձր սարի վրա բարձրացնելու անհրաժեշտություն: Մենք

ինչպես յուրատեսակ սոցիալիզմի լաստաքաշներ՝ ծանր տրանսպորտը քաշում ենք այնտեղ, դեպի այն ափերը, վորտեղ մեղ մի այլ կյանք ե պատկերանում, այլ կեն-ցաղ, տնտեսական ուրիշ հարաբերություններ: (Ռյա-զանով. «Վորտեղ ալիքները տանում են միայն հոգով մեծին...»):

Յեթե մենք բեռի թեթևություն զգայինք, այդ ի՞նչ կնշօնակեր: Դու կնշանակեր, վոր մենք ձգափո-կերից պոկվել ենք: Այդ աշխատանքի թեթևությունը կնշանակեր նրա կործանումը, կնշանակեր, վոր ամեն ինչ ել բարեհաջող գրության չե:

Այժմ, ընկերներ, պետք ե ասեմ, վոր վոչ բյու-ջետակին ոեղերվներ, այլ ֆինանսական բնույթի ոե-ղերվներ վորոնելու գործում, ը. Ռյազանովի բախտը չըերեց: Նա, ըստ յերեսութիւն, չի կարդացել Բոդրեպովի գիրքը: Այս հաստատվում ե, նախ, այն հանգաման-քով, վոր նա ասաց, իբր այդ գրքի առաջաբանը իմն ե, այնինչ այդպիսի բան չկա: Վոր նա չի կարդացել իսկույն փաստացի կապացուցեմ, իսկ այնինչ այդ գրքի մեջ կարելի յե մի ամրող շարք ոեղերվակին հողվածներ գտնել: Այստեղ նշվում ե բյուջեյի այդ հինգ հարյուր միլիոնանոց ոեղերվը, բայց հենց նույն տեղում սպիտակի վրա սկսվ բերված ե նաև այսպիսի ամփոփում: Բանը 86 միլիարդանոց ֆինանսական պլանին ե վերաբերում: Այստեղ սիացյալ նետոն բյուջեյի բյուջետակին սիստեմի 44 միլիարդի կողքին տնտեսական կազմակերպությունների սիփական 19 միլիարդ միջոցները կան, այնտեղ կա 7 միլիարդի վարկային սիստեմ, սոցապի 6—7 միլիարդ և ուրիշ աղ-բուրներ՝ մոտ 7 միլիարդ: Տնտեսական կազմակերպու-

թիունների սեփական միջոցների այս ահագին թիվը վնաբեղից: Միայն ինքնարժեքի իշեցման և արտադրանքների գների միջև յեղած պառակտման մեջ այդ թիվը տալիս է 7 միլիարդից ավելի: Ընկ. Ռյազանովը ծիծաղում եր վորակական ցուցիչների մեր դրույքի վրա, իսկ դրանց նշանակությունը յերևում է հենց այս ավելացումից: Ինքնարժեքի 35 տոկ. նվազման և արդյունաբերական մեծաքանակի գների 24 տոկ. իշեցման վորակական ցուցիչը արդգինութանի մեջ 8 միլիարդ մեծությունով է յերևում: Իմ տեսակետով այդ հատվածի մեջ ահագին սեղերվ կա. յես խորապես համոզված եմ, վոր այդ հոգվածում—ինքնարժեքի 35 տոկ. իշեցում—մենք մեծ պաշարով ենք գնացել, վոր փաստորեն մենք կանցնենք այդ նորմալից: (Ռյազանով. «Դե, գուք պաշարի մեջ պահեք «ոճութեղի» խոսքը»): Հետո ը. Ռյազանովը հաշվի չի առնում, վոր վարկային սիստեմով մենք մոտ 700 միլիոն միացրած ոեղերվ ունենք: Ընկ. Ռյազանովը հաշվի չի առնում, վոր արդյունաբերության ֆինանսական պլանի մեջ մենք ելի 900 միլիոն ուռելի ունենք:

Երջապես, ընկերներ, յեթե սեղերված դիտենք վոչ միայն ֆինանսական պլանների սահմաններում, այլ ընդգրկելով մեր տնտեսական ամբողջ սիստեմը, ապա դուք չպետք ե մոռանաք, վոր նույն հնգամյա պլանով ծրագրվում ե, որինակ, այնպիսի վորոշ հողվածի փոփոխություն, ինչ հացի գյուղացիական արշանքային պաշարներն են, գյուղացիական պաշարները, վորոնք մենք ներկայում շատ համեստ թվով ենք հաշվի առնում, բայց վորոնք, ըստ հնգամյա պլանի առաջադրության, ըստ ոպտիմալ տարբերակի, աճում

են մինչև 1315 միլիոն ցենտներ: (Ռյազանով. «Յես այդ սեղերված մասին դեռ վոչինչ չգիտեմ»): Զգիւտեք, բայց մարզվում եք հոետորական արվեստի մեջ: Լավ չե, ը. Ռյազանով:

Ընկ. Ռյազանովը չգիտի, վոր ժողովրդական տընտեսության մյուս կարեորագույն հատածում, վառելանյութի սեղերված համար, ինչպես այդ հայտնի չե տնտեսական բոլոր աշխատավորներին, մենք լիակատար ռացիոնալիզացիա յենք ծրագրել, ալսինքն պաշարների նորմայի բավարարման մինչև 100 տոկ. բարձրացում: Ինչ վալյուտային սեղերված ել վերաբերում, ապա ինձ թույլ տվեք այս լայն ժողովում, թե պետ և այն կուսակցական ե, չխոսել: (Ձմիշտ «Ճիշտ ե»): Իսկ յես կարծում եմ, ընկ. Ռյազանով, վոր այդ հողվածը կկարողանար ձեր ախորժակներին ել բավարարել: (Ռյազանով. «Նա հենցում է լարինի յերեկվապրատումի վրա: Յես չդիտելի լիլ»): Յես հենց նոր եմ դիտել այդ պրատումները:

Ընկերներ, թույլ տվեք մյուս հոետորների շարքից հատուկ ուշադրությամբ կանգ առնեմ կուլտուրական ճակատի ընկեր-աշխատավորների վրա: Մասնավորաբար ը. Կրինիցիու գեղիցիկ ճառի տակ յես ամբողջությամբ ստորագրում եմ: Յես ը. Կրինիցիուն միայն կասելի, թե նա չպետք ե մոռանալ, վոր Միության Պետպլանն իր ծրագրումներում հենց լիակատար կոնտակտով ե աշխատել ԿԿ Ագիտալրոպի հետ, ուշադիր հաշվի առնելով միութենական հանրապետությունների և ուրիշ կազմակերպությունների համապատասխան նախագծումները: (Ռյազանով. «Ի՞նչ անշնորհակալություն»): Ինչ ը. Յակովիային ե վերա-

բերում, ինձ թվում ե, թե նա այստեղ խոսում եր չափազանց հանրապետական հատածից: Ինձ հայտնի յե, վոր նրան, իրոք, շատ մեծ դեգերումներ են վիճակիւ ՌՍՖԽՀ ժողկոմիորհում իր լենթադրություններն անցկացնելիս, և վոր ՌՍՖԽՀ Պետպլանը կուսածողումատի հետ այնքան սերտ ճակատով չեր ընթանում, ինչպես այդ ցանկալի կլիներ: Այդ, ընկերներ, չափազանց կարևոր հարց ե, թույլ տվեք այն քչին, ինչ հաղորդել եմ, իբրև լրացում ելի ինչ-ինչ բան ասել, վորպեսզի վոչ մի թյուրիմացություն չլինի այդ բանում:

Ընկերներ, պետք ե անկեղծորեն ընդունել, վոր մեր կուլտուրական ճակատը ցրված ճակատ ե: Ի մասնավորի Միության Պետպլանի աշխատանքն այստեղ ավելի, քան ուրիշ վորեւ բնագավառում, տուժում ե լուսավորական գերատեսչությունների չափազանց թույլ պատրաստվածությունից: Յես պետք ե շեշտեմ, վոր, թեպետ ը. Ակրիպնիկը շատ ճիշտ բաներ ասաց, բաց, ը. Ակրիպնիկ, մի տեսակ դուրս յեկագ, վոր Ուկրաինայի վոչ կուսածողկոմատը, վոչ ել պետպլանը մեզ կուլտուրական շինարարությանը վերաբերող վոչ մի նյութ չեն ուղարկել: (Ակրիպնիկ. «Խընդրեմ, կարգացեք, նրանք հրապարակված են»): Կարգացեք: Բայց դուք բոլորնվին չեք կազմել տյդ նյութերը, մեզ չեք ուղարկել, և մենք վոչ մի տվյալ չունենք: Մենք հարկադրված եյինք Ուկրաինայի և միքանի գերատեսչությունների փոխարեն նյութեր մշակել, պլաններ կազմել, ուստի, իհարկե, մեր այդ աշխատանքի մեջ շատ բացեր ու թերություններ կան: Յես պետք ե վճռականապես շեշտեմ, վոր բան-

վորական կադրեր նախապատրաստելու մեթոդին վերաբերող վեճերի մեջ մենք մի ճակատ, միենույն կարգվածքն եյինք պաշտպանում ը. Լունաչարսկու, ՌՍՖԽՀ կուսածողումատի և կոմիտամիության հետ: Մենք նախապատրաշցնում եյինք, վոր մեր բանվոր էկրիտասարդության միջից վորակավորված աշխատավորներ մշակելուն չի կարելի պարզացրած ձևով մոտենալ: Մենք պնդում եյինք, վոր Փարգործումատի ներկայումս չափազանց փոքր մասշտաբով դրած գործը պետք ե հղորապես արագվացվի: Մենք վոչ միտյն չենք սահմանափակվում թոշակային ֆոնդի շտկումով, այլ և առաջարկում ենք մեր հնգամյա պլանում նախագծել և իրականացնել բանվորական լուսավորության հատուկ գասակարգային մի ֆոնդ 1130 միլիոն ռուբլու, վորը թոշակային ֆոնդի լրացումը կլիներ, վորպեսզի բանվոր էկրիտասարդությունը 7-ամյակներն անցնելիս և բուհ-երում սովորելիս նվազագույն մազգածքը տա: Պետք ե լիկվիդացիալի լենթարկվի այն ակամա մազգածքը, վորի ստեղծողը նյութական գրությունն ե, վոր բանվոր էկրիտասարդությունը սովորելուց կտրում և անժամանակ հաստոցի մոտ ե հրում: Մենք Միության Պետպլանում պնդում եյինք, թե ինդուստրիալ բանվորների դործող անձնակազմից 500 հազար հոգուն վերավորակավորելով սահմանափակվելը քիչ ե, պետք ե $1\frac{1}{2}$ միլիոնը դնել նպատակ, և ը. Կույբիշել մեղ այդ բանում կողմնակից եր: Միայն նրա ոգնությամբ այդ բանն անցկացվեց և ԺՏԴԽ մեջ: Բայց և այնպես, ընկերներ, այստեղ մենք իրոք գեռշատ բանի մասին պետք ե մտածենք և մեր հնգամյակում շատ բան բարձրացնենք: Յես պետք ե ընկ-

Յակովլեալին ասեմ, վոր վոչ թե 10 միլիոն ռուբլու մասին և հարկ լինում խոսել այստեղ, յերբ ցանկանում ենք լուսավորական գծով աշխատանքների ընդհանուր պատկիրը տալ այլ պետք և նշել, վոր պլանի մեջ մեր ժողոված 86 միլիարդից 21 միլիարդը զատում ենք սոցիալ-կուլտուրական շինարարության համար, և դրանից մոտ 11 միլիարդը լուսավորական գծով ե գնում, իհարկե, այդ գումարը չի կարող այստեղ կուտակված ահագին կարիքներին բավարարել, և պետք ե ուղղակի ասել, թե այս հնդամյակում մենք մեր հիմնարկությունների ու կազմակերպությունների աշխատանքի միջոցով չենք կարողանա անցյալի բոլոր բացերը լցնել: Պարզ ե, վոր այստեղ պետք ե ծավալել հասարակական աշխատանքի ճակատը, և ի մասնավորի ը. Յակովլեան շատ ճիշտ ե ասում, թե հենց այստեղ ասպարեզ կա ամենաբազմազան կազմակերպություններ զարգացնելու, ակտիվի նոր ու նոր շերտեր բարձրացնելու և զորահավաքելու:

Ընկ. Սկրիպնիկը փորձեց, ինձ մատնացույց անելով, շեշտել իմ ինժեներական ցեխային կարգվածքը: Յես կարծում եմ, թե իմ հին բարեկամ ը. Սկրիպնիկը միքիչ սխալվում ե: Յես հենց նրա խոսքերն եմ բերում, վորոնց վրա նա հիմնում է իր քննադատականը:

Մեջբերումը ճիշտ ե: Նա ասում է, թե յես այսպիս եմ ասել.

«Մենք մեզ աշխատանքի հանրապետություն ենք անվանում, և մեր բոլոր խնդիրները, ըստ գործի ելության, հանգում են վորակավորված բանվորական ուժի ընդլայնված վերաբռնական

և գնալով ավելի խորացող սոցիալիստական վերակազմավորման խնդիրներին»:

Իսկ հետո այդ գործն այնպես ե մեկնում, վոր կարծես թե յես ամեն ինչ տանում կապում եմ արդյունաբերական ինդուստրիալ պլոտետարիատին: Ի՞նչպես թե, ը. Սկրիպնիկ: Զե՞ վոր յես այստեղ խոսում եմ վոչ միայն արդյունաբերական բանվորական ուժի մասին, խոսում եմ զարգացող սոցիալիստական վերակազմավորման կարիքների մասին, իսկ սոցիալիստական վերակազմավորման այդ կարիքները մեր առաջ նոր ու նոր խնդիրներ են դնում: Ինչպես գուք գիտեք, մենք գուղացիական ակտիվի վերելք ենք ծրագրում 5 միլիոն մարդով: Հասկանալի յե, վոր գըրա համար ահագին միջոցներ են պահանջվում: Մենք այդ միջոցները պետք ե գտնենք, և ինթե այժմ նրանք մտցրած չեն պլանի մեջ, պետք ե մտցվեն: Յես պըսդում եմ, վոր մեր ունեցած բոլոր ռեզերվներից մենք պետք ե ամեն անհրաժեշտը զատենք այդ գործին ըսպասարկելու համար: (Սկրիպնիկ. «Լավ»): Այնուհետև կարծես այնպես ե գուրս գալիս, վոր մենք, ը. Յակովլեաի կարծիքով, տարբական քայլ ել չենք արել: Մնանկ ե այն պնդումը, իբր թե այդ ուղղությամբ մկրատն աճում ե, իբր թե մենք ուշադրություն չենք դարձնում կադրերի պրոբլեմին: (Սկրիպնիկ. «Բայց տեմպերը տարաբաժանվեն են»): Բայց ի՞նչպես են տարաբաժանվում՝ տեսնենք: Ամենից առաջ, մենք չեմ վոր հարցն այսպես ենք դնում. մենք ասում ենք՝ 20 հազար ինժեներ, 20 հազար տեխնիկ, 11 հազար գուղացատեսեա—ահա մեր տրամադրության տակ յեղածը: Այս կադրերը պետք ե լրացվեն: Ի՞նչ կերպ:

Յես այդ մասին արդեն խոսել եմ: Հնգամյակի վերջում պետք է ունենանք 50 հազար ինժեներ: Այդ նպատակով բուհ-երի արտադրանքը պետք է այնպես բարձրացվի, վորպեռզի մեղ տա 34 հազար ինժեներ: Մենք արտադրանքի այդ բարձրացման տոկոսը հաշվել ենք 7-ից մինչև 12, մոտավորապես այդպես պետք է բարձրացնենք կոնտինգենտի ստացքը: Ունենք 20 հազար տեխնիկ. Ելի 44 ե հարկավոր: Կոպիտ կողմորոշող հաշվառք կա: Բայց մենք պարզ տեսնում ենք, վոր տեխնիկումներով ու բուհ-երով բանը գլուխ չի դա: Հարկ ե լինում, վոր մտածենք նոր տիպի վարպետներ ըստեղծելու մասին: Վոչ այն արքունական, զառամվարպետները, վորոնք կառչում են հնին, վորոնք մեքենամարտիկներ են մեր ֆաբրիկաներում ու գործարաններում, այլ նոր, վորոնք անցել են բանվորական իրիկնալին հատուկ տեխնիկումներով, բանվորական համալսարանների և աճած ֆաբրուտուսների ուժեղացրած ցանցի միջով:

Դրության լարվածությունը տեսնելով՝ ամենից առաջ մտածենք գործող կաղըերի դրության մասին: Յեվ այստեղ, ընկերներ, յես չեմ հոգնում շեշտելոց, վոր ամենաառաջին և անհետաձգելի պահանջն ե՝ վերջ տալ տեխնիկական պերսոնալի հոսունությանը: Յեթե ինժեները հիմնարկության և գործարանամասի իր պատասխանատու ղեկավարի գիրքում կմնա միջին հաշվով 5—6 ամիս, դրանից լավ բան չի դուրս գա: Մենք պետք ե վերջ տանք անձնակազմի ներկայումս նկատվող վատ ոգտագործմանը: Մենք պետք ե տեխնիկից ամենից առաջ տեխնիկա պահանջենք: Յեվ յեթե տեխնիկը կուսակցական ե, ապա հարկավոր ե,

վոր այդ պատասխանատու կուսակցական տեխնիկը՝ իր տնտեսական-տեխնիկական դեկի մոտ կանգնած՝ զգա, վոր կուսակցական պատասխանատու ֆունկցիա յի կրում: Սկզբիպնիկը կարգացել ե իմ յելությը կոմճեմարանում, ուստի և, հավանորեն, հիշում ե, թե յես ինչպես ելի գնահատում մեր տարրական դպրոցների տնտեսական գրությունը, թե ինչպես ասում եյի, թե այն կապիտալները, վոր մենք գնում ենք և աստիճանի զպրոցում, մեր միջոցների ամենաձեռնութու ներգրումներն են, թե նրանք մոտավորապես 200 տոկ. յեկամուտ են բերում:

Ինչ վերաբերում ե գյուղում կատարած աշխատանքին, ապա յես շեշտում եմ, վոր պետք ե ել աշվելի մեծ աշխատանք ծավալվի: Կարծում եմ, վոր գյուղատնտեսական ակտիվ չենք ստեղծի, յեթե նորից ու նորից չպնդենք, թե մեր գյուղական դպրոցները պետք ե գյուղատնտեսական դարձվին, յեթե նորից ու նորից չխորհենք վլադիմիր Ռլիչի այն ցուցմունքների մասին, վորոնք վերաբերում են գյուղական ուսուցչին, գյուղացիական դպրոցի ուսուցչին, այդ 400-հազարանոց բանակին, վորը գյուղում գյուղատնտեսի լավագույն ոգնականը կարող ե լինել:

Կուլտուրական սոցիալական շինարարության ցրված ձևական իրեն զգալ ե տալիս թե պլանային աշխատավորներին, թե տնտեսավարներին, թե արհմիությունների ներկայացուցիչներին այն հանգամանքով, վոր մենք շատ ժամանակ ենք վատնում անպետուղ բանավեճերի վրա: Այդ ցրված ճակատը հաճախ մեզ առուժող պաշտպանության դրության ե գնում, յերբ մենք պաշտպանում ենք համամիութենական մի-

ջոցներից հատկացումները: Կարծում եմ, վոր վերջ տալ պետք ե զրան՝ այսաեղ ելի ու ելի պետք ե պնդել:

Ընկերներ, թուլլ տվեք այժմ միքիչ կանգ առնեմ վիճաբանությունների ընդհանուր գնահատականի վրա: Յես շատ ընկերներից նկատողություններ եմ լսել վոր իշր ռայոնների աշխատավորների յելույթներն այստեղ կոնֆերանսի աշխատանքներին տեղական բնույթ տվին: Կարծում եմ ճիշտ չե ազդ:

Յես կարծում եմ, վոր մենք կարող ենք հավաստել, վոր այդ լուսավորությունների մեծամասնությունը նրանով եր սկսվում, վոր ընկերները, շեշտելով տնտեսական շինարարության հնգամյա պլանի ընդհանուր ծրագրի նշանակությունը, վորոշ, յեթե կարելի յե այսպես արտահայտվել, ամաչկոտությամբ իրենց տեղական կարիքների մասին ելին խոսում, իսկ խոսելով ընդհանրապես՝ տնտեսական հարցերը ռայոնական մասշաբով ընդգրկելը կարևոր գործ է: Յեթե այդպիսի ռայոնական մասշտաբով ընդգրկում չլիներ, վախենում եմ, թե վիճաբանություններն ավելի մանրանային: Մենք կլսելինք առանձին ֆաբրիկաների ու գործարանների մասին: Մենք անցանք դրա կողքից և անցանք ավելի բարձր հատպին, վորովհետև խոսում ելինք տնտեսական հիմնական իշխող բարձունք հանդիսացող տնտեսական ռայոնների կարևորագույն կարիքների մասին:

Ռայոնական միքանի անհարիբությունները, ինչպես միքանի հոեառըներ նշում ելին, նրանից ելին ծագում, վոր մեզանում շրջանացման աշխատանքները դեռ ավարտված չեն: Ռւրախանում եմ, վոր ներկայումըս մենք համակված ենք անտեսական շրջանացման

կարեղության գիտակցությամբ, այն գիտակցությամբ թե հենց այդ ճանապարհով կկարողանանք համել թե տնտեսական և թե պետական շինարարության մի ամբողջ շարք հարցերի լուծմանը, և վոր այդ իմասնավորի կողմի նաև բյուլուրատիզմի գեմ կովելուն:

Ապա թուլլ տվեք նշել, վոր յիթե այստեղ վորո՞նոր ազգաբարություններ լսվում ելին, ապա դրանք, առաջ ու առաջ, բավականին չափավոր ելին (մասնավորապես ուլլայինացիներն ուղղակի միտեսակ կըշտություն հայտաբերեցին): Նրանք, որինակ, իսկապես... (Կոսսիոր. «Ի՞նչ հայտաբերեցին»): Կըտություն: (Կոսսիոր. «Լեզուդ ի՞նչ զիս ե պատվում»): Նրանք իրենց համար ի՞նչ ելին խնդրում: Նրանք համեստորեն խնդրում ելին ելի մի նոր տրակտորի գործարան շինել և, մասնավորապես, նրանց շատ և հուզում Ռւրալի տանիքի յերկաթի պրորեմը: Նրանց գիտակցությունից այդ կպչուն գործունը հանելու համար յես կուզելի շեշտել, վոր մեր պլանի՝ շինարարական այնպիսի նյութերին վերաբերող ծրագրումների մեջ, վորոնք տանիք ծածկելու համար նշանակություն ունեն, ինչպես են՝ թերթաքարը, լոսաքարը, կղմինտը, ձյութած խավաքարտը և այլն, մենք նրանց այնպիսի արտադրանք ենք նշում, վորը 600 հազար տոնն տանիքի յերկաթին և համապատասխանում, այսինքն այդ արտադրանքի այնպիսի մասշտաբ ենք տալիս, վորը համապատասխանում և տանիքի յերկաթի ներկայիս ամբողջ արտադրանքին: Այնպիս վոր, ընկեր ուկրաինացիներ, վստահ յեղեք, մենք շինարարության այդ խնդրն աչքաթող չենք անում:

Հետո, ընկ. Պետքովսկին ճիշտ նկատեց, թե Ուկ-

ըալինալում ելեկտրաշինարարության գործն անբարեհաջող է:

Իրոք, Շտերռվկայի վեցամյա շինարարությունը, Չուզույնոյի շինարարության նախահաշիվների և ոպերացիաների այդ զարմանալի փոփոխությունները — այդ բոլոր մոմենտներն, իրոք վոր, անախորժ են: Բայց, ընկեր ուկրաինացիներ, յես պետք ե ասեմ. ուր ելիք դուք, այնուեղ տեղում կանգնողներդ, Շտերռվկայի շինարարության այս լոթ տարվա ընթացքում և ինչու դուք հնար գտաք «Եսիս”ը» կայանը ցեսենտի հեցքերի վրա կառուցելու:

Կարծում եմ, վոր նման անբարեհաջող դրությունը կշարունակվի մինչև այն ժամանակ, յերբ մենք ընկ. Կուբբիչնի հետ մեկտեղ կիարողանանք եներգետիկայի գործերի զեկավար հզոր կենտրոն ստեղծել վորը մեզ կողնի մեր բոլոր հանրապետություններում և տնտեսական ռայոններում ելեկտրաշինարարության պատշաճ պլանային ռեժիմ հաստատել: Իրավացի յե ընկ. Պետրովսկին, յերբ ասում ե, թե հարկավոր ե ելեկտրական եներգիայի գների նորմավորման վորոշություններ սահմանել: Իրոք, յեթե ելեկտրական եներգիան մեր վողջ շինարարության համար այդպիսի կարևորագույն միջոց ե, ապա տարիի վայրին կամայականությունն անթույլատրելի յե:

Իրեն ընդհանուր ամփոփում մեծ ուրախությամբ շեշտում եմ այն հանգամանքը, վոր այս կոնֆերանսի վիճարանությունների ժամանակ ելի ու ելի հաստատվեց, վոր եներգետիկ հայեցակիտը մեզ բոլորիս միացնում ե, վոր իմ հնարածը չեր, յերբ ասում եյի, թե հիմա յուրաքանչյուր տնտեսական ռայոն, կենտ-

րոն, հանրապետություն իր ելեկտրաշինարարության մասշտաբում տեսնում է իր տնտեսական վիճակի լուծումը:

Յես կանգ չեմ առնի մեր ռայոնների ցուցմունքների վրա, բայց ինչինչ բան ուզում եմ ասեմ վորպեսզի այստեղ անձիշտ պատկերացումից խուսափենք: Այ, ամենից առաջ Հեռավորարկելլյան յերկրից լեկած ընկերներին: Յես չգիտեմ, թե նրանք վորտեղից եյին առել թվերը, թե ինչու կարելի յեր նրանց կողմից այսպիսի բողոքներ լսել ինչ տեղի ունեցավ այս կոնֆերանսում: Այս մեր հնդամյա պլանի սառւյդ թվերը.

Խոշոր ներդրումներ ե ստանում ՀԱՅ (1240 միլիոն ռուբլուց ավելի), նույն թվում արդյունաբերության շինարարության համար 300 միլիոն ռուբլուց ավելի: Այդ ռայոնի մասնագիտացումը նրա ԽՍՀՄ անտեսական կենտրոնից հեռու գտնվելով ու Մեծ ովկիանոսի յերկրների եկոնոմիկայի հետ ունեցած կապերով ե վորոշվում և սուր արտահայտված արտահանական ընույթ ունի — անտառանյութեր, ձուկ, քարածուխ, նավթ և այլն, վորոնց զարգացումն առաջին հերթին թելագրվում ե այդ ծայրերկրի տնտեսության վկասաբերությունը վերացնելու անհրաժեշտությամբ...

Բացի այդ պետք ե նշել այստեղ տեքստիլ և շաքարի արդյունաբերություն հիմնելը:

ՀԱՅ-ի հնգամյակի յերկրորդ բնորոշ վիճն ալստեղ 800 հազար մարդ բնակեցնելին ե (մինչդեռ յերկիրն ունի 2 միլիոն բնակչություն):

կարծում եմ, վոր այս նախազծումները պարզ պատասխան են տալիս Հեռավոր Արևելքի ընկերներին, վոր նրանք բնավանուշաղիր թողնված չեն, մասնավանդ յեթե հիշենք, վոր ամբողջ Լենինգրադը հընդգամյակի ընթացքում արդյունաբերության համար ստանում ե միայն 1 միլիարդ ռուբլի:

Յես, ընկերներ, ուզում եմ ելի մի յերկու խոսք ասել ԿՍՄ-ի աշխատավորներին:

Ահա մի քաղվածք մեր հնգամյա պլանի համապատասխան ուսունական նախազծումից.

ԿՍՄ գտնվում ե գյուղատնտեսական «սընանկացած» ուայոնից ազրարշինդուստրիալ տիպին անցնելու ուղեգարձին: Անհրաժեշտ ե կատեգորիկ շեշտել, վոր մարդի տնտեսության մեջ վճռական բեկում կլինի միմիայն գյուղացիական տնտեսության կոլեկտիվացման և լախորեն տըրակտորալին կայաններ ծավալելու հիման վրա...

ԿՍՄ-ի «սնանկացման» լիկվիդացիակի միուս հունը կլինի թե նրա բրածո հարստությունների (մանավանդ Լիպեցկի յերկաթահանքի) ոգտագործման վրա հիմնված արտադրության միջոցների արդյունաբերության, և թե արդյունաբերության այլ ճյուղերի զարգացումը, վորոնք ամրապնդված են յերկում կապված են ԿՍՄ-ի արդյունաբերական հումքի վերածակման հետ: Վարելիս, իսկ վորոշում չկմ:

Կրթիթանովսկի, Կա Պետպլանի վորոշակի վորոշումը, բայց յեթե դուք մերժեք այն, յես չեմ մեղած վոր...

Վերջապես, յերրորդ հունը ԿՍՄ-ում բերությունը մումքով արդյունաբերություն հիմնելն է քաղաքական բանվորական ուժի առկա կադրերն ոգտագործելու նպատակներով (տեքստիլ, մեքենաշինություն և այլն):

Մարզում բոլոր ներդրումները կազմում են մոտ 1,5 միլիարդ ռուբլի, նույն թվում արդյունաբերության համար 450 միլիոն ռուբլի: Կոսիոր. Մի խոսքով՝ ամենքին պարզեատրեցիր: Կրթիթանովսկի. Դե, զիտեք, հարկ չկա, վոր Կաղանի վորբի տեսք ընդունեք:

Վարելիս. Իհարկե վորբ ենք: Կրթիթանովսկի ել առանձին նկատողությունների վրա կանգ չեմ առնի: Թույլ տվեք վերջացնեմ:

Ընկերներ, ԽՆ համագումարում յես դիմեցի համագումարի աշխատավորներին և կոչ արի՝ «Կտասպլան»: Դրանով ինչ ելի ուզում ասել: Ուզում ելի կրանով շեշտել վոր մեր պլանային աշխատանքի առանձնահատկությունն այն ե, վոր մեր պլանը կարող ե միայն հսկայական կոլեկտիվի աշխատանքի հիման վրա աճել: Ամբողջ յերկիրը պիտի արձագանքի այս պլանին: Ահա ինչն ե վորոշում մեր պլանի հաջողությունը:

Յերբ յես ասում ելի, թե մեր կուսակցության կորության կողքին, թե այդ կուսակցության ու խորհրդացին վողջապահատի կապաֆոկերի կողքին մենք պետք ե նկատի ունենանք խորհրդային վողջ հասարակականության վերելքը: Իհարկե, յես ամենից առաջ նկատի ունեյի ցնցումը, ամենից առաջ պրոլետարիա-

ատի, նրա առաջավոր զորացուների ցնցումը։ Այս,
ինչ այնպես հզորապես ծավալվում է մեր աշքի առաջ
սոցիալիստական մրցման, մեր զործարանների այդ
անվանակոչի մեջ, և ինչը մեր սոցիալիստական աշ-
խատանքին նոր ձեեր կտա, պետք եխորքով ու լայն-
քով աճի։ Յես հույս ունեմ, վոր այդ այդպես կլինի,
վոր մեր պյանը բավականաչափ ամուր ե, բավակա-
նաչափ մտածված, կոլեկտիվ ու ստուգված, կկարողա-
նա միլիոնավոր աշխատավորներ զորահավաքել։ Ըն-
կերներ, մեր այդ պլանի մեջ ջանացել ենք իրակա-
նացնել աշխատավորների մեծ բարեկամ, մեր ընդհա-
նուր ուսուցիչ Վլաղիմիր Իլյիչի մտքերն ու մտորում-
նելը։


Ընկերներ, նա այժմ հանդում է փայտեղեն հա-
մեստ դամբարանում։ Մենք շարունակ այն ենք մտա-
ծում, վոր նրան անխորտակելի հուշարձան կանգնեց-
նենք։ Յես կարծում եմ, վոր այս պլանի իրականա-
ցումով մենք լավագույն հուշարձանը կկառուցենք մեր
կուսակցության հիմքությունը (Պատմական թյուններ)։



8 Ա Ն Կ

Եջ

Ա. Ի. Ռիկովի զեկուցումը	
I. Հնգամյա պլանի նշանակությունը	3
II. Հնգամյակի հիմնական տարրերը	8
III. Ընթացիկ տարին	27
IV. Կառավարման կազմակերպչական փո- փոխությունները	37
Բ. Արժիժանովի զեկուցումը	42
Վ. Վ. Կույբիշևի զեկուցումը	104
Դ. Մ. Կրժիժանովիկու յեղափակման խոսքը . .	155



«Ազգային գրադարան



NL0182326

